

Շ. Լ. ԿՈՐԱՄԱՆՆՈՒԿՅԱՆ

ԱՐԱԲԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԼԻԳԱՅԻ ԴԵՐԸ
ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ
ՀԱԿԱԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ
ՊԱՅՔԱՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ

52
9-29


Պ. Լ. ԿԱՐԱՄԱՆՈՒԿՅԱՆ

Պ. Լ. ԿԱՐԱՄԱՆՈՒԿՅԱՆ

**РОЛЬ ЛИГИ
АРАБСКИХ ГОСУДАРСТВ
В АНТИИМПЕРИАЛИСТИЧЕСКОЙ
БОРЬБЕ АРАБСКИХ СТРАН**

**ԱՐԱՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԼԻԳԱՅԻ ԴԵՐԸ ԱՐԱՐԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ
ՀԱԿԱՒՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ
ՊԱՅՔԱՐՈՒՄ**

2629



Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
պատմական գիտությունների զբաղուր
Ե. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Պիրեր հրատարակչության և՛ Երզնիսի գրախոսակնե՝
պատմական գիտությունների րկհամուհուր
Ե. Հ. ՆԱԶԱՐԳՅԱՆԸ և Պ. Հ. ՍՈՐԱԶՏՅԱՆԸ

Կարամանուկյան Ե. Լ.

Կ 291 Արարական պետությունների լիզայի գերբ արարա-
կան երկրների հակաիմպերիալիստական պայքարում
|| Պատ. խմբ. Ն. Հ. Հովհաննիսյանե]; ՀՍՍՀ ԳԱ Արև-
վելագիտ. ին-տ.—Երբ.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1988.—204 էջ.

Աշխատությունում վերլուծվում են Արարական պետությունների լիզայի ծրագրային փաստագրերը, ըտարանվում են նրա ստեղծման պատմությունը ու գործունեությունը՝ հանաս ուղղուհի երկրների ազգային անկախության ամրապնդման, արարական աշխարհի հակապաշտպան շարժումների աշխուժացման, Պաղեստինի հարցի արգարացի լուծման, ինչպես նաև խմբերկրխտական ուղղմարգարական խմբավերաններում արարական երկրներն ընդգրկելու գիւ.

Աշխատությունը նախանսմված է արևելագիտների, միջազգայնագիտների, ինչպես նաև Արարական արևելյի նորագույն պատմությանը հետաքրքրվող րկերպողների համար.

0506000000

32—SS

ԳՄԻ 66. 2 (07)

703 (02) — 88

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության, 1988

ԱՌՆԱԶԱԲԱՆ

Արարական անկախ երկրները միավորող ղեզիտնուլ միջպետական կազմակերպությունը՝ Արարական պետությունների լիզան, իր գործունեության ամբիլի քան քառասուն տարիների ընթացքում կարևոր դեր է կատարել Արարական արևելյի միջպետական հարաբերություններում: ՍՄԿԿ XXVII համագումարում ընդունված կուսակցության ծրագրի նոր խմբազրույթությունում սսվում է, որ «... ազգային-ազատագրական հեղափոխությունների և շարժումների պատմական նվաճումը եղավ իմպերիալիզմի գաղութային սիստեմի փլուզումը, նրա ավերակների վրա տասնյակ ինքնուրույն պետությունների ստացումը»: Այդ երկրներն այսօր այնքան կարևոր դեր են կատարում միջազգային կյանքում, որ սոցիալիստական և կապիտալիստական համակարգերի կողքին կազմում են միջազգային հարաբերությունների երրորդ ենթահամակարգը: Համախմբվելով չմիանալու շարժման մեջ, նրանք կարևոր ներդրում ունեն «ճշդամամային իրավիճակների վերացման և կանխման գործում»: Վարշավայի պայմանագրի անդամ պետությունների 1983 թ. հունվարին ընդունված քաղաքական հայտարարությունում նշվում է, որ տայա ստուսմով կոչված են գրական գեր կատարելու նաև այնպիսի միջպետական ղեզիտնուլ կազմակերպություններ, ինչպիսիք են Աֆրիկյան միասնականության կազմակերպությունը, Արարական երկրների լիզան»: Արարական լիզայի հիմնադրման, ծրագրային փաստաթղթերի, գործունեության ուսումնասիրումը թույլ կտա խորամուխ լինելու արարական ազգային-ազատագրական շարժման մի շարք կարևոր խմբերկրի մեջ, ճիշտ գնահատել այդ կազմակերպության նպատակներն ու գործունեության մեխանիզմը, վեր հանել արարական ժողովուրդների հակաիմպերիալիստական պայքարում արարական համերաշխու-

Ֆյան գործոնի դերը: Բացի այդ, այն մեզ կօգնի նաև ընդարձակելու և խորացնելու մեր պատկերացումները արաբական միջպատկան հարաբերությունների զտրտի մասին:

Աշխատությունում հիմնականում քննարկվում է Արաբական լիգայի 1940—1950-ական թվականների գործունեությունը, երբ արաբական երկրների հակաիմպերիալիստական պայքարում և Արաբական արևելքի միջազգային կյանքում այդ կազմակերպության կատարած դերն ունեն թերևս առավել կարևոր նշանակություն:

Պետք է նշել, որ Արաբական պետությունների լիգային նվիրված սովետական հեղինակները հետազոտությունները փաստաբան ասահմանափակվում են այդ կազմակերպության առաջին երեք տարիների գործունեության ուսումնասիրությանը: Այդ աշխատությունները գրվել են 30—40 տարի առաջ, և նրանց հեղինակները հասկանալի պատճառներով իրենց ձեռքի տակ չեն ունեցել բավարար չափով սկզբնաղբյուրներ, պաշտոնական փաստաթղթեր, ինչը, բնականաբար, իր կնիքն է դրել այդ աշխատությունների վրա: Թե՛ այդ, թե՛ Արաբական արևելքի նորագույն պատմությանը նվիրված այլ աշխատություններում Արաբական լիգայի հիմնադրման և առաջին տասնամյակի գործունեության հետ կապված մի շարք հարցեր բավականաչափ ուսումնասիրված չեն, կամ նույնիսկ զրույրոյին լուսարանված չեն: Օրինակ, սովետական պատմագրությունն առ այսօր չի անդադարվել 1945—1948 թթ. Փաղոնտինի հարցում Արաբական լիգայի դիրքորոշմանը, 1940-ական թվականների երկրորդ կեսին Միթավոլը արևելքում ուղղմաբարաբանական խմբադրուստիկ փոփոխումները և այլն: Ենթադրվում է կարող են Արաբական լիգայի դերի զեանհատում արաբական ժողովուրդների մղած հակաիմպերիալիստական պայքարում:

Աշխատությունը շարադրելիս հիմք են ծառայել Արաբական լիգայի ծրագրային փաստաթղթերը, այդ կազմակերպության նորհրդի և Քաղաքական կոմիտեի որոշումները, որոնք հրապարակված են ինչպես փաստաթղթերի ժողովածուներում, այնպես էլ Արաբական լիգային նվիրված պատմա-ծին աշխատությունների հավելվածներում: Արաբական լիգա-

յին վերաբերող նյութերի հարստությանը առանձնապես աչքի է ընկնում Մ. Խալիլի «Արաբական պետությունները և Արաբական լիգան» փաստաթղթերի ժողովածուի երկրորդ հատորը, որում հրապարակված են լիգայի ծրագրային մի շարք փաստաթղթեր և որոշումներ: Արաբական լիգայի հիմնադրման հետ կապված կարևոր նյութեր են հրապարակված Ա. Գումասի «Արաբական պետությունների լիգայի հիմնադրումը» աշխատության հավելվածում: Օգտագործվել են նաև Ք. Ղալիի, Մ. Ղանինի, Զ. Հուրեյի, Ա. Խանիի, Մ. Լայսիի և այլք աշխատություններում հրապարակված փաստաթղթերը լիգայի վերաբերյալ:

Աշխատության համար շատ արժեքավոր են եղել ՍՍՀՄ Հեղուներդյան հեղափոխության կենտրոնական պետական արխիվում պահվող նյութերը, որոնք թույլ են տալիս անդրադառնալ ցարդ թիշ լուսաբանված մի շարք իրադարձությունների:

Արաբական լիգայի մասին ղգայի նյութ կա նաև արաբական, գլխավորապես եգիպտական մամուլում: Աշխատությունում օգտագործվել են «Ալ Ահրամ», «Le Journal d'Egypte» և «Ար» օրաթերթերում ղեռնղված լիգային աննվող նյութերը: Արևմտյան արևելագիտական պարբերականներից շատերը նույնպես ղգայի ուշադրություն են դարձրել Արաբական լիգային, սույգորել այդ կազմակերպության տարբեր մարմինների ընդունած որոշումների ամբողջական տեքստերը Այս առումով առանձնապես հիշատակելի են Ֆրանսիական «Cahiers de l'Orient contemporain», և ամերիկյան «Middle Eastern Affairs» ու «Middle East Journal» պարբերականները:

Ինչպես արդեն նշվեց, Սովետական Միությունում լույս են տեսել Արաբական լիգային վերաբերող մի քանի աշխատություններ: Ժամանակագրական առումով դրանցից առաջինը Վ. Բ. Լուցիկ «Արաբական պետությունների լիգա» գրքույին է, որը լույս է տեսել 1946 թ.Պ. Չնայած իր փոքր ծավալին և շուրջիվող հարցերի սակավությանը, նրանում կան արժեքավոր մի քանի մտքեր լիգայի հիմնադրման և առաջին քաղկերի վերաբերյալ: Արաբություններ պատմա-ծին նաև, որ այդ գրքույկում կան նաև առանձին անճշտու-

Յլումներ, որոնք հովանաբար կապված են այն բանի հետ որ զբոսվելը գրված է զեզրերի անմիջական տպավորության և որոշ փաստեր վերատուգելու հնարավորություն չի եղել:

1954 թ. Մոսկվայում պաշտպանվել է Յու. Ն. Եչերբակովի Բեկնաժուռական դիսերտացիան «Արաբական պետությունների լիգա (1945—1948)» թեմայով¹⁰, որի ավտոտեքստերաները ունեցել մեր արձանագրության տակ: Ըստ ավտոտեքստերի, հեղինակն անդրադարձել է իր ուսումնասիրած շքրչեսուսի կիցայի բաղաբական գործունեության բոլոր հիմնական կողմերին: Սակայն աշխատությունում կան փաստական որոշ անճշտություններ և վիճելի որոշ պնդումներ կիցայի կատարած զեբի վերաբերյալ: Վ. Բ. Լուցիուս և Յու. Ն. Եչերբակովի աշխատություններում քիչ են այդչուրները, ինչ բացատրվում է այդ ժամանակ դիտական շրջանառության մեջ գտնվող Նյութլերի սակավությամբ:

1966 թ. Մոսկվայում պաշտպանվել է ևս մեկ դիսերտացիա՝ Եվգլյովաժ Արաբական լիգայի իրավական ստատուսին: Հեղինակը հիմնականում ծանրացել է իրավական այլևայլ խնդիրների վրա: Աշխատությունում պատմական որոշ թեքում ունի միայն երկրորդ գլուխը, որում արծարծվում է կիցայի հիմնադրման պատմությունը¹¹, Արաբական լիգայի հիմնադրման և գործունեության հետ կապված մի շարք հարցեր բնագրված են է. Քումայի «Աղգային-ազատագրական շարժումը և արաբական միասնականության խնդիրը» աշխատությունում¹²:

Սույն մենագրության հեղինակն օգտվել է Արաբական արևելյան ճորագույն պատմությանը վերաբերող սովետական արարազեանների մի շարք աշխատություններից: Արաբական լիգան իր գործունեության առաջին տասնամյակի ընթացքում ճանգիտ է կկել արաբական երկրներում ծավալված ազգային-ազատագրական, ճակատագրախառնական տարբեր շարժումների պաշտպանությամբ: Այս կամ այն կոնկրետ հարցում Արաբական լիգայի զիրբորոշման ճիշտ զնահատումը հնարավոր է այդ հարցի մասին խորը պատկերացում կաշմելուց հետո միայն: Այս առումով սովետական գիտնականների՝ արաբական երկրների ճորագույն պատմության հան-

դուցային հարցերին վերաբերող ուսումնասիրությունները զգալիորեն օգնել են հեղինակին:

Աղգային անկախության նվաճման և ամրապնդման համար նշխարաբար, Միրխայի և Նանիի մղած պայքարում արաբական միջպետական ռեզոնանս կազմակերպության զիրբորոշման հարցն ուսումնասիրելիս հեղինակի համար անչափ օգտակար են եղել Ի. Պ. Բելյանի և Ն. Մ. Պրիմակովի, Ն. Ն. Կուրոզեկաշվիլու, Ն. Հ. Հովհաննիսյանի ու Հ. Ս. Սարգսյանի, Լ. Ի. Մնգվեզկոյի, է. Փ. Պիր-Բուզաղովի և Բ. Գ. Սեյրանյանի մենագրությունները, ինչպես նաև «Նանիի ճորագույն պատմությունն և կոնկրետիվ աշխատությունը»¹³:

Մերձավոր արևելքում սազմաբաղաբական ազրեկտիվ խմբավորումներ ստեղծելու իմպերիալիստական երկրների փորձերի նկատմամբ Արաբական լիգայի վերաբրմունքն ուսումնասիրելիս օգտագործվել են «Աղգային քաղաքականությունը Մերձավոր և Միջին արևելքում» կոնկրետիվ աշխատությունը և Ն. Հ. Հովհաննիսյանի, Ս. Է. Տուչանովայի, Բ. Մ. Փոցյովերիայի, Ա. Ֆ. Տեղզեկոյի ուսումնասիրությունները¹⁴: Հյուսիսային Աֆրիկայի արաբական երկրների անկախության համար մղած պայքարին Արաբական լիգայի ցույց տված օժանդակության հարցին անդրազանալիս հեղինակն օգտվել է Ռ. Գ. Լանդայի, Ն. Ս. Լուցիայի, Լ. Պ. Մանասերյանի և այլոց մենագրություններից¹⁵:

Պաղեստինյան հարցում Արաբական լիգայի զիրբորոշման խնդիրը յուսարանելիս օգտագործվել են Ն. Գիմարիկի, Լ. Ն. Կուսովի, Պ. Ս. Նիկիտիայի, Ն. Ս. Պրիմակովի և այլ հետազոտողների աշխատությունները¹⁶:

Արաբական պետությունների լիգայի մասին բազմաթիվ ուսումնասիրություններ են գրվել արաբական և արևմտյան երկրներում: Արաբ հեղինակների գործերից առավել շահեկանները Ա. Գումայի, Բ. Ալիի և Ա. Տարբիի մենագրություններն են, որոնք աչրի են ընկնում փաստական նյութի առատությամբ¹⁷: Սուսնձնապես հիշատակելի է Ա. Գումայի աշխատությունը: Այն գրված է անգլիական այլևայլ արիտներում պահվող հարուստ նյութի հիման վրա, որն առաջին անգամ է գրվում դիտական շրջանառության մեջ:

Արևմտյան Հնդինականների լույս բնծայած աշխատությունները մեծ մասամբ հողվածներ են, որոնք Հիմնականում ունեն նկարագրական և մակերեսային բնույթ: Դրանցից առանձնանում է Ռ. Մակդոնալդի մենագրությունը¹⁶, որում բազմակողմանիորեն քննարկված են Արարական լիզալի գործունեության այլևայլ կողմերը: Ռ. Մակդոնալդի աշխատությունում, սակայն, հաճախ գերազանցատվում է միջարարական տարբեր հակասությունների դերը, շին բացահայտվում լիզալում առանձին ճգնաժամային երևույթների առաջացման բուն պատճառները: Ընդհանրապես արար և արևմտաեվրոպական Հնդինականների աշխատություններից օգտվելիս հեղինակը աշխատել է դրանք հնարավորին շափ ենթարկել պատմաբնական վերլուծության:

Աշխատությունում օգտագործվել են նաև սովետական, արար և արևմտյան Հնդինականների մի շարք այլ գործեր, որոնք վերաբերում են արարական երկրների նորագույն պատմությանը:

Գ. Լ. Ի. Խ Ա. Ռ. Ա. Զ. Ի. Ն.

ԱՐԱՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԻԳԱՅԻ
ՀԻՄՆԱԳՐՈՒՄԸ
ԵՎ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՎԹԵՐԸ

Արարական աշխարհի միավորումը օրակարգի հրատապ հարց էր զեռ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երբ տարբեր կուսակցություններ, խմբավորումներ ու գործիչներ առաջ էին քաշում արարական երկրամասերի պետական համախմբման այլևայլ ծրագրեր: Ոմանք պրոպագանդում էին ամբողջ արարական Ասիայի, ուրիշները՝ Իրաքի, Սիրիայի և Հիլադի, երրորդները՝ պատմական Սիրիայի տարբեր մարզերի միավորման նախագծեր: Ընդ որում միավորում ասելով հասկացվում էր արարական երկրների համախմբումը մեկ պետության մեջ:

Արարական միասնականության հարցն արար գործիչներին շարունակում էր հուլիլ նաև 20—30-ական թվականներին: Այդ ժամանակ նրանցից շատերը արարական տարբեր երկրների տարանջատ գոյության փաստը դիտում էին որպես բացասական երևույթ, որպես արևմտյան երկրների գործարքների հետևանք: 1930-ական թվականների երկրորդ կեսին Պաղատիևում իրադրության հետագա բարդացումը, այնպիսի տեղի ունեցող իրադարձությունների լայն արձագանքն արարական մյուս երկրներում հետագա ստվյուն հաղորդեցին միջարարական համագործակցություն հաստատելու հարցին:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին արարական երկրների մի միավորում ունենալու արարական ժողովուրդների ձգտումը սկսեց ավելի վառ արտահայտվել:

1945 թ. ստեղծված Արարական պետությունների լիգան շատ բանով հենց այդ ձևովան դրսևորումն էր: Այս կապակցությամբ այդ պետք է համաձայնել Վ. Բ. Լուցին այն մտքի հետ, որ «... Լիգան ծագեց արարական միությունների շարժման շնորհիվ, որի ծագումը կախված էր օտարերկրյա այս կամ այն տերությունների ցանկություններից և պլաններից»¹: Արարական միության գաղափարի իրականացումը, սակայն, պայմանավորված էր նաև մի շարք այլ գործոններով, որոնցից մասնավորապես կարևոր էին ինչպես արարական առանձին, այնպես էլ երևմտյան Եվրոպայի վերածնունդն այդ հարցի նկատմամբ: Նշանակություն ունեին նաև արարական երկրներում ազգային-ազատագրական շարժման ու Մերձավոր արևելյան ազգամասերի գործողությունների ընթացքին առնչվող հանգամանքները:

Արաք առաջին քաղաքական գործիչը, որ միություն էր ծրագրեր իրականացնելու համար փորձեց օգտվել երկրորդ համաշխարհային պատերազմի ազգային իրադրություններից, Անդրհորդանանի էմիր Աբդուլլահն էր: Ծանկանալով Եգիպտ քաղկ Ֆրանսիայի պարտությունից, նա 1940 թ. հունիսին առաջ քաշեց Միջին և Անդրհորդանանի մեկ պետության մեջ միավորելու գաղափարը: Այս հարցի մասին նա ուղարգրեց ուղարգրեց անգլիական կառավարությանը, որոնցում ի միջի այլոց նշվում էր, որ իր գլխավորությամբ ստեղծվելիք նորաստեղծ պետությունը կլինի Անգլիայի հուսակալ քաղաքների: Մերձավորարևելյան և մյուս ուղղակիան քաղաքներում ծայրահեղ լարված վիճակում գտնվող Անգլիան, իհարկե, տվյալ պահին ի վիճակի չէր որևէ ձևով աջակցել էմիրի նախագծին, ինչը և պայմանավորեց պատերազմի ընթացքում կատարված արարական միության «հաշման» առաջին առաջին ձևախղումը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբին Արարական արևելյան իրենց քաղաքականությունն աշխուժացրեցին Առանցքի երկրները: 1940 թ. հոկտեմբերի 23-ին նրանք Եշարունակելով արարական ժողովուրդներին խաբելու իրենց քաղաքականությունը... հանդես եկան անգլիական տիրապետության դեմ ուղղված արարական ազատագրական շարժումը պաշտպանելու և արարական երկրների անկախու-

թյունը նանաշելու իրենց պատրաստակամության վերաբերյալ հասուկ հայտարարությամբ²: Առանց այդ էլ արարական միջավայրում բավականին ուժեղ հակասանցքական տրամադրությունները թուլացնելու, Արևելյան Միջերկրական շրջանում ու Հյուսիսային Աֆրիկայում իր դիրքերը զոնն մասնակիորեն բարելավելու, 1941 թ. դարձանք Իրաքում իր ազգային միջամտության տհաճ ապավորությունը մեղմելու³: Ինչպես նաև Առանցքի երկրների վերտիրալ հայտարարության ներդրությունը թուլացնելու նպատակով անգլիական կառավարությունը ստիպված էր որոշ փոփոխություն մտցնել իր արարական քաղաքականությունում: Դրա արտահայտությունն էր արարական միության գաղափարի պաշտպանությունը հանդես գալու վերաբերյալ անգլիական կարիկետի 1941 թ. մայիսի վերջի որոշումը: Այն ընդունելիս Լեոնդոնը այլընտրանք չունեի, քանի որ որևէ այլ ձևով նա չէր կարող Արարական արևելյան հարցը թուլացնելու ընդարձակելու իր ազդեցության գոտին, այլև որոշակիորեն բարելավել ու հրավորել զարմեկ իր արարական քաղաքականությունը: Անգլիական այս նոր մտտեցումը, իհարկե, կարևոր էր արարական երկրների մի միավորում ստեղծելու գործում: Սակայն, ինչպես նշում է Ա. Տարբերը, սխալ կլինեի Անգլիային մասնանշել որպես արարական ազգային միության նախաձեռնող⁴, Այս առումով դիպուկ է նկատել Վ. Բ. Լուցին. «Հասկանալով, որ (արարական երկրների միավորման ուղղված—Մ. Վ.) շարժման դեմ բացահայտ պայքարը լուկ իրականացնելու դիրքերն Արարական արևելյան, Անգլիան որոշեց աջակցել այդ շարժմանը, որպեսզի այն իր վերահսկողության ներքո պահվի...»⁵:

1941 թ. մայիսին Լոնդոնի արարական քաղաքականության հետ առնչվող հարցերը քննարկվեցին անգլիական դիվանագր շրջաններում: Արաքին գործերի մինիստր Ա. Բոնեյրի ուղղված մայիսի 19 թվակիր նամակում վարչապետ Ու. Չուրչին առաջարկում էր Իրն Ստուդի գլխավորությամբ ստեղծել «Արարական խալիֆայություն», որը կընդգրկեր Սաուդյան

յան Արաբիան, Իրաքը, Անգլո-նորդանանը և Պաղեստինը՝ «ժալիֆայութիւնում» հաստատուելու էր հրեական «Եփրեյեա-վոր մի անկախ միավոր», որն իրավունք էր ունենալու նաև հրեաների ներգաղթ կազմակերպելը: Յորին Օֆիսի մասնա-դեմոնստր, սակայն, Չեքլիլի պլանը սեռ չէին համարում: Նրանց պատրաստած «Անգլիայի արաբական քաղաքականու-թյունը» փաստաթղթում, որը մայիսի 27-ին Ա. Իգնեւը ներ-կայացրեց կառավարութիւնը, խոսովում էր ոչ թէ «Արաբա-կան իալիֆայութիւն» այլ՝ «Ֆեդերացիայի» մասին: Նկատի ունենալով «չաշիտյանների և ստղծականների հակամարտու-թյունը, նախատեսվող «ֆեդերացիայում» այդ տոճմերից մեկի կամ մյուսի առաջնորդութեան հարցը շրջանցվում էր: Միաժամանակ կարծիք էր հայտնվում, որ «Ֆեդերացիայի» մէջոցով «Նաղաւտը կլինի լուսնի Պաղեստինի հարցը»¹⁰: Հարկ է նշել, որ այս փաստաթղթի հիմնական դրույթները հաշվի առնվելցին կառավարութեան կողմից: Դա պարզորոշ էրևում է հատկապէս 1941 թ. մայիսի 29-ի Ա. Իգնեւի հայտարար-ութիւնից, որում ասված էր. «... Արաբ շատ մտածողներ արաբական ժողովուրդների համար ցանկանում են ավելի բարձր աստիճանի մի միութիւն, բան այն, որից նրանք այժմ օգուտում են: Միութեան ուղղված իրենց ներքերում նրանք հույս ունեն ստանալ մեր քաջկողմնաւոր Մեր բարեկամների այս կուր պետք չէ անպատասխան մնա: Ինձ քնական և ար-դարացի է քիվում, որ արաբական երկրների միջև մշակութա-կան, տնտեսական և քաղաքական կապերը ամրապնդվեն: Նորին Մեծօրութեան կառավարութիւնը համաձայն կլինի ցան-կացած նախագծի, որը համընդհանուր հովանութեան կար-ժանանալ»¹¹:

Ա. Իգնեւի հայտարարութեան ընդհանուր ամամբ տար-տամ բնույթը պայմանավորված էր ոչ միայն դիտակցումովն այն իրողութեան, որ ցանկացած կոնկրետ նախագիծ իր «անգլիական» ծագման պատճառով դժգոյս թէ հաջողութուն ունենալու: Կարևոր էր նաև այն, որ 1941 թ. կեսին Մերձավոր արևելքի տակալին շրտուրդացած քաղաքական իրավիճա-կում, հրք դեռ անորոշ էր Սիրիայի և Լիբանանի քաղաքական ասպարաչի հարցը, այնքան էլ կայուն չէին Անգլիայի դիրքերը: Եղիպտոսում, պարզված էր Սաուդյան Արաբիայի դիրքորո-

շումը արաբական միութեան նկատմամբ, որն էլ կոնկրետ նա-խագիծ սուաքաշումը վաղաժամ կլինէր:

Լոնդոնի քայլն Արաբական արևելքում ընդհանուր առ-մամբ անդրադարձներ չունեցավ: Միայն Անգլո-նորդանանի էմիր Արդալլահն արձագանցեց դրան: Նրա կառավարութիւնը 1941 թ. հուլիսի 1-ին որոշեց պատմական Սիրիայի բոլոր մասերի՝ Պաղեստինի, Սիրիայի, Լիբանանի և Անգլո-նորդանանի միավորման հարցով պաշտոնապէս դիմել անգլիական կա-ռավարութեանը¹²: Իր ծրագրի իրականացումը գործնականու-թեւ էլ ավելի դժուարացնելու նպատակով Արդալլահնը մինչ այդ նույնիսկ առաջարկել էր, որ անգլո-նորդանանյան Արա-բական Լեգեոնը Անգլիայի և Ազատ Յրանախոյն զորամասերի հետ միասին մասնակցի 1941 թ. ամռանը Սիրիայում վերջա-կանների դեմ մղվող գործողութիւններին: Հաշվի առնելով Ազատ Յրանախոյն, Սաուդյան Արաբիայի և սիրիական որոշ ազդարական գործիչները ընդդադրութիւնը Արդալլահնի ծրագրին, Անգլիան շղաշարկանց այն: Հակառակ դրան, Արդալլահնը շղաղարեցրեց Լոնդոնի աշակցութիւնը ձեռք բե-րելու իր փորձերը: 1941 թ. նոյեմբերին և 1942 թ. հունվա-րին «Մեծ Սիրիայի» հարցով նա նորից դիմեց Անգլիային¹³: Արդալլահնի նմանօրինակ համառութեան պատճառն հավա-նաբար այն էր, որ նա իրազեկ էր «Մեծ Սիրիայի» ծրագրի նկատմամբ անգլիական բարձրաստիճան որոշ գործիչների դրական վերաբերմունքին և հույս ուներ իր հուշագրերի մի-ջոցով հասնել վերջիններեւ տեսակետներն Անգլիայի արա-բական քաղաքականութեան հիմքում զննելու:

Ա. Իգնեւի հայտարարութիւնից հետո անգլիական ղեկա-վար մարմիններում քննարկվելցին նոր քաղաքական զօր իրականացման հետ կապված հարցերը: Սկստեմերի 29-ին Ա. Իգնեւի նախագահութեամբ տեղի ունեցած միջկերտեսնա-չական մի ժողովում, որին մասնակցում էին զաղալմանի մի-նիստր Լ. Մոնրը, Հեղկաստանի գծով պետական մինիստր էյմբին, Մերձավոր արևելքի հարցերի մինիստր Կիթլլտոնը և այլ բարձրաստիճան պաշտոնյանք, այն կարևոր հետևու-թիւնն արվեց, որ արաբական երկրների ֆեդերացիա ստեղ-ծելու գաղափարն իրականանալի չէ¹⁴: Հոկտեմբեր-դեկտեմ-բեր ամիսներին Անգլիայի արաբական քաղաքականութեան

հարցն ավելի ժանրամասն ընթացիկաց Մերձավոր արևելքի պետական կոմիտեում: Կարևորագույն հաստատված միջնորդական-չափան այդ մարմնի կողմից կազմված զինուցազորը, որը զբվելու էր Անգլիայի արաբական քաղաքականությունից հիմ-րում: Զինուցազորը հաստատվում, որ արաբական երկրների ֆեդերացիայի գաղափարն ընդունելի պետք է համարել այն ղեկավար միայն, եթե այն կողմի լուծելու Պաղեստինի հարցը, մասնաձևում էր նաև ֆեդերացիայի գաղափարն իրագործելու ղեկավարությունը՝ կապված զինամտերական հակամարտությունն-երի, Ֆրանսիայի գերբորքման և միջազգայնական հակա-ուսթյունների հետ: Միաժամանակ այն մտախախտությունն էր հայտնվում, որ արաբական միությունը նպատակավորված շարժումն հետադարձ կարող է փոխակերպվել հակաանգլի-ստական շարժման: Հուլիսից հետո ղեկավարված, որում բեր-ված էին արաբական ֆեդերացիայի մի ցանի տարբերակներ՝ «Մեծ Միջրատի» նախագծից մինչև ասիական մայր ցամաքի արաբական երկրների միավորման նախագիծ¹⁵, վերջերսվ է, որ բոլոր նախագծերը վերաբերում էին միայն ասիական մայր ցամաքի արաբական երկրներին: Եղբայրացի բացա-կալությունը բացառվում է նրանով, որ Լոնդոնը, ինչպես վկայում են Կահիրեում անգլիական ղեկավար կենտրոնի զեռ նախապատերազմյան հուշագրերը, վիսենում էր, որ արա-բական և մահադական աշխարհում Եղբայրացի զեռի աշխու-ժացումը կարող է նրան դարձնել ռեզիսի ժողովուրդների առաջնորդը՝ ընդգրկել իմպերիալիզմի: Բացի դրանից, անգլի-ստական որոշ քաղաքագետները գերադասում էին «փա-րավորական» գործունի զեռը երիտասարդական իրականությունում, խոսում նրա սիրահարում արաբական երկրի շինելու՝ մա-րի¹⁶, Ալյապիտով, Անգլիան, հավանաբար, տուրք էր տալիս նաև ասիական արտերների որոշ շրջաններում արմատացած այն տեսակետին, թե կեղտաքայիններ մաքուր արաբներ չեն:

Անգլիական գործիչների ցանկությանն հակառակ, օս-կայն, Եղբայրացի ոչ միայն պարզապես մասնակցեց, այլև կարևորագույն զեռ կատարեց արաբական երկրների մի մի-ավորում ստեղծելու գործում: Այս հարցում ակտիվություն դրսևորեց 1942 թ. փետրվարին Եղբայրացում իշխանության գլուխ եկած վաֆլական կառավարությունը: Վերջին 1942 թ.

մայիսի 31-ին արաբական տարբեր երկրների ներկայացու-ցիչներին հրավիրեց միջարաբական հարաբերությունների քարեկավարման շուրջ խորհրդակցելու¹⁷: Հունիսին Կահիրե այ-ցելեցին և վարչապետ Մուստաֆա Նահասի հետ արաբական միություն հարցի շուրջ բանակցություններ վարեցին լանա-յան հայանի քաղաքական գործիչներ՝ Լիբանանի ապագա պրեզիդենտ Քիշարա Նուրին և Միրիայի ապագա վարչապետ Համիլ Մարգար: Բանակցությունների ընթացքում Քիշարա Նուրին շեշտեց, որ Լիբանանն արաբական մյուս երկրների հետ կհամագործակցի միայն իր անկախության և տարածա-լին անորոշականության ճանաչման հիմքի վրա: Մարգարն հավաստիացրեց, որ Միջին պարսոսում է այդ հիմք վրա համագործակցել Լիբանանի հետ¹⁸: Խորհրդակցական քննյթ կրող այս բանակցությունների նշանակությունն այն էր, որ գլուխը նշանավորում էին արաբական այնպիսի քաղաքական միավորումների մասնակցությունն արաբական միություն ստեղծելու գործին, որոնք տեսակետներն ավելի շուտ համ-պում էին արաբական միությունը միջպետական մակարդա-կով իրականացնելուն:

Նույն թվականի զինվածների Կահիրե այցելեցին Իրաքի պահպար՝ Աբդուլ Իլահն ու վարչապետ Նուրի Սաիդը և բա-նակցություններ վարեցին Նահասի, Մերձավոր արևելքի գծով անգլիական մինիստր Ռ. Քեյզլիի, ինչպես նաև արաբական տարբեր երկրների Կահիրեում գտնվող քաղաքական գործի-չների հետ: Բանակցությունների ընթացքում Նուրի Սաիդն առաջ քաշեց արաբական միություն իր ծրագիրը: Ռ. Քեյզլի ցանկություն հայտնեց Նուրի Սաիդի տեսակետներն ավելի խորը ուսումնասիրելու համար ունենալ նրա նախագիծը գրա-վոր շարադրանք¹⁹: 1943 թ. հունվարին Նուրի Սաիդն իր նա-խագիծն ուղարկեց Ռ. Քեյզլիին: Բարեբեր մահիչ անունով հայտնի այդ նախագիծը համաձայն Սիբրիան, Լիբանանը, Պա-ղեստինը և Անգլոսիրականը միավորվելու էին մեկ պետու-թյան մեջ, որի ընկալիչներն իրենք պիտի որոշեին երկրի կառավարման ձևը՝ միապետություն կամ հանրապետությու-ն, միացյալ կամ ֆեդերալ մի պետություն: Սիբրիական միասու-կան պետությունն Իրաքի հետ կազմելու էր «Արաբական միություն կամ Արաբական լիգա», որին կարող էին միանալ

այլ արարական երկրներ: Այդ կազմավորումն ունենալու էր հորհուրդ, որում Հերթով նախազանչելու էին անդամ երկրների գեկավարները: հորհուրդը պատասխանատու էր լինելու քաղաքական, ֆինանսական, ինչպես նաև Հաղորդակցություններին, սովորություններին, ազգային փոքրամասնությունների իրավունքներն ազատեցնելու և լուսավորության համակարգին հետ կապված հարցերում: Միասնական սիրիական պետությունում հրեաները և մարոնականները օտովում էին կիսանքննավարությունը: Նախատեսվում էր երեսուցամյա քաղաքում պայաններ ստեղծել ապահովելու համար կրոնական քարտուղիությունների կատարման անվտանգությունը, որի վերահսկումն իրականացնելու համար կազմվելու էր երեք կրոնների ներկայացուցիչներից բաղկացած մի հանձնաժողով: Նախագծում նշվում էր, որ նպատակահարմար չէ եղիպատոսի և Սաուդյան Արաբիայի ի սկզբանե անդամակցությունն Արաբական միությանը²³:

Նուրի Մաիդի նախագծում նախատեսվող Արաբական լիգան կամ միությունը միջպետական մի կազմակերպություն չէր լինելու: Նրա մշտական հորհուրդը ոչ թե կռված էր համադրելու անդամ երկրների քաղաքականությունը արտաքին քաղաքական, ֆինանսական և այլ մարզերում, այլ ուղղակի օգնատասխանատու էր դրանք համար: Նախագծում ուշիւ չէր օգտվում Միությանը կամ Լիգային անդամագրվելուց հետո մասնակից երկրների անկախության պահպանման մասին, այլ ընդհակառակը, միության հասնելու համար սովերենություն ընդհակառակը դիտվում էր որպես անհրաժեշտություն: Քր հուշագրում խոսելով ստեղծվելիք միավորման մասին, Նուրի Մաիդն հանձնա օգնագրոմում էր ութ թև (أصابع أصابع) կրակ բառը, այլ խոսում էր ուղղակի միության (وحد) մասին: Կարելի է ենթադրել, որ Լիգա տերմինը երբեմն օգտագործվում էր միայն քաղաքական միության դեմ արամադրված շրջանակների զդրությունը թուլացնելու նպատակով: Ինչ վերաբերում է ստեղծվելիք միավորման հորհրդում գերիշխանության հասնելու հարցին, ապա դրան, ինչպես 1943 թ. սկզբին իրաքյան իրազեկ շրջանակներից իրն Սաուդին հասած լուրերն էին վկայում, Մաիդն ուզում էր հասնել միացյալ Սիրիայում ինքնակալական վարչակարգ հաստատելու և

սիրիական զահն Իրաքի զահապահ Արդու Իլլահին տրամադրելու միջոցով²⁴, Ի սկզբանե եզիպատոսի և Սաուդյան Արաբիայի մասնակցությունը նպատակահարմար չհամարելը նույնպես պետք է քաջասրել Լիգայի անվան տակ պատմական Սիրիան և Իրաքն ընդդրիող արաբական մի նոր պետություն ստեղծելու: Նուրի Մաիդի միտումով Այս նախագծին անդրադարձած շատ հեղինակներ (է. թուս, Ա. Գ. Զիրինս, Ա. Տարրին) չեն նկատել դրանում նախատեսվող Լիգայի ոչ թե միջպետական, այլ համապետական էությունը: Հարցին հերչև են մտածել Ն. Շ. Նուսսայիդյանը և Ռ. Մակդոնալդը: Նրանցից առաջինը ինչպես այս, այնպես էլ էմիր Արզալլահին «Մեծ Սիրիային» ծրարելը դիտել է որպես Արաբական արևելքում մի «նոր պետական միավորում ստեղծելու» փորձ²⁵, Իսկ Ռ. Մակդոնալդը այն միտքն է հայտնել, որ Նուրի Մաիդը «իր «Արաբական լիգա» տերմինով ավելի շատ նկատի ունի արաբական երկրների քաղաքական մի կոնֆեդերացիոն, որը վերջ էր վերջը կդառնար սովերեն քաղաքական անալություն»²⁶:

Սիրիայում և Լիբանանում սահմանադրությունների վերականգնման և առաջիկայում քնտրությունների անցկացման վերաբերյալ Ազատ Ֆրանսիայի իշխանությունների 1943 թ. սկզբին կատարած հայտարարությունն ավելի հնարավոր և ռեալ դարձրեց այդ երկրների զործուն և արդեն պետական մակարդակով մասնակցությունն արաբական միությանը գաղափարի իրագործմանը: Միասնապես կզայտրեն բարելավվից Արաբիայի արևելքի ռազմաքաղաքական ընդհանուր իրադրությունը, որն արդյունք էր երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում սկսված արմատական բեկման: Այս բոլորը, ինչպես նաև արաբական համագործակցության հարցում Սիգիսմունդ աշխուժ դիրքորոշումը, ավելի նպատակալից հող ստեղծեցին միջարաբական հարաբերություններն աշխուժացնելու համար: Այս պայմաններում անգլիական կոտավարությունը երկրորդ անգամ հանդես եկավ արաբական միության հարցի վերաբերյալ: 1943 թ. փետրվարի 23-ին Ա. Իդենը հայտարարեց, որ «Լեպիան շարունակում է համակարգելով վերաբերել արաբների սնտեսական, մշակութային և քաղաքական միությանն ուղղված շարժմանը»: Նշելուց

հետո, որ միութեան վերաբերյալ ամեն մի առաջարկություն պետք է ներկայացվի արարների կողմից, նա շեշտեց, որ քաղաք չի մշակված համընդհանուր հավանության արժանացած մի նախագիծ²⁴, Այլ խոսքով, Ա. Իդենը փաստորեն հրաժարվում էր ոչ առանց Անգլիայի աշակերտության մշակված ստեղծյան նախագիծը հրապարակայնորեն պաշտպանելուց: Լոնդոնում լինի կարող հաշիվ շտաբնել, որ զրա ղեմ հանդես էին գալիս սիրիական և լիբանանյան մողղվորական զանգվածները, Երկրպետը և Ստադյան Աբրահան, ինչպես նաև ԱՄՆ-ը և Ֆրանսիան²⁵: Միտամանակ Ա. Իդենը, բոլորովին էլ ոչ պատահականորեն, իր հայտարարությունում առաջնային տեղ էր հատկացնում տնտեսական համագործակցությանը Բանն այն է, որ Լոնդոնն սկսել էր ավելի շատ մտահոգվել արարական քաղաքական համագործակցության²⁶ իր համար վնասակար հետևանքներով և փորձում էր առայժմ այն սահմանափակել տնտեսական ու մասամբ նաև մշակութային ոլորտներում: Այս առումով հատկանշական է Անգլիայի Մերձավոր արևելքի մինիստրության արտակարգ աշխուժությունը միջարարական համագործակցության հենց տնտեսական և մշակութային ապարդիներում և նրա կրավորականությունը արարների շրջանում քաղաքական համագործակցություն հաստատելու հարցում:

Արարական արևելքում ստեղծված նոր իրավիճակից փորձեց օգտվել նաև Անդրհորպաններ: Եվ Իդենի 1943 թ. փետրվարյան հայտարարությունը, և Սիրիայում ու Լիբանանում քաղաքական գաղափարները Աբրաղասյան առիթ էին քնննում մի անգամ ևս փորձել իրականացնելու «Մեծ Սիրիայի» ծրագիրը: Ենթեր 1943 թ. ապրիլին անգլիական կառավարությանն ուղարկեց «Մեծ Սիրիայի» ծրագրի և արարական միության վերաբերյալ մի հուշակաշիմ²⁷, Ըստ Աբրաղասյանի նախագծի պատմական Սիրիայի բոլոր մարզերը միավորվելու էին մեկ պետության մեջ, որը լինելու էր կամ սահմանադրական միապետություն (առաջին տարբերակ), կամ դաշնակցային պետություն (երկրորդ տարբերակ): Երկու դեպքում էլ պետության ղեկավարը լինելու էր Աբրաղասյան ինքը: Եթև Լիբանանը չմիանար սիրիական միացյալ պետությանը, ապա այն տարածքներում, որոնց և ինքնավար կի-

ցանան լեան տարածքի միավորումը առաջին համաշխարհային պատերազմից հետո ստեղծվել էր Մեծն Լիբանանի պետությունը, հանրաքվե պիտի անցկացվեր՝ որոշելու համար նրանց Լիբանանի կազմում մնալու կամ «Մեծ Սիրիային» միանալու հարցը²⁸: Իսկ եթև Լիբանանը միանար «Մեծ Սիրիային», ապա երբեմնի Լիբանան լեան շրջանակներում և Պաղեստինի մի քանի հատվածներում նախատեսվում էր հաստատել «Տասուլ վարչակարգ»: Սիրիական միացյալ պետությունը Անգլիայի հետ պիտի կնքեր 1936 թ. անգլո-եգիպտական և 1930 թ. անգլո-լիբանան պայմանագրերին համանման մի պայմանագիր և Իրաքի հետ կազմելու էր արարական մի միություն, որին կարող էին միանալ արարական այն անդամ երկրների քաղաքականությունը պաշտպանական, ֆինանսական և այլ ասպարեղներում:

1943 թ. սեղբրին անց նաև արաբական այլ երկրների ակտիվությունը արարական միության գաղափարն իրականացնելու խնդրում: Արարական լիգայի աղագա բոլոր հիմնադիր անդամներն սկսեցին միմյանց հետ շփումների մեջ մտնել: 1943 թ. մարտին իրաքյան քաղաքական հայտնի գործիչ Ջամիլ Մադֆային այցելեց Կաշիրն, Ամման և Ջիդդա, որտեղ բանակցություններ վարեց տեղական ղեկավարների հետ: Կաշիրում տեղի ունեցած բանակցությունների ժամանակ Սեդիպտտի վարչական նահանսն առաջարկեց համաարարական կեդրեն հրավիրել արարական միության հարցը քննելու համար: Սակայն, մինչ այդ, բոտ նահանսի, անհրաժեշտ էր ավելի մանրամասն ծանոթանալ խնդրի վերաբերյալ չուրաքանչյուր արարական երկրի տեսակետին²⁹, Նույն թվականի մարտի 30-ին Եգիպտոսի արդարակառույցային մինիստր Սարրի Աբու Այամը վարչապետ նահանսի անունից հայտարարեց, որ եգիպտական կառավարությունը որոշել է արարական միության հարցը քննարկելու համար շփումների մեջ մտնել արաբական մյուս կառավարությունների հետ²⁹,

1943 թ. կեսերից միջարարական բանակցությունները խիստ աշխուժացան: Հուլիսի 8-ից 13-ը նահանսն այցելեց Պաղեստին, որտեղ հանդիպումներ ունեցավ տեղական և

սիրիական քաղաքական գործիչների հետ: Բանակցութունների ընթացքում մասնավորապես քննարկվեց արաբական միութիւնը Պաղեստինի արաբների մասնակցութիւնն հարցը: Նահճար Աբդալլահից Անդրհորդանան այցելելու հրավեր ստացավ, սակայն ժամանակի սղութիւնը պատճառաբանելով, այցից հրաժարվեց³⁰:

Նույն ամսին, Կահիրե մեկնելու ճանապարհին, Ամման, Դամասկոս և Բեյրութ այցելեց Իրաքի վարչապետ Նուրի Սաիդը: Իր այցելութիւնն ընթացքում նա ձգտում էր համապատասխան հող նախագաղտարտասել «Քարիբք մահիլի» ծրարի իրականացման համար, ընդ որում ամեն ինչ անելով սիրիական դաճը Իրաքի դահապաճ Աբդուլ Իլլահին վերստուհչելու համար: Այդ նպատակով Սաիդն Աբդալլահին խորհուրդ տվեց «ձեռնպահ մնալ սիրիական գաճի շուրջ անժամանակի վճեհից» և ավելի շատ ուշադրութիւն դարձնել Պաղեստինին³¹: Սիրիական գաճի համար հաշիշյան դինաստիայի երկու ճյուղավորումների միջև թարուն պայքար էր ծղվում: Պետք է ենթադրել, որ Սիրիայում հուլիսին, իսկ Լիբանոսում օգոստոսին անցկացվող պառլամենտական ընտրութիւններով զբաղված լեանտյայն քաղաքական գործիչներն առաջմ նպատակահարմար շրտան բացահայտորեն հանդես գալ նախագծի դեմ, քանի որ Նուրի Սաիդը Ֆելութում և Դամասկոսում իր վարած բանակցութիւններից ընդհանուր առմամբ զո՛ւ էր մնացել: Միայն Լիբանանի մարտնական շըբշանակներն էին զեմ արտահայտվել նրա նախագծին:

Հուլիսի 31-ից օգոստոսի 5-ը Կահիրեում կարեւոր բանակցութիւններ տեղի ունեցան Նահճարի և Սաիդի միջև: Դրանց ընթացքում իրաքյան վարչապետն առաջ քաշեց արաբական միութիւնն երկու տարբերակ: Ըստ առաջին տարբերակի արաբական միութիւնն ունենալու էր ընդհանուր ժողով, որում միութիւնն անդամ երկրները ներկայացվելու էին ըստ իրենց ընկալութիւնն թվի և բյուջիի նախատեսվում էր ստեղծել նահալըճանուր ժողովին հաշվետու գործադիր կոմիտե, որի որոշումները, սակայն այն կամ այն երկրի այդ որոշման նկատմամբ ունեցած վերաբերմունքից, լինելու էին պարտադիր: Միութիւնն ունենալու էր պրեզիդենտ, որն ընտրվելու կամ նշանակվելու էր: Ըստ երկրորդ տարբերակի, միութիւնն ընդ-

հանուր ժողովում բուր անգամ երկրները ներկայացվելու էին հավասար հիմունքներով՝ անկախ իրենց ընկալութիւնն թվից և բյուջեից, իսկ ընդունված որոշումները պարտադիր էին լինելու որոշմանը կողմ քվեարկած երկրների համար միայն³²: Սակայն Սաիդի հիմնական նպատակը ոչ թե այս երկու տարբերակներից որևէ մեկը արաբական միութիւնն հիմնում զենել էր, այլ՝ իր «Քարիբք մահիլի» ծրագրի նըկատմամբ ընդդիմոսի աքակցութիւնն ապահովելը³³: Ընդ որում Սաիդը շեշտը դնում էր, որ ծրագրի առաջին մասի՝ «Մեծ Սիրիայի» ստեղծման վրա, հավանաբար ենթադրելով, որ դրա ստեղծումից հետո «Քարիբք մահիլի» իրագործումը կընթանա առանց դժվարութիւնների: Այդ հարցում եղիպական արական աշակցութիւնը նա խոստանում էր վարձահատուց լինել՝ Կահիրեին իրավունք տալով հանդես գալու սիրիական միացյալ պետութիւնում հրեաներին և մարտնականներին ընձեռվելիք առանձնաշեքորների երաշխավոր դերում³⁴: Բանակցութիւնների ընթացքում Եգիպտոսն ու Իրաքը պայմանավորվեցին հանդես չգալ արաբական երկրների միջև որևէ այլ միավորում մասնավորապես սիրիական միացյալ պետութիւնն ստեղծման զեմ³⁵: Ես ընզվ էլ չեմ նշանակում, սակայն, որ երկպտոսը հանդես էր գալիս հաշիմյանների ծրագրերի պաշտպանի դերում: Բանն այն է, որ սովյալ պահին «Մեծ Սիրիայի» գաղափարին, բացի Լիբանանից, սկզբունքորեն չէին առարկում պատմաաշխարհագրական Սիրիայի մաս կազմող ոչ այլ երկրում: Հարցը ոչ թե ընդհանրապես այդ գաղափարի, այլ այն ինչ սկզբունքների վրա, ինչ ձեռով և ում ղեկավարութիւնում իրականացնելու մեջ էր: Այնպես որ Եգիպտոսի այդ թայը պետք չէ դիտել որպես դիւրողանութիւն Իրաքի կամ Անդրհորդանանի նկատմամբ:

Նուրի Սաիդը և Նահճար նպատակահարմար գտան արաբական միութիւնն շուրջ վարվող բանակցութիւններում ընդգրկել միայն արաբական անկախ երկրների և Պաղեստինի ներկայացուցիչներին³⁶: Դա թելադրված էր այն իրողութիւնից, որ օտարերկրյա տիրապետութիւնն առկ գտնվող արաբական երկրների մասնակցութիւնը պարզապես հնարավոր չէր՝ գաղութային իշխանութիւնների ընդդիմադրութիւնն հետևանքով: Պաղեստինի համար արված բացատրումներ

Լողձերը կարծես շեշտում էին արարական աշխարհի համար այդ երկրի օտանձնահատուկ նշանակությունը: Մի փոքր առաջ անցնելով նրանք, որ Արարական լիդայի հիմնադիր բուրյուր անդամները անկախ պետություններ էին, թեևուզ և նրանցից ոմանց (օրինակ Իրացի) անկախությունը ձևական ընույթ ունէր: Բացառություն էր Անդրհորդանանը, որը գտնվելով անգլիական մանդատային տիրապետության ներքո, եուլիսի ձևական անկախություն չուներ: Հիմնադիր մյուս պետությունների կողմից այդ հանգամանքի «անտեսումը» բացառարժու էր մի կողմից Անդրհորդանանի, որը անգլիական անկախության լիդային կարևոր գիրքով, իսկ մյուս կողմից Լիդային Սեմանի իշխանությունների մասնակցությանը Անգլիայից ընձեռնուղ օտանձնահատուկ խաթմասանքով:

Սախը-Նահաս Նահիպուտից հետո արարական համագործակցության շուրջ վարվող բանակցություններում, անշուշտ ոչ-ստանց Իրացի համամտության, առաջատար դեր սեւնց կատարել Եգիպտոսը: Բանակցությունների ավարտից հետո հրապարակված կնիպտա-իրացական շարժանիկ հայտարարությունում նշված էր, որ այսուհետև Եգիպտոսի վարչապետ Նահասն է հանձն անձեղու արարական մյուս երկրների հետ միության հարցի շուրջ բանակցությունների վարելու նպատականությունը, ըստ որում արարական ժողովուրդների տեսակետներն ավելի պարզորոշ իմանալու համար հրավիրվելու է հատուկ կոնգրես⁷¹:

1943 թ. օգոստոսի 28-ից սեպտեմբերի 1-ը Նահասը բանակցություններ վարել Անդրհորդանանի վարչապետ Բաուֆիի Աբու Լուդայի հետ: Նախօրեին իր վարչապետին ուղղած հրահանգներում էինք Արաբլաւը նշում էր, որ արարական միությունում Իրացի ու Եգիպտոսի կողքին մասնատված պատմաաշխարհագրական Սիրիայի օտանձին երկրներն այնքան թույլ ու անհամապատասխան կլինեն, որ կհարկադրվեն կրավորական դիրք գրավել արարական համագործակցության հարցում: Հստ Արաբլաւի այդ հանդամանքը վնասելու էր ընդհանուր զորքին, քանի որ արարական միությունում Իրացի ու Եգիպտոսի կողքին միացյալ սիրիական պետության բացակայությունից արարական տուժելու էին⁷²: Բանակցությունների ժամանակ Աբու Լուդան, առաջ

թաշկով վերոնշյալ փաստարկները, ձգտում էր ամեն կերպ ապացուցել «Մեծ Սիրիայի» ստեղծման անհրաժեշտությունը, սակայն հաշվի առնելով Արաբանում և Պաղեստինում սիրող իրադրության յուրահատկությունը, առաջ էր քաշում առաջմ միայն Սիրիան և Անդրհորդանանը մեկ պետության մեջ միավորելու ծրագիրը⁷³:

Արարական երկրների համախմբման հարցի շուրջ բանակցություններին մեջ մտնելով, Բաղդադ ու Սեմանի իրականում ավելի շատ հետատուտ էին ոչ թի արարական ընդհանուր մի միություն ստեղծելուն, այլ իրենց զլլաւիդը նպատակի իրականացմանը, այն է՝ պատմաաշխարհագրական ամբողջ Սիրիային տիրելուն, կամ գոնե նրա մեծ մասն իրենց իշխանությանը ենթարկելուն: Ընդ որում հաշիմյան դինաստիայի երկու շյուրերից յուրաքանչյուրը սիրիական տարածքի նկատմամբ իր հավանությունները համարում էր ավելի օրինական: Այլ էր Եգիպտոսի խնդիրը. մասնակցով արարական միությանը, նա նպատակ ուներ ընդարձակել իր ազդեցության ոլորտները և զերիշուղ զնր ձեռք բերել Արարական արևելքում: Դրան Եգիպտոսն ուզում էր հասնել ստանց սեփական սահմանների ընդարձակման: Ընց վերջին հանգամանքը օրչեկտիվորեն զրոյց 1943 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներից արդեն իսկ իշխանության գլխում գտնվող սիրիական և լիբանանյան ազգային զործիչներին արարական համագործակցության հարցում Եգիպտոսի հետ հանգու զուլ միացյալ հակատով:

Ապագա միությանը Սիրիայի և Արանանի մասնակցության հետանկարը զգալի ազդեցություն թողցն արարական համագործակցության հարցում Սաուդյան Արաբիայի գիրքորոշման վրա: 1943 թ. հուլիսից Նահասը Իքն Սաուդին տեղչակ էր պահում իր վարած բանակցությունների ընթացքին և խնդրում էր, թեևուզ սուկ հաշիմյանների ծավալապաշտությունը կանխելու սիրույն, անգամակցել արարական միությանը⁷⁴: Սակայն սաուդական վեհապետը մինչև սեպտեմբեր հրաժարվում էր մասնակցել ընթացող բանակցություններին, մտավախ՝ արարական ապագա միությունում հաշիմյանների թե Լգիպական հավանական զերականությունից⁷⁵: Արարական ապագա կազմակերպության կազմում Սիրիայի,

կրանանի, ինչպես նաև եմենի ներկայությունը շտորճիվ Կահիրեի թև Բազորդի ու Ամմանի հավակնությունները դիմակայելու հնարավորության առկայությունը, ինչ խոսք՝ նաև անգլիական գործիչների համառ հորդորները միայն հնարավոր դարձրեցին Սաուդյան Արաբիայի մասնակցությունը միության շուրջ վարվող նախնական շփումներին: Սկսվեցին 24 թվակիր մի ուղերձով էրն Սաուդը նահանասին տեղեկացրեց, որ իր երկիրը պատրաստ է մասնակցել բանակցություններին: Նա միաժամանակ ընդդեմ էր, որ արաբների միավորումը մի կառավարության ներքո՝ անկախապահ հարձակ է ու անիրազորող զորքի, նկատի ունենալով արևմտյան երկրների դիրքորոշումը և իրադրությունը միջրիայում և Պաղեստինում: Իրն Սաուդը, ամենայն հավանականությամբ ստեղծարարներ խորհրդով, առաջարկում էր ուշադրությունը կենտրոնացնել տնտեսական և մշակութային համագործակցության վրա և խուսափել զոնն մինչև պատերազմի վերջը բազաբական հարցեր քննարկելուց⁶²: Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Կահիրեում բանակցություններ տեղի ունեցան նահանսի և Սաուդյան Արաբիայի ներկայացուցիչ Յուսուֆ Յասինի միջև: Գրանց ընթացքում եզրպատկան կործար, պաշտպանելով սաուդյան տեսակետը արաբական միության պայակներում պարզվեցին վերաբերյալ, նեչց նաև բազաբական մի շարք հարցերի, այդ թվում պաղեստինյան և սիրիական խնդիրների բննալիման անհրաժեշտությունը արաբական միության շուրջ վարվող բանակցություններում: Յուսուֆ Յասինը առաջ բաշց պայտա կազմակերպության ստեղծման հետ կապված հարցերը կողզրես հրավիրելուց առաջ նախապատրաստական մի կոմիտեում ըննարկելու գաղափարը: Նա առաջարկեց այդ կոմիտեի նիստերն անցկացնել Մեքքայում: Չառարկելով այդպիսի մի կոմիտեի ստեղծման դեմ, նահանսը չհամաձայնեց այն Մեքքայում հրավիրելու մտքի հետ, բանի որ դա կարող էր մտավախություններ առաջացնել Իրաքում և քրիստոնյաների շրջանում⁶³:

Եզրպատում գտնվելու ընթացքում Յուսուֆ Յասինը ճշրտեց նաև ԱՄՆ-ի կառավարության դիրքորոշումն արաբական միության հարցի վերաբերյալ: Կահիրեում ամերիկյան դեսպանորդ Քիբբն իր կառավարության հետ խորհրդակցելուց

հետ առողական ներկայացուցիչն տեղեկացրեց, որ ԱՄՆ-ը դրականորեն է վերաբերում արաբական միության գաղափարին: Քիբբն ավելացրեց, որ նախընտրելի է այդ ուղղությամբ առաջին քայլերը ձեռնարկել ոչ թև բազաբական, այլ մշակութային և տնտեսական ապարեզներում⁶⁴: Ճիշտ չէր լինի, սակայն, ամերիկյան նման դիրքորոշումը դիտել որպես նույն հարցի նկատմամբ անգլիական տեսակետի հետ համերաշխուր գաղափարային պարտիք արտահայտում: ԱՄՆ-ն այս քայլը ավելի շուտ պայմանավորված էր վաշինգտոնի այն մտավարտությամբ, որ արաբական ապագա միության բազաբական թեքումից կարելի է միայն Արաբական արևելքում Անգլիայի ազդեցության հետագա աճ սակնկալել:

Մերձավոր արևելքում բավական ազդեցություն ունեցող արևմտյան մյուս երկիրը՝ Ֆրանսիան, նույնպես կողմ էր արաբական համագործակցություն տնտեսական և մշակութային ոլորտներում սամանափակելուն: Մակայն արաբական միության ֆրանսիական և անգլիական նախագծերի նմանությունը միայն այսբանն էր: Նախ ֆրանսիական իշխանությունները, ինչպես կրևում է պատերազմի ընթացքում երկար ժամանակ կանտում (Միբիայում և իրանանում) Ազատ Ֆրանսիայի գլխավոր պատգամավորի կարևոր պաշտոնն զբաղեցրած զենեար Կատրուի արտահայտած նկատառումներին, ցանկալին իրականի տեղ ընդունելով ենթադրում էին, որ արաբական ապագա միությունում Եզրպատն ու Իրաքը լին ընդգրկվի⁶⁵: Հաշվի առնելով արաբական միանություն գաղափարի լայն մոդովորականությունը Միբիայում, Կատրուն աննպատակահարմար էր համարում վերջինիս արաբական համագործակցությունից մեկուսացնելու փորձ անելը: Ավելին, նա կարծում էր, որ աշխարհադրական, պատմական և ինտելեկտուալ գործոններին էնելով, Միբիան արաբական միությունում գլխավորող զեր կկատարի: Ըստ Կատրուի, այդ միության կենտրոնը կլինի Գամակուրը: Այս բոլորի հետ մեկտեղ, սակայն, Միբիան շարունակելու էր մնալ Ֆրանսիայի ազդեցության ներքո: Ինչ վերաբերում է իրանանին, ապա ենթարկվում էր նրան լնդողկիլ արաբական միությունում⁶⁶: Ֆրանսիական այս հավակնուտ ծրագրումները այդպես էլ մնացին թղթի վրա: Ասանդի երկրներում ժավաված ազ-

գալին-ազատագրական շարժման հետևանքով ֆրանսիական մանդատի վերաբերյալ հողվածների շնչումը սիրիական և լիբանանյան սահմանագրություններից, ինչպես նաև այդ երկրների Հայրենասիրական ուժերի իրենց երկրների ազգային անկախության ամրապնդման ուղղությամբ ձևոք բերած հաջորդ հաղորդությունները այն ատիճանն թուլացրեցին Ֆրանսիայի դիրքերը Առևտուտ և ընդհանրապես Արաբական արևելքում, որ Փարիզը փաստորեն ի վիճակի չէր որևէ ձևով ազդեցություն գործիչ արաբական միություն գաղափարի իրազորման ընթացի վրա:

1943 թ. հոկտեմբերի 26-ից նոյեմբերի 3-ը Ալեքսանդրիայում և Կահիրեում կարևոր բանակցություններ տեղի ունեցան Նահճատի և Սիրիայի վարչապետ Սաադալլա Ջարբրիի ու արտաքին գործերի մինիստր Զամիլ Մարզամի միջև: Մինչ այդ արաբական միություն հարցի շուրջ սիրիական կողմը հոկտեմբերի 10-ին Շիթրայում խորհրդակցել էր նաև լիբանանյան ներկայացուցիչների հետ: Եզրօրտա-սիրիական բանակցությունների ընթացքում Դամասկոսն իր պատրաստակամությունը հայտնեց անդամակցել արաբական ապագա միությանը, անկախ այն բանից, թե այն ինչ ձևով կիրականացվի՝ կենտրոնացված պետության, միջարաբական մի կազմակերպության, թե որևէ այլ ձևով: Սաադալլա Ջարբրին տեղեկացրեց, որ Սիրիան պատրաստ է արաբական մյուս երկրների հետ համագործակցություն հաստատել անխորհրդոր ասպարեղներում, այդ թվում նաև քաղաքական⁸⁷: Նա մտածամանակ նշեց, որ իր կառավարությունը կողմնակից է «Մեծ Սիրիայի» ստեղծմանը, սակայն այդ միավորումում «պահպանելով հանրապետական վարչակարգը որպես հիմք և Դամասկոսը իբրև մայրաքաղաք»⁸⁸: Սիրիական կողմը հայտնեց, որ ինքը ձանաչում է կրանանի անկախությունը և տարածքային ամբողջականությունը, պայմանով, որ «Լիբանանը պահպանի իր անկախությունը, արաբական կողմնորոշումը, Սիրիայի ու նրա (Լիբանանի—Շ. Ա.) միջև հաստատվեն ամուր ստեղծական կապեր»⁸⁹: Սիրիան պաշտպանեց արաբական ապագա միությունն անկախ արաբական երկրներով սահմանափակելու առաջարկը, սակայն նշեց վարչապետականություններում պահպանման արաբական կուսակ-

ցությունների մասնակցության անհրաժեշտությունը: Միության հարցում սիրիական դիրքորոշման առանձնահատկությունն այն էր, որ նա միջպետական մակարդակ չէր համարում արաբական միության իրականացման միակ ձևը: Սիրիան կողմնակից էր միջարաբական համագործակցությունն էլ ավելի խոր հիմքերի վրա դնելուն, ընդհուպ մինչև արաբական միացյալ պետական միավորում ստեղծելուն: Այս առումով էլ պետք էր որպես սակ հայտարարություն ընկալել Սաադալլա Ջարբրիի այն մտաբը, որ «Սիրիան կհրաժարվի իր երկրներում իր գոյակից ավելի բարձր պարզել մի այլ գորշ, բայց արաբական միություն գործից»⁹⁰: Նմանօրինակ դիրքորոշումը պայմանավորված էր Սիրիայում արաբական միության պաշտպարի անհամեմատ ավելի մեծ ժողովրդականությունը, ճշտակալն, Սիրիան պատրաստ էր դնալ միության ոչ ամեն զեմով: «Մեծ Սիրիայի» նախագծին իրենց համամասնելը խիստ սկզբունքալուծեն պայմանավորելով երկրի հանրապետական վարչակարգի պահպանման պահանջով, սիրիացիները դրսևորում էին իրենց վճռականությունը՝ որևէ կենտրոնացված միության նախագիծ պաշտպանելու այն դեպքում միայն, եթե այն իրականացվեր որոշակի ղեկավարական սկզբունքների հիման վրա: Հարկ է շեշտել, որ Դամասկոսի նման դիրքորոշումը շատ բանով պայմանավորեց անդրահայրենյան «Մեծ Սիրիայի» և «Բարեբեր մահիլի» նախագիծերի ձախողումը:

Այդ նախագիծերի իրականացմանը զեմ էր նաև դրանց ոլորտը ներքաշվելու համար հայտանշված արաբական մյուս երիտասարդ հանրապետությունը՝ Լիբանանը: 1944 թ. հունվարին վարչապետ Բիադ Սուլհի և Նահճատի միջև կայացած բանակցությունների ընթացքում լիբանանյան կողմը շեշտեց, որ Լիբանանը պատրաստ է ամենալայն քաղաքական, տրևստական և մշակութային համագործակցություն հաստատել արաբական մյուս երկրների հետ միայն իր անկախության պահպանման հիմքի վրա: Լիբանանի այսպիսի դիրքորոշումը կանխորոշված էր 1943 թ. սեպտեմբերի ազգային ուխտով, որի արտաքին քաղաքական կարգի դրույթներից մեկը երկրի անկախության հիմքի վրա արաբական մյուս պետությունների հետ կապերի ընդլայնմանն ու դարացմանն էր վերա-

քերում³¹։ Ռիչար Մոյլը առաջ քաշեց այն տեսակետը, որ միջաբարական համագործակցության ծավալման համար առաջնային նշանակություն ունի արաբական երկրներում արևմտյան ազդեցության թուլացումը³²։ Լիբանանյան այս տեսակետը, ինչպես նաև 1944 թ. փետրվարին եզրիտա-եմենյան բանակցությունների ժամանակ Եմենի արտահայտած ցանկությունը³³ միջաբարական համագործակցությունը տարածելու նաև արաբական երկրների դեմ ուղղված պրեզիտա-ների դեմ պայքարելու ուղղությամբ, ընդունվելու դեպքում կնպաստեին ստեղծվելիք միությունը էլ ավելի արդյունավետ և օգտակար դարձնելու։ Ինչպես և Լիբանանը, Եմենը նույնպես հանդես էր գալիս արաբական համագործակցությունը միջպետական մի կազմակերպության միջոցով հաստատելու օգտին³⁴։ Մասնակցելով արաբական միության շուրջ վարվող բանակցություններին, Եմենը ցանկանում էր դուրս գալ երկարամյա միջազգային մեկուսացումից և ձգտում էր դրան հասնել ավելի շուտ համագործակցելով արաբական, քան արևմտյան երկրների հետ։ Լիբանանն իր հերթին հույս ուներ արաբական միության միջոցով ամրապնդել իր ազգային անկախությունը և այն օգտագործել արաբական մյուս երկրներին հետ շահավետ անտեսական կապեր հաստատելու համար։

Եզրիտա-եմենյան խորհրդակցություններով արաբական միություն ստեղծելու պոթովում ավարտվեց 1943 թ. ամռանը եզրիտա-իրաքյան բանակցություններով սկսված մի կարևոր փուլ։ Այն որակական մի նոր աստիճան էր նշանավորում արաբական միության հասնելու ճանապարհին։ Առաջին անգամ լինելով արաբական համագործակցության հարցը քննարկելու էր միջպետական մակարդակում։ Բանակցությունների ընթացքում պարզ դարձավ, որ դրանց մասնակից յոթ արաբական երկրների միջև միություն հնարավոր է իրագործել ուղիղապես միջպետական մի կազմակերպության ձևով միայն։ Արաբական աշխարհում ձևավորված կամ ձևավորման ընթացքում դուրսվող առանձին պետությունների, դրանց միջև գոյություն ունեցող հակասությունների ու զարգացման մակարդակների տարբերությունների պայմաններում համաարա-

բական միությունն իրագործելու մի ուրիշ այլընտրանքային տարբերակ չկար։

Արաբական միության շուրջ վարվող բանակցությունների ընթացքում և դրանից հետո անգլիական ղեկավար շրջաններում շարունակում էին քննարկել Անգլիայի արաբական բազաբականության նկատ կապված հարցերը։ Ինչպես դա երևում է Ա. Գոմաշի շրջանառության մեջ դրած նյութից, 1943 թ. կեսերից Անգլիային Արաբական արևելքում ավանդի շատ հույսը խնդրներից մեկը պաղեստինյանն էր։ Անգլիական կաբինետի որոշմամբ 1943 թ. հուլիսին ներքին գործերի մինիստր Հեբբերտ Մորիսոնի գլխավորությամբ կազմվեց մի հատուկ հանձնաժողով, որը ուսումնասիրելու էր Պաղեստինի հարցը։ Հանձնաժողովը 1944 թ. հունվարին կառավարությանը ներկայացրեց մի զեկուցագիր, ըստ որի նախատեսվում էր պատմաաշխարհագրական Սիրիայի տարածումը ստեղծել երեք առանձին պետություններ՝ Մեծ Սիրիան (Սիրիական հանրապետություն, հարավային Լիբանանի, Պաղեստինի արաբական մասերի և Անդհորդանանի միավորմամբ), Լիբանան և հրեական պետություն։ Նույն զեկուցագրով նախատեսվում էր Անգլիայի ղեկավարությանը և ԱՄՆ-ի ու Ֆրանսիայի մասնակցությամբ երրօսյակին շրջառում միջազգային վարչակարգ հաստատել։ Ավելի ուշ՝ 1944 թ. աշնանը, անգլիացի մի շարք մասնագետներ, հաշվի առնելով Մեծ Սիրիայի՝ նախազօի իրականացման բարդությունը, առաջ քաշեցին շճարգմային Սիրիայի ստեղծման ծրագիրը, որը կընդգրկեր Անդհորդանանը և Պաղեստինի արաբական հատվածները։

Այս բոլոր նախադեբեր հետամուտ էին հիմնականում մեկ նպատակի. Պաղեստինում հրեական պետության ստեղծման հասնել՝ առանց արաբական երկրներում Անգլիայի գիրքերը վտանգելու։ Մակայն Անգլիայի արաբացի գործերի մինիստրության մասնագետներն ու անձամբ Ա. Իդենը հավատացած չէին, որ նման նախազօծերով կարելի է հրեական պետություն ստեղծելու հարցում արարների համաձայնություն ստանալ, կամ էլ դրանց միջոցով գոնե նվազադրել հասցնել Անգլիային սպառնացող վնասները արաբական երկրներում։ Ֆորին Օֆիսում գերակշռում էր այն տեսակետը.

որ արարական որևէ միութուն, այդ իմում նաև ԵՄԻժ Սիրիան», չե՛ համաձայնիքի Պաղեստինի բաժանմանը⁵⁴։ Միության շուրջ վարժող բանակցությունների ընթացքում արարական մայրաքաղաքների մի մասի կողմից քաղաքական համազոր-ժակցության հարցի առաջ քաշումը վիսլայում էր, որ արար-ների որևէ համախմբում զովար է ենթարկել Անգլիայի ան-րողական վերահսկողությանը։ Այս բոլորից նկնելով, Լոն-դոնը որոշեց հասնել 1944 թ. սեպտեմբերի 15-ին որոշակի հեռա-նկար գործած արարական միության հարցի շուրջ նախա-պատրաստական կոմիտեի նստաշրջանի հրավիրման հե-տազգային։ Ֆորթ Օֆորթ 1944 թ. փետրվարին մինչև իսկ նուրի Սիրիանի թվարարց զարգերիցն էր ակտիվությունը արարական միության հարցում, երբ Իրաքի վարչապետը նոր էր վերադարձել Դամասկոս, Բելքրոյթ և Ամման կատարած այցելությունից, որի ընթացքում նա մի անգամ ևս հետամուտ էր եղել ԵՄԻժ-ի որևէ մասնիկի ծրագրի իրականացմանը⁵⁵։

Հազանաբար բանն այն էր, որ Լոնդոնը, թերահավատ հաշիվյանների գերիշխանությամբ այդ ծրագրի իրականաց-ման հնարավորությունը հարցում, երկնչում էր, որ Իրաքի ջանքերի այնուամենայնիվ սիրիական և իբրանայան կառա-վարությունների կողմի որպես հակակշիռ էլ ավելի աշխու-ժացնել էր իրենց գործունեությունը համաարարական միության շուրջ նախապատրաստական կոմիտեի նստաշրջանի հրավիր-ման ուղղությամբ և որպեսզի իսկ հնախողվեն նստաշրջանն առայժմ հետաձգելու Լոնդոնի ծրագրերը։ Իրենց նպատակին հասնելու համար անպիսացելիքը որոշակի ճնշում գործադրե-լիցի արարական բոլոր երկրների վրա։ Նրանց թվադրանքը 1944 թ. մարտին և ապրիլին, համապատասխանաբար Սի-րիայի արտաքին գործերի մինիստր Զամիլ Մարդամի և Կի-բանանի վարչապետ Ռիադ Սուհի հետ բանակցությունների ժամանակ, սուալույան միտպետը դեմ արտահայտվեց օպա-տերազմական արյամաններում նախապատրաստական նըս-տաշրջանի հրավիրմանը⁵⁶։

Արարական երկրները միտամանակ տեղի տվեցին անգլիական այս ճնշման առաջ 1944 թ. հուլիսի 12-ին միայն ձեռնպահի արդարացատության միևիտար Սաբրի Աբու Ալա-մը վարչապետ նահանգի անունից հայտարարեց, որ իր կա-

ռավարությունը պաշտոնական հրավերներ է ուղարկել բանակ-ցությունների մասնակից արարական երկրների կառավարու-թյուններին, առաջարկելով հուլիսի վերջին—օգոստոսի սերջ-րին նախապատրաստական կոմիտեի նիստ հրավիրել Եգիպ-տոսում⁵⁷։ Ե՛վ Գահիրեի այս նախաձեռնությունը, և արա-րական մի շանի կառավարությունների անմիջական ու դրա-կան արձագանքը շատ բանով արդյունք էին արարական երկրների հասարակական տարբեր խավերի կողմից միության պոպուլյարին ցույց տրված այն աջակցության, որը 1943 թ. կալած արտահայտվում էր նաև ուսանողների, կանանց, իրա-վարանների և նմանատիպ այլ համաարարական համազո-մարներ հրավիրելու գանգվածային շարժումներում։ Իրա հետ միտեղ պետք է նշել եգիպտական կառավարության հետևող-պականությունը նախապատրաստական կոմիտեի նստաշրջանի հրավիրելու հարցում։

Սիրիայի, Կիբանանի, Իրաքի և Անգլոհորանների կառա-վարություններն ընդունեցին Եգիպտոսի հրավերը, մինչ Սա-ուդյան Արաբիան ու նրան հետևելով նաև Նմներ ձգտում էին հետաձգել նստաշրջանի հրավիրումը։ Միայն իրենց ջանքերի կատարողությունից իր տես և առանց իրենց մասնակցության նստաշրջանի գումարման հետակադրի մտավայր, Սաուդյան Արաբիան և Նմներ հայտնեցին, որ պատրաստ են մասնակ-ցելու կոմիտեի նիստերին։ Նրանց պատվիրակները՝ Հուսեյն Փարսին և Յուսուֆ Յաիրը, Ալեքսանդրիայում սեպտեմբե-րի 25-ին իր աշխատանքն սկսած արարական միության նա-խապատրաստական կոմիտեի նստաշրջանին մասնակցեցին համապատասխանաբար սեպտեմբերի 28-ից և հոկտեմբերի 1-ից, այն բանից հետո, երբ խորհրդաժողովը մասնակից-ները առաջին նիստի որոշման համաձայն հեռադի-նապահիցին Սանա և Թիբազ, երկու միտպետներից խնդրելով ան-հապաղ իրենց ներկայացուցիչներին ուղարկել Ալեքսանդրիա։ Անգլիացիների ընդդիմադրությունից հակառակ, հոկտեմբերի մեկից նստաշրջանի աշխատանքներին սակց մասնակցել նաև պաղեստինյան արարների ներկայացուցիչ Մուսա ալ Ալամին։ Եգիպտոսի, Իրաքի, Սիրիայի, Կիբանանի և Անգլոհոր-անանի պատվիրակությունները զվտավորում էին վարչա-պետներ Մուստաֆա Նահասը, Համդի Փաշային, Սաադալա-

Հարին, Ռիադ Սուլճե և Քաուսիկի Արուլ Հուզան: Իրաքի պատվիրակությանը տեղամեկուս էր նաև նախկին վարչապետ Նուրի Սաիդը:

Նախապատրաստական կոմիտեի նստաշրջանը, որ ավելի հաճախ անվանվում է Ալեքսանդրիայի խորհրդածողով, ճըշտորոշեց այն հիմնական սկզբունքները, որոնք դրվելու էին արաբական ապագա միության հիմքում: Խորհրդածողովի մասնակիցները սկզբից նեխեմ ենթադրում էին արաբական ապագա միության ձևը որոշելու հարցին: Փննարկման էին դրված միության մի քանի տարբերակներ: Բացարձակ միության գաղափարը, որը նախատրվում էր իրականացնել կամ կենտրոնաձուլվ մի պետության, կամ էլ արշակայացի նախնապետության ձևով, բայց Սիբրիայի պատվիրակությունից ոչ մեկի կողմից չսպառնացան⁵⁵: Հարցը լուծվեց նաև միությանը միջարաբական մի կազմակերպության միջոցով իրականացնելու առաջարկը բուրբ երկրների կողմից ընդունվելուց հետո էլ: Բանն այն էր, որ խորհրդածողովի մասնակիցներից ոմանք (Իրաք, Սիրիա, Անգորհորդանան) ցանկանում էին, որ ստեղծվելիք կազմակերպությունն ունենա գործադիր իշխանություն, իսկ մյուսները դրան համաձայն չէին⁵⁹: Տարակազմություններ կապին նաև կազմակերպությունում անդամ երկրների ներկայացուցչության և ընդունված որոշումները բոլորի համար պարտադիր լինելու կամ չլինելու հարցերի շուրջ: Ոմանք կողմնակից էին համաժամար հիմունքներով անդամ երկրների ներկայացուցչությունը հաստատելուն, իսկ մյուսներն ուզում էին այն սահմանել ըստ յուրաքանչյուր երկրի բնակչության և բյուջեի: Ոմանք առաջարկում էին ձայների մեծամասնությամբ ընդունված որոշումներն անխտիր բոլոր երկրների համար պարտադիր համարել, ուրիշներն ուզում էին դրանք պարտադիր համարել միայն այն երկրների համար, որոնք կողմ էին քվեարկել այնպի որոշումներին⁶⁰: Վերջիվերջո, այս հարցերի վերաբերյալ խորհրդածողովը հաստատեց եզրույթային վարչապետ նախահիմնականությունում որն առանց որևէ փոփոխության մտցվեց նախապատրաստական կոմիտեի նիստերի արդյունքներին ամփոփող Ալեքսանդրիայի արձանագրության առաջին պարագրաֆում⁶¹: Դրա սկզբում ասվում էր, որ «Արաբական պետությունների լիգա

բաղկացած է լինելու արաբական անկախ երկրներից, որոնք կցանկանան անդամակցել դրան»: Արաբական լիգան ունենալու էր խորհուրդ, որում սկիզբից անգամ երկրները ներկայացվում են հավասար հիմունքներով: Խորհրդի որոշումները պարտադիր էին լինելու միայն դրանց կողմ քվեարկած երկրների համար: Սակայն, նեխեմ էին կիզախ անգամ երկու երկրների միջև որևէ անհամաձայնություն ծագեր և այդ երկրներն այն կարգավորելու համար դիմելին կիզախ խորհրդին, ապա վերջինիս այդ կարգավորչությամբ ընդունված որոշումը կողմերի համար լինելու էր պարտադիր: Այսպիսով Ալեքսանդրիայի խորհրդածողովը որոշեց արաբական երկրների միջև համագործակցությունն հաստատել միջպետական, ուղիղնալ, համաարաբական մի կազմակերպության միջոցով:

Ալեքսանդրիայի արձանագրության առաջին պարագրաֆը կանխորոշում էր նաև Արաբական լիգայի խորհրդի գործունեության շրջանակները: Նշվում էր, որ խորհուրդը «կողմնակից լինելու իրազորման արաբական երկրների միջև կնքված պայմանագրերը, ինչպես նաև պարբերաբար հանդիպումներ կազմակերպել» նրանց միջև հարաբերություններն ամրապնդելու, քաղաքական քայլեր համակարգելու... բուրբ միջոցներով նրանց անկախությունն ու սուվերենությունը որևէ աղբյուրից պաշտպանելու և ընդհանրապես արաբական երկրների գործերը քննարկելու համար: Նախատեսվում էր նաև ստեղծել մի «Էկոլոգիան» կոմիտե, որը կորոշեր խորհուրդի ստատուսը և շեքենարիքի այն քաղաքական հարցեր, որոնց շուրջ կարելի է արաբական երկրների միջև պայմանագրեր կնքել: Խորհրդին իրավունք էր վերապահվելու միջնորդություն կատարել կիզախ անդամների, ինչպես նաև նրանցից մեկի և մի օտար երկրի միջև պատերազմի մտանք ծագելու դեպքում: Կիզախ անդամներին արգելվում էր միմյանց միջև առաջացած տարաձայնությունները լուծել ուժի գործադրումով, ինչպես նաև վարել այնպիսի քաղաքականություն, որը կվնասեր կիզախի կամ նրա անդամներից մեկին: Ալեքսանդրիայի արձանագրության առաջին պարագրաֆի այս դրույթները վկայում էին, որ իմպերիալիստական երկրների անկախներին հակառակ, Արաբական լիգան ա-

տաշին հերթին քաղաքական զեր կատարող մի մարմին էր լինելու:

Այնքանազորիայի արձանագրության երկրորդ պարագրաֆի համաձայն արաբական համագործակցությունը տարածվելու էր նաև տնտեսության, ֆինանսների, հաղորդակցությունների մշակութային, քաղաքացիական, առողջապահության և սոցիալական ասպարեզներում:

Համաձայնելով այդպիսի ասպագա միությունը միջպետական մի կազմակերպության միջոցով իրականացնելու զաջմիտքին, տարբեր նկատույններով արաբական ավելի սերտ միության կողմնակիցները՝ Սիրիան, Անգոնորդաններ և Իրաքը, չէին հրաժարվում իրենց նախնական տնտեսական և պաշտպան իրականացնելու հույսից: Իրաքի նախկին վարչապետ Նուրի Մախթ Այնբրան Այնբրանի խորհրդածողովում էլ արծաժոց «ՄՆԸ Սիրիայի» հարցը: Այդ նախագիծն օրակարգում մտցնելիս հաշվառանների ներկայացուցիչները ակնկալում էին, որ սիրիական պատվիրակությունն իրենց հետ միացյալ ճակատով հանդես կգա Իրա պատճառն այն էր, որ Սիրիայի թեկուզ վերապահումով «ՄՆԸ Սիրիայի» օգտին հանդես գայն ու նրա այբարտան ավելի սերտ միության կողմնակից լինելը երանք մեկնարանուն էին որպես սիրիական կառավարության պրոպագանդային գիրքորոշման արտահայտություն: Սակայն իրաքահանրապետության հույսերը շարժարարան: Խորհրդածողովում սիրիական պատվիրակությունը հանրապետական վարչակարգի պահպանումով պայմանավորվելուց բացի նշեց, որ Անգոնորդանների և Պաղեստինի անգիրիական մտադրատյան տրեպատնության տակ գտնվելու պայմաններում խնդրել ատարակ նախագծի քննարկում անժամանակ ¹⁰²: Այլ խորով, սիրիական կողմը դեմ էր արտահայտվում «ՄՆԸ Սիրիայի» նախագիծը անգլո-հաշման տարերակով իրականացնելուն: Փորձելով հարցը վահույնց ցուր քերել, Մախթ ասպագան ասպագան ասպագան կոմիտեի նստաշրջանը զոնե զոնե իր տեսակետը բերհանրապետ արաբական ավելի սերտ մի միության հարց վերաբերյալ: Վերջվերջը որոշվեց Այնբրանգրիայի արձանագրությունում մտցնել երրորդ պարագրաֆը, որում նշվում էր

«Ռեճումեակոմիտեի ընդունելով այս ասպան քայլը, կոմիտեն հույս ունի, որ ասպագայում արաբական երկրներն այն կամ պայմաններն այլ քայլերով ևս...: Նուրի Մախթը ցանկանում էր այս պարագրաֆին օգտագործել ոչ միայն «ՄՆԸ Սիրիայի» նախագիծն իրականացնելու համար: Նա նաև հույս ուներ զրա միջոցով հասնել լիզայի ընդարձակմանն ի հաշիվ Քուրբայի, Աֆղանստանի և Իրանի, այդպիսով այն զարձանելով մերձավորարևելյան մի կազմակերպություն¹⁰³:

Այնքանազորիայի արձանագրության չորրորդ պարագրաֆը վերաբերում էր իրանական Սիրիայի ասպագրով մտցված այդ պարագրաֆում խորհրդածողովի մասնակից երկրները հայտարարում էին, որ իրենց ձևանշում են իրանների անկախությունը և ասարաքային ամբողջականությունը, բայց որում շեշտում էին, որ իրենք զրա անում են հենվելով իրանների խորհրդարանի կողմից միաձայնորեն հաստատված 1243 թ. հոկտեմբերի 7-ի ակտի քաղաքական գիծ անցնացնելու մտադրության անկախելու կառավարական հայտարարության վրա: Սրանով ասպագա Արաբական լիգային անգամները ցույց էին տալիս, որ իրենց իրանների անկախությունը դիտում են որպես լիգանանցիների ձևը բերած նվաճում և այն չնկ կպայում այդ հարցում Ֆրանսիայի դիրքորոշման հետ: Բացի այդ, այս պարագրաֆով իրանների սահմանները ստանում էին համաարաբական ճանաչում, ինչը նույնպես կարևոր էր զրանց օրինականության հարցի շուրջ առկալի ցույցները զազարնցնելու ատումով: Եվ վերջապես պարագրաֆը մի անգամ ևս բնագծում էր հիմնադրվելիք Արաբական լիգայի միջկետական, սեղիտալ լինելը, որով և ջրում էր ասպագա միությունում իրանների ինքնուրույնության վերացման վերաբերյալ լիգանական հասարակական որոշ շրջանակների տնեցած մտավախությունները:

Հակառակ նոգոնի ընդգրկմազորության, Այնբրանգրիայի խորհրդածողովը քննարկեց նաև Պաղեստինում տիրող իրաքություն հարցը: Խորհրդածողովի ավարտից հետո հրապարակված հաղորդագրությունում նստաշրջանի մասնակիցները որոշում էին պաղեստինյան արաբների ներկայացուցիչ Մուսա ալ Ալամիի ներկայությունը և նշում, որ արաբական երկրները հատուկ նշանակություն են տալիս սեղալը

երկրի գործին⁵⁴։ Այլընտնդիրի արձանագրությունում Պաղեստինին էր վերաբերում հինգերորդ պարագրաֆը։ Այնտեղ ասվում էր, որ «Պաղեստինը արաբական երկրների կարևոր մասն է, և որ արաբների իրավունքներն այնտեղ չեն կարող ոտնահարվել առանց արաբական երկրների խաղաղությունը վտանգելու»։ Այսինքն էր նաև, որ «Երևական ներգաղթը զարգանքն է, արաբներին պատկանող հողերը պաշտպանելու և Պաղեստինին անկախություն տալու վերաբերյալ Մեծ Երիտասարդի ստանձնած պատմավորությունները՝ իրականացվելու դեպքում կնպաստեն իրագործման և անվտանգության ամրապնդմանը»։ Այսպիսով, արաբական երկրները պաշտպանում էին 1939 թ. անգլիական կառավարության Ապտառի գրքի դրուժնաբեր Պաղեստինի հարցի վերաբերյալ Ալեքսանդրիայի խորհրդածրոջում մասնակիցները գտնում էին, որ եվրոպական հրեաների հարցը պետք չէ շփոթել սիոնիզմի հետ և դեմ էին արտահայտվում նրանց հարցը «մի նոր անարդարացություն» լուծելուն, որի զուգընթաց կզտանա Պաղեստինի արաբները...»։ Խորհրդածրոջով ժամանակ Մուսա ալ Ալամին առաջարկեց ստեղծել «Արաբական ազգային ֆոնդ»՝ Պաղեստինի արաբներին պատկանող հողերը փրկելու համար սիոնիստական ոտնձգություններից⁵⁵։ Արձանագրությունում ասվում էր, որ այդ հարցը տեսնասական ու ֆինանսական հարցերի ենթաժողովում նախնական քննարկման ենթարկելուց հետո կըզով նախապատրաստական կոմիտեի առաջիկա նստաշրջանի օրակարգում։

Այլընտնդիրի արձանագրության շորթորդ և հինգերորդ պարագրաֆները փաստորեն նույն արձանագրության առաջին պարագրաֆի դրույթների իրազորման առաջին փորձերն էին՝ ե՛վ այս հանգանակները, և՛ Այլընտնդիրի խորհրդածրոջի հրավիրման փաստն ու նրա ընթացքը վկայում են, որ 1944 թ. կեսրից արաբական միություն ստեղծելու շարժումը հիմնականում ընթանում էր ոչ միայն օտարերկրյա տերությունների, մասնավորապես Անգլիայի կամքին հակառակ, այլ նաև դուրս էր եկել նրանց վերահսկողության տակից։ Այս կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում թեկուզ թուղքի անդրադառնալ կրպաչի ստեղծման գործում լոնդոնի «Ներքոման» խնդրին։ Սովետական արևելագիտա-

կան զբաղմունքի մեջ հաճախ այն տեսակետն է արտահայտվել, որ Անգլիան պաշտպանում էր կրպաչի ստեղծման գործը, ձգտելով արաբական միության գաղափարը ծառայեցնել իր շահերին⁵⁶։ Այս տեսակետը թափանցել է նաև վերջերս լույս տեսած «Ջարգացող երկրների ժամանակակից աշխարհում. նոր ուժ համաշխարհային քաղաքականությունում և կոնոմիսիկայում» և «Ջարգացող երկրների արտաքին քաղաքականությունը, ընդհանուր պրոբլեմներ և հետազոտման մեթոդաբանություն» տրված գրքում մենագրությունների էջերը⁵⁷։ Մինչդեռ իրականում լոնդոնը, վախճանալով ստեղծվող արաբական միջպետական կազմակերպության քաղաքական անվերահսկելի ուղղվածությունը, նաև ոչ մի լավ բան չափնաչելով Պաղեստինի հարցում նրա անակնկալներով հողակալությունից, սկսած 1944 թ., ինչպես վերևում հիշատակված փաստերն են վկայում, ամեն կերպ շանում էր խոչընդոտել Արաբական լիգայի ստեղծումը։

Այլընտնդիրի արձանագրությունը 1944 թ. հոկտեմբերի 7-ին ստորագրվեց խորհրդածրոջի մասնակից յոթ երկրներից՝ միայն հինգի՝ Եգիպտոսի, Իրաքի, Սիրիայի, Անգլիայի և Լիբանանի և կրանանի կողմից, քանի որ սաուդական և էմենյան պառլիամենտները համապատասխան իրավասություններ չունեին։ Սաուդյան Արաբիան և Եմենը արձանագրությունը հաստատելից համապատասխանաբար 1945 թ. հունվարի 7-ին և փետրվարի 5-ին։

Արաբական ազգային միության հիմնական սկզբունքները, ճանկապես միության ինչ ձևով իրականացնելու հարցը Այլընտնդիրի խորհրդածրոջում որոշելուց հետո թվում էր, որ արաբական երկրներն առանց որևէ զմլարության կմշակեն Արաբական լիգայի ստատուսը և այն արաբորեն կյանքի կոնկրետ նվազակալ, ինչպես Արաբական լիգայի պակասի մշակմանը նվիրված քաղաքական ենթահանձնաժողովի նստաշրջանում, որը կազմեիս գումարվեց 1945 թ. փետրվարի 14-ից մարտի 3-ը, այնպես էլ զրանից առաջ ու հետո հարկ եղավ հաղթահարել տարբեր բնույթի մի շարք խոչընդոտներ։

Առաջին խոչընդոտը կապված էր արաբական միության հարցում Սաուդյան Արաբիայի գրեթե ամբողջական հետ։ 1945 թ. հունվարի սկզբին, Այլընտնդիրի արձանա-

գրութիւնը հաստատելու հետ մեկտեղ, Ստուգյան Արարիան, որքան էլ դա տարբրեանկ թիւս, առաջ քաշեց արարական ապագա միութիւնը արարական անկախ երկիրների միջև կերբ-վկիբ մի դաշինքի միջոցով իրականացնելու գաղափարը: Այդ դաշինքն ունենալու էր ինքնապաշտպանական բնույթ և ուղղված չէր լինելու մի այլ երկրի կամ երկրների խմբի դեմ: Ռիազն անհրաժեշտ էր համարում նաև, որ միութեան բոլոր անդամները ճանաչելին Միջրիախ և Լիբանանի անկախութիւնը և Երևանը հանրագիտական վարակարգորէր: Բացի այդ նախատեսվում էր, որ Մասուդյան Արարիային իրավունք վերապահվի շմանակեցել միութեան շրջանակներում ձեռնարկվող օրենսդրական և լուսավորական նախաձեռնումներին, որոնք կարող էին անհարկ լինել իսլամի սկզբունքներին⁶⁸, Կարելի է այն հետևութիւնն անել, որ Ռիազը, ընդհանրապես կողմնակից լինելով արարական միութեանը, ցանկանում էր դա իրականացված տեսնել ոչ թէ ոեղիոնալ կազմակերպութեան, այլ արարական երկրների միջև կնքված մի դաշինքի ձևով: Մակյան հարցի նկատմամբ այսպիսի մտտեցումը կարող էր հանդեպնել միութեան դործը դուրս բերելու ձգվածներ: Միութեան ստուգական տարբրակին, որն ըստ խոթանի գրական պետք է համարել, Լեոնդոսի քիչադրանքով ամենայն հավանականությամբ կընդգրկմանային հաշիմյանները, քանի որ Ազգիան բացասաբար էր վերաբրում ստուգական նախաձեռնութեանը⁶⁹: Այն ավելորդ մտավախութիւնն կարող էր առաջացնել նաև իրանական քաղաքական որոշ շրջանակներում: Ազկելոզ այս բարդութիւններից կարելի է խուսափել, եթև վերոհիշյալ առաջարկները պարզորոշ ներկայացվեն ոչ թէ որպիս Ալեքսանդրիայի արձանագրութիւնում անոչ առաջ քաշված Արարական լիգայի գաղափարի այլընտրանք, այլ իր բնույթ հենց Արարական լիգայի շրջանակներում իրականացվելիք միջոցառումների վերաբրելու նկատառումներ: Ռիազի դիրքորոշումն այդպիսի փոփոխման հնարավոր կցով հասնել նրկպատմի թագավոր Շարուհի 1945 թ. հունվարի վերջին Սաուդյան Արարիա կատարած այցելութեան ընթացքում: Դա անպիսկան իրագեկ ժՄայսա թերթը որակեց որպես «որոշ չափով նման Լիգայի վերջնական ստեղծման կրաշխիքին»⁷⁰:

1945 թ. փետրվարի 14-ին Կահիրեում բացվեց Արարական լիգայի պակտը մշակող քաղաքական ենթահանձնաժողովի նստաշրջանը: Դրան մասնակցում էին Նզիպուտտի, Սիրիայի, Լիբանանի, Անդրհորդանանի պատվիրակութիւնները՝ արտաքին գործերի մինիստրները, ինչպես նաև սաուդական և իրաքյան պատվիրակութիւնները՝ սաուդական զիվանդանայի ազ դին Ջիրբելիի և Իրաքի նախկին վարչապետ Նուրի Մահդի զվարակրութեամբ: Նստաշրջանին չէր մասնակցում Եմենը: Պաղեստինի արաբներին ներկայացնում էր Մուսա ալ Ալային: Նստաշրջանի քննարկմանը ներկայացված էին Արարական պետութիւնների լիգայի պակտի իրաքյան և Լիբանանյան նախագծերը, ինչպես նաև Լիգայի նկատմամբ Սաուդյան Արարիայի վերոհիշյալ նկատառումները: Նստաշրջանի սկզբում սաուդական պակտիբանկը հայտարարեց, որ իր երկրի համար սկզբունքային նշանակութիւն ունի արարական ապագա միութիւնում Միջրիախ և Լիբանանի անկախութեան պահպանումը և Լիգայի անգամների կոզմից «որեւէ արարական երկրի տարածքի վրա կատարված ցանկացած ագրեսիայի դեմ միասնաբար հանդես գալու վերաբրելու պարտականութեան քննրումումը»⁷¹:

Արարական լիգայի պակտի մշակման համար հրավիրված քաղաքական ենթահանձնաժողովի նստաշրջանն հիմնականում հաստատեց այն դրույթները, որոնք արդեն կային Ալեքսանդրիայի արձանագրութիւնում, ինչպես նաև ավելացրեց որոշ նոր կետեր: Այս նստաշրջանում մշակված պակտի նախագծի և 1945 թ. մարտի 22-ին համաարարական կոնգրեսի կողմից հաստատված պակտի միջև կան որոշ տարբրութիւններ, որոնք հիմնականում կապված են հոգվածների քանակի, դրանք հերթափոխութեան ու խմբագրման հետ⁷²: Լիգայի պակտի վերլուծումը կատարվելու է ըստ նրա հաստատված տարբրակի: Միակ էական տարբրութեան մասին, որ կա դրանք միջև, ստորև առանձին կնշվի:

Քաղաքական ենթահանձնաժողովը հաստատեց Ալեքսանդրիայի արձանագրութեան այն դրույթը, ըստ որի Լիգան բաղկացած էր լինելու միայն արարական անկախ երկրներից (Արարական լիգայի պակտի հոգված 1-ին): Որոշ տարակախութիւններ առաջացան նույն հոգվածի երկրորդ մա-

սի շուրջ, որը վերաբերում էր ապագայում արարական նոր-
անկախ որևէ երկրի կիցային անդամակցելու ձևակերպում-
ներին: Ըստ իրարջան նախագծի, արարական ամեն մի ան-
կախ երկրի կարող էր այդ կաշմանկերպության անդամ դառ-
նալ այդ մասին տեղյակ պահելով կիցայի Քարտուղարու-
թյանն ու մասնակից երկրներին⁷³: կրթանանյան նախագիծը
անհրաժեշտ էր համարում նաև, որ որևէ երկրի կիցա ընդուն-
վելու հարցի աղթիվ կայացվի խորհրդի հատուկ որոշում⁷⁴:
Նախապատմությունը սրվեց լիբանանյան ձևակերպմանը,
որը և դրվեց կիցայի պակտի 1-ին հոդվածի երկրորդ մասի
հիմքում:

Ըստ պակտի 2-րդ հոդվածի, կիցայի նպատակը լինելու
էր «ուժեղացնել կապերը անգամ երկրների միջև, համակերպ-
վել նրանց բաղաբանական ծրագրերի» միջնայն միջև համա-
գործակցություն հաստատելու համար, պահպանել նրանց
անկախությունն ու սովորենությունը...»: Նույն հոդվածով
նախատեսվում էին նաև այն ընագավաճները, որոնցում
ժամկվելու էր միջարարական համագործակցությունը: Գրանց
էին. 1. Տնտեսության և ֆինանսների, 2. հաղորդակցություն-
ների, 3. մշակույթի, 4. քաղաքացիական, 5. սոցիալական,
6. կրթն ոլորտները: Առաջ անցնելով նշելն, որ պակտի 4-րդ
հոդվածով նախատեսվում էր խորհրդի կից համապատաս-
խան կոմիտեներ ստեղծել՝ վերահիշյալ յուրաքանչյուր աս-
պարեղում համագործակցությունը համակարգելու համար:
Հաշվի առնելով Մատուան Արաբիայի նկատառումը իսլամի
անդրունների հակառոդ ձեռնարկումների ըմանակցելու
վերաբերյալ, նպատակահամար համարվեց պակտի 2-րդ
հոդվածում նշել, որ «...անգամ երկրների միջև համագոր-
ծակցությունը ծավալվելու է նկատի ունենալով յուրաքանչյու-
րը երկրի վարչակարգը և դրանում գոյություն ունեցող պայ-
մանները»:

Արաբական լիգայի պակտի 3-րդ հոդվածի համաձայն
կիցան ունենալու էր խորհուրդ, որում «յուրաքանչյուր երկրի
ունենալու է մեկ ձայն...»: խորհրդի խնդիր էր լինելու «Ե-
րականացնել կիցայի նպատակները, վերահսկել անգամ եր-
կրների միջև կնքվելիք պայմանագրերի իրականացումը»:
Ըստ պակտի 8-րդ հոդվածի, խորհրդի որոշումները պարտա-

գիր էին լինելու միայն այն երկրների համար, որոնք կողմ
էին քվեարկել տվյալ որոշմանը: Նույն հոդվածը, դարձյալ
կենդիվ սատրական վերահիշյալ նկատառումից, նախատե-
նում էր, որ «խորհրդի որոշումները յուրաքանչյուր երկրում
իրականացվելու են բաւ այդ երկրի ներքին օրենքներն»:
Խորհուրդը զումարվելու էր տարեկան երկու անգամ՝ մարտ
և հոկտեմբեր ամիսներին, իսկ խորհրդի արտահերթ նիստ
կարող էր տեղի ունենալ կիցայի անգամ երկու երկրների
պահանջով (հոդված 11): Խորհրդի նիստում հերթով նախա-
գահելու էին անգամ երկրների ներկայացուցիչները (հոդված
15): Կահիրեն լինելու էր նրաբական լիգայի մշտական
նստավայրը, սակայն խորհրդի նստաշրջանները կարող էին
անել ունենալ նաև այլ երկրներում (հոդված 10):

Արաբական լիգան ունենալու էր Գլխավոր բարտուղա-
րություն՝ բաղկացած գլխավոր բարտուղարից, նրա տեղա-
կաներից և այլ պաշտոնյաներից: Գլխավոր բարտուղարը
ընտրվելու էր խորհրդի անդամների ձայների երկու-երրորդի
մեծամասնությամբ (հոդված 12): Գլխավոր բարտուղարը
պատրաստելու էր կիցայի տարեկան բյուջեի նախագիծը և
այն ներկայացնելու էր խորհրդի հաստատմանը (հոդված 13):
Գլխավոր բարտուղարության պաշտոնյաներ նշանակելիս,
կիցայի բյուջեն հաստատելիս, խորհրդի, նրան կից կոմիտե-
ներ և Գլխավոր բարտուղարության ներքին աշխատակարգը
որոշելիս, ինչպես նաև նիստերի հետաձգման վերաբերյալ
հարցերը վճռելիս բավարար էր խորհրդի անդամների ձայ-
ների պարզ մեծամասնությունը (հոդված 16):

Եթե որևէ երկրի ցանկանար դուրս գալ Արաբական լի-
գայից, ապա նա այդ մասին մեկ տարի առաջ պետք է տեղ-
յակ պահեր կիցայի խորհրդին: Միաժամանակ խորհուրդը
իրավասու էր կիցայից հեռացնել այն երկրին, որը «չէր կա-
տարի պակտից բխող իր պարականությունները»: Վերջին
գնպքում խորհրդի որոշումը պետք է լիներ միաձայն, առանց
հաշվի առնելու խնդր առարկա երկրի ձայնը (հոդված
18):

Արաբական լիգայի պակտը փոփոխության ենթարկելու
համար պահանջվում էր խորհրդի անգամների ձայների եր-
կու երրորդի մեծամասնություն (հոդված 19):

Բավականին զմիարժեքունենր առաջացան կիզայի պակ-
տի 5-րդ հոդվածի ձևակերպման ժամանակ, որը վերաբերում
էր կիզայի անդամ երկրների, ինչպես նաև անդամ երկրնե-
րից որևէ մեկի և մի օտար երկրի միջև ծագած տարաձայնու-
թյունների կարգավորմանը: Կիզայի պակտի քե՛ն իրարյան,
քե՛ն լիբանանյան նախագծերում, ինչպես նաև վերոհիշյալ
ստուգական հուշագրում վե՛ճերը ու՛ժի միջոցով լուծելը հա-
մարվում էր անմիջապես ինչ այս դրույթն անոց որևէ բար-
դուրյան մտցվեց 5-րդ հոդվածում: Հիշված երեք փա-
ստավթերում էլ նախատեսվում էր, որ տարաձայնություն-
ների կարգավորման հարցում կիզան կատարի միջնորդի կամ
արբիտրի գե՛ր, սակայն դրանցում տարբեր կերպ էին սահ-
մանվում այդ հարցում հորհրդի ունենալի իրավասության
ըջանակները: Ստուգական հուշագրում անաշարկվում էր, որ
եթե որևէ երկիր չենթարկվի արբիտրածի որոշմանը, ապա
մյուս արաբական երկրները խորհրդակցելու են և ստիպելու
են նրան ընդունել այն, ինչը որ հիշտ է: Քաղաքական են-
թանմոտիկ նստաշրջանի ընթացքում Իրաքը ներկայացրեց
երկու հուշագիր, որոնցում ճշգրտված էր Բաղդադի դիրքը-
որումը այս և այլ վիճելի հարցերի վերաբերյալ⁶⁵: Իրաքը
գե՛ն էր արտահայտվում կիզայի միջանտոմիայնը միջև նրա
ստեղծումը կնքված պայմանագրերի հետ կապված հարցե-
րում, ինչպես նաև գտնում էր, որ որևէ վեճի կիզան պետք է
միջամտի միայն վիճող երկու կողմերի համաձայնությամբ:
Վեճերի կարգավորման հարցում կիզայի խորհրդի իրավասու-
թյունները որոշ չափով սահմանափակված էին նաև պակտի
լիբանանյան նախագծում, ըստ որի՝ հորհուրը արբիտրի
իրավունք չէր ունենալու այն դեպքում, երբ տարաձայնու-
թյունները վերաբերում էին որևէ անդամ երկրի անկախու-
թյանը և տարածքային ամբողջականությանը: Քաղաքական
կոմիտեն հաստատեց 5-րդ հոդվածի մի փոփոխողական
տարբերակ, ըստ որի՝ հորհուրը կարգավորելու նպատակով
միջանտոմի էր այն տարաձայնությունների միայն, որոնք
լուծելու համար վիճող կողմերը դիմելու էին իրեն, և որոնք
չէին վերաբերում անդամ որևէ երկրի անկախությանն ու
տարածքային ամբողջականությանը: 1945 թ. մարտի 17-ին և
19-ին տեղի ունեցած Համաարաբական կոնգրեսի հրավիր-

ման նախապատրաստական կոմիտեի նիստերի ժամանակ
արդվեց 5-րդ հոդվածում դրույթ ավելացնել այն մասին, որ
վեճերի կարգավորման հարցում հորհրդի որոշումները ըն-
դունվեն ձայների պարզ մեծամասնությամբ: Նախապատ-
րաստական կոմիտեն նաև նպատակահարմար գտավ, որ
վիճող կողմերը շմանակցեն որոշումների ընդունմանը և
որոշումներն ունենան պարտադիր բնույթ⁶⁶: Սա միակ էական
տարբերությունն էր քաղաքական ենթահամաձայնության հաս-
տատած պակտի նախագծի և մարտի 22-ին կնքված պակտի
միջև: Պակտի 5-րդ հոդվածի համաձայն հորհուրը կարող էր
միջամտել նաև կիզայի անդամ երկրի և մի օտար երկրի
միջև տարաձայնությունների կարգավորմանը, եթե վիճող
կողմերն այդպիսի խնդրանքով դիմեն իրեն:

Քաղաքական լիզայի պակտի 6-րդ հոդվածով նախատես-
վում էր, որ եթե կիզայի անդամ որևէ երկիր ազդեալայի
ենթարկվի, ապա նա իրավունք է ունենալու պահանջել հոր-
հրդի հրավիրումը արտակարգ նստաշրջանի, որը միաձայ-
նորեն որոշելու է, թե ինչ միջոցներ են ձեռնարկվելու ազդե-
ալորի դեմ: Եթե ազդեսորը կիզայի անդամ լիներ, ապա նրա
ձայնը քվեարկության ժամանակ հավելյալ չէր անվելու:

Կիզայի յուրաքանչյուր անդամ պարտավորվում էր հար-
ցել անդամ մյուս երկիրներին հաստատված վարչակարգերը
և ձեռնպահ մնալ դրանք փոխելու ուղղությամբ որևէ բայլ
ձեռնարկելուց (հոդված 8): Կիզայի պակտի այս հոդվածն
արտացոլում էր ստուգական հուշագրի այն կետի, որը պա-
հանջում էր միության անդամների կողմից Մերիայի ու Լի-
բանոսի անկախության ու դրանց հանրապետական վարչա-
կարգերի անկեղբարեան ձեռնադրումը: Հատկանշական է, որ
կիզայի պակտի կե՛ման նախաշեմին, քաղաքական ենթա-
հանձնաժողովի նստաշրջանում դրա դեմ շատերից հետո,
Իրաքը ձգտում էր հանել այս հոդվածը պակտից հանելուն:
Մարտի 11-ի մի հուշագրում Իրաքի կառավարությունը սե-
ղիկացնում էր, որ կառավարման ձևի ընտրության հարցը
վերաբերում է միայն տվյալ երկրի ժողովրդին և փաստորեն
պահանջում էր 8-րդ հոդվածում բավարարվել միայն այս
դրույթի շարադրմանը⁶⁷: Սակայն իրաքյան այս քայլը ան-
հետևանք մնաց: Կիզայի պակտի 8-րդ հոդվածի երևան գալը

ալլ էերզ և բացատրվում «Մերձավոր և Միջին արևելքի կրկրների արտաքին բաղաբաղակառուցումը» գրքում: Հնդհանուր առձամբ իրավացիորեն նշելով, որ «Յեզիպոսի, Իրաքի, Անգրճորդանանի, Սաուդյան Արաբիայի և Եմենի միապետական վարչակարգերի միապետական էությունը ընկած էր նրանց փոխադարձ հարաբերությունների ինչպես կենտրոնաձիգ, այնպես էլ կենտրոնախույս նկրտումների հիմքում», Տեղինակների ընկերակցության անհավանական մեջ գրելով, որ «Ինքնակառուցությունների պահպանման ընդհանուր նպատակը հնարավոր դարձրեց Արաբական պետությունների լիգայի ստեղծումը, քանի որ նրա պակասում պոլություն ունեցող վարչակարգերի անասանությունը համարվեց որպես կիզայի ստեղծման նախապայմանություն մեկը»⁷⁵: Խնդրո առարկա 8-րդ հոդվածը, ինչպես տեսանք, բուրբուրվի ալլ նկատառումների գրքում մտավ կիզայի պակասի մեջ: Ավելին, անգլիսական Իրաքը ձգտում էր այդ հոդվածը պակասից դուրս գցել: Ինչ վերաբերում է ինքնակառուցությունների պահպանման հանգամանքին, ապա դրա դերը կիզայի ստեղծման գործում, մեր Զամոզումար, էական չի եղել:

Կիզայի պակասի 9-րդ հոդվածում նշվում էր, որ նրան կիզայի անդամ երկու երկրներ ցանկանան հաստատել ավելի սերտ հարաբերություններ, քան պակասով է նախատեսված, ապա կարող են դրա վերաբերյալ լրացուցիչ պայմանագրեր կնքել: Շուտի հոդվածում ասվում էր նաև, որ կիզայի անդամ երկրների հոդվածների, ինչպես նաև կիզայի որևէ անդամի և մի օտար երկրի միջև կնքված և կնքվելիք պայմանագրերը չեն վերաբերում կիզայի մյուս անդամներին: Պակտի 17-րդ հոդվածով նախատեսվում էր, որ անդամ երկրները քայքայում իրենց կնքելիք բոլոր պայմանագրերի պատճենները ներկայացնեն կիզայի զլխավոր քարտուղարությանը:

Այնքանգործիայի արձանագրության միակ դրույթը, որ բացակայում էր կիզայի պակասում, դա որևէ անդամի կողմից կիզային և նրա անդամներին վնասող արտաքին բաղաբաղական նույնիսկ շվարհուր վերաբերյալ գրույթն էր: Քաղաքական ենթահանձնաժողովի քննարկմանը ներկայացված պակասի իրաբանական նախագծում այս դրույթի վերաբերյալ հատուկ հոդված կար: Պետք է ենթադրել, որ այն պակասի մեջ շմտցվեց

այն պարզ պատճառով, որ արաբական երկրների միջև համապայնեցված քաղաքականություն վարելու նպատակով ստեղծվող կիզայի պակասում այդպիսի հատուկ հոդվածի գոյությունը արաբական երկրների կողմից ավելորդ համարվեց: Է. Քուման մի փոքր ծայրահեղության մեջ ընկնելով գտնում է, որ այս, ինչպես նաև այլ կետերում կիզայի պակասը «էականորեն տարբերվում է» և նույնիսկ «ճանաչել է... Այնքանգործիայի արձանագրության դրբերից»⁷⁶:

Բացի վերոնշյալ վերոնշյալ հոդվածներից, պակաս ուներ նաև երեք հավելված, որոնք վերաբերում էին Պաղեստինին, ոչ կիզայի անդամ արաբական երկրների հետ համագործակցությանը և կիզայի զլխավոր քարտուղարի նշանակմանը: Պաղեստինին վերաբերող հավելվածում նշվում էր, որ նրա պոլությունը, ինչպես նաև դե-յուրե նրա ազգային անկախությունը չեն կարող ըննարկման առարկա լինել, ինչպես որևէ այլ արաբական երկրի անկախությունը: Միաժամանակ կիզայի խորհրդին հանձնարարվում էր Պաղեստինից ընտրել մի ներկայացուցիչ, որը խորհրդում կներկայացներ պաղեստինյան արարներին: Անկախություն չնվաճած արաբական երկրներից միայն Պաղեստինի նկատմամբ պայպիս բացառություն կատարելով, կիզայի անգամները կարող են ընդգծում լին այդ երկրի և նրան հուզող հարցերի առանձնահատուկ նշանակությունը արաբական աշխարհի համար: Երկրորդ հավելվածում ասվում էր, որ Արաբական կիզայի խորհուրդը պակասելու է անկախություն չնվաճած արաբական երկրների նկրտումների իրականացմանը և ձգտելու է «բարեմիջել նրանց քայահոլությունն ու ստատուսը՝ օգտագործելով իր ստանդարտության տակ եղած բոլոր քաղաքական միջոցները»: Միաժամանակ խորհրդին հանձնարարվում էր ամեն ինչ անել՝ իրականացնելու այդ երկրների մասնակցությունը կիզայի կոմիտեների աշխատանքներին:

Կիզայի պակասի այս հավելվածները կարելի է համարել նրա առաջին, ճիշտ է՝ փոքր ինչ վեհերում, բայց բոլոր դեպքերում քաղաքական ակտիվ դիրքորոշման մասին վիշտող բացկրը: Դրանց նշանակությունը ավելի է ակնբայս գտնում, երբ հաշվի է առնվում այն, որ անգլիական և ֆրանսիական

սիական շրջանները կուլինսկիի ետևում շանք շէին խնայում այդ հալածվածները պալատից հանելու համար⁵⁰։

Պակոսի էրրորդ հավելվածով Արարական լիզայի առաջին պլանավոր քարտուղար էր նշանակվում Արդառուհիման Ազգամբ, որը մինչ այդ Ազիպատի արտաքին գործերի մինիստրության արաբական երկրների վարչության անօրենն էր։

Արարական պետությունների լիզայի պակտը ստորագրվեց Կահիրեում 1945 թ. մարտի 22-ին Սիրիայի, Անգլո-որդանանի, Իրազի, Սաուդյան Արաբիայի, Լիբանանի և Եգիպտոսի ներկայացուցիչների կողմից։ Բացի Սաուդյան Արաբիայից, մնացած արաբական պետությունները ներկայացված էին իրենց վարչապետներով։ Մայիսի 5-ին պակտն ստորագրեց նաև Եմենը։

Պակտը ուժի մեջ մտավ մայիսի 10-ին։ Արարական լիզայի կառուցվածքն սկզբնական շրջանում կանխորոշվում էր միայն նրա պակտով։ Սակայն, ԱՄՆ կապուր հետագա տարիներին փոշիոսություն չլրեց, այս պահի կառուցվածքը շատ բանով փոխվեց։ Նախ Լիզայի խորհրդի 1946 թ. նոյեմբերի 30-ի որոշումով ստեղծվեց Լիզայի բաղադրական կոմիտեն, որը հետագայում դարձավ խորհրդից հետո Լիզայի ամենակարևոր մարմինը։ Լիզայի աշխատանքը կարգավորելու համար ընդունվեցին նաև մի շարք օրինագծեր։ 1951 թ. զեկտեմբերին հաստատվեց խորհրդի աշխատակարգի վերաբերյալ օրինագիծը։ 1951 թ. հոկտեմբերին նույնպիսի օրինագիծ ընդունվեց նաև Լիզայի կոմիտեների, իսկ 1953 թ. մայիսին՝ Գլխավոր քարտուղարության վերաբերյալ⁵¹։ Այս օրինագիծերը զգալիորեն փոխեցին Լիզայի կառուցվածքը, ինչպես նաև որոշ կրթումներ մտցրեցին խորհրդի և կոմիտեների աշխատակարգերի ճարտարում։ Այսպես, ԱՄՆ ըստ Լիզայի պակտի 4-րդ հոդվածի նրա կազմում լինելու էր վեց կոմիտե, այսպես ըստ խորհրդի աշխատակարգի Լիզան ունենալու էր հինգ կոմիտե. 1. բաղադրական, 2. տնտեսական, 3. սոցիալական և մշակութային, 4. ֆինանսական և վարչական, 5. իրավաբանական։ Կոմիտեների նիստում որոշումներն ընդունվելու էին ձայների պարզ մեծամասնությամբ, սակայն որանք ուժի մեջ էին մտնելու խորհրդի կողմից հաստատվելուց հետո միայն։ Անհրաժեշտության դեպքում կարող էին

կազմվել նոր կոմիտեներ։ Լիզայի խորհրդի նիստերը օրինական էին համարվում նրանում անդամ երկրների մեծամասնության ներկայության դեպքում։

Արարական լիզայի հովանու ներքո կերպիլ են բազմաթիվ տնտեսական, մշակութային, քաղաքական և այլ բնույթի պայմանադրեր։ Լիզայի գործունեության շրջանակներն ընդարձակելու և նրա կառուցվածքի փոփոխման առումով առանձնահատուկ նշանակություն ունի 1950 թ. ապրիլին կնքված Համատեղ պաշտպանության և տնտեսական համագործակցության պայմանագիրը⁵²։ Ըստ այդ պայմանագրի երկրորդ հոդվածի, Լիզայի մեկ կամ ավելի անդամների դեմ կատարված ագրեսիան համարվում էր նրա բոլոր անդամների դեմ կատարված ագրեսիա։ Նույն հոդվածով Լիզայի անդամները պարտավորվում էին դիմել սրբուր միջոցների, այդ թվում նաև զինված ուժերի օգտագործման, ագրեսիայի ներկրված երկրին կամ երկրներին օգնելու, ագրեսիան հետ մղելու, խաղաղությունն ու անվտանգությունը վերականգնելու համար։ Պայմանագրի 6-րդ հոդվածով նախատեսվում էր Լիզայի խորհրդի վերահսկողության ներքո ստեղծել Համատեղ պաշտպանության խորհուրդ՝ բաղկացած անդամ երկրների արտաքին գործերի և ազգային պաշտպանության մինիստրներից։ Այդ խորհրդին կից գործելու էր նաև մշտական ռազմական կոմիտե, որում ներկայացվելու էին զինապետ շտաբների ներկայացուցիչները և որը պետք է համակարգեր անդամ երկրների ռազմական նախագծերը, ինչպես նաև զբաղվեր նրանց զինված ուժերի միասնականացմամբ և համամասն այլ հարցերով։ Համատեղ պաշտպանության խորհրդում ձայների երկու-երրորդի մեծամասնությամբ ընդունված որոշումները պարտադր էին լինելու բոլոր համարի նախատեսվում էր ստեղծել նաև Տնտեսական խորհուրդ, որին ստորադասվելու էր համամասն կոմիտեն։ Պայմանագրի 10-րդ հոդվածը արգելում էր անդամ երկրներին կերել որևէ պայմանագիր, որի ղտվյթները անհամատեղելի կլինեին տվյալ պայմանագրի հետ։

1964 թ. որոշվեց Արարական լիզայի բարձրագույն օրգան համարել արաբական պետությունների ղեկավարների կոնֆերանսները, որոնք գումարվելու էին տարին մեկ ան-

գամ⁵⁵; 1965 թ. սեպտեմբերին կասաբլանկայի կոնֆերանսում ընդունված Արաբական համերաշխության պակտը որոշվեց համարել լիզայի պակտի հավելված:

Լիզայի գոյության ավելի քան քառասուն տարիների ընթացքում բազմաթիվ առաջարկներ են կատարվել այն արաբական ավելի սերտ մի միութամբ (արաբական երկրների ֆեդերացիայով, գործադիր իշխանությամբ օժտված արաբական միությունով և այլն) փոխարինելու վերաբերյալ: Սակայն արաբական երկրների միև ղեռ 40-ական թթ. սկզբին շոշափելի, իսկ մեր օրերում արդեն ավելի ցցուն դարձած հակասություններն ու տարբերությունները, արաբական համագործակցությունը ամբողջ արաբական աշխարհն ընդգրկող մատչարարով առայժմ հնարավոր են դարձնում իրագործել միայն միջպետական ռեզիմնալ մի կազմակերպության՝ Արաբական լիզայի միջոցով:

Արաբական պետությունների լիզայի ստեղծումը կարևոր պատմական իրադարձություն էր արաբական երկրների կյանքում: Հանձին նրա կյանքի կոչվեց մի կազմակերպություն, որը, հենվելով արաբական անկախ պետությունների համագործակցության ու արաբական ամբողջ աշխարհի բազմաբնույթ աշակցության վրա և օգտագործելով պակտով իրեն բնձնված հնարավորությունները, կարող էր էական օժանդակություն ցույց տալ արաբական ժողովուրդների երկրորդ համաշխարհային պատերազմից հետո օրըստօրե հզորացող հակաիմպերիալիստական պայքարին: Լիզայի ստեղծումը վկայում էր, որ արաբական երկրների միասնական շանքերով ավելի հեշտ է լուծել արաբական աշխարհին հուզող շատ և շատ հարցեր: Արաբական լիզայի հետագա գործունեությունը հաստատում է այս դրույթի հիշատակները:

Գ Լ Ո Ւ Մ Ե Ր Կ Ր Ո Ր Դ

ԱՐԱՐԱԿԱՆ ԼԻԳԱՅԻ ԳԵՐԸ ԱՐԱՐԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿԱՍՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴԱՄԱՆ ՀԱՄԱՐ ՄՂԱԾ ԳԱՅՔԱՐՈՒՄ

Արաբական պետությունների լիզան իր գործունեության ընթացքում մեծ ուշադրություն էր դարձնում արաբական երկրների անկախության ամրապնդման գործին: Արաբական պետությունները միջպետական այդ կազմակերպության միջոցով հաճախ էին միասնական քաղաքական կուրս որդեգրում թե՛ արաբական առանձին երկրներին, թե՛ ընդհանրապես իրենց բոլորին վերաբերող հարցերում:

Լիզայի առաջին նստաշրջանը նվիրված էր Լեանտի երկրների՝ Սիրիայի և Լիբանանի անկախության ամրապնդման խնդրին:

Սիրիայի համաշխարհային պատերազմի տարիներին ազգային-ազատագրական շարժումը Սիրիայում և Լիբանանում ծավալվեց նոր թափով: 1943—44 թթ. այդ երկրների հայրենասիրական ուժերը ազգային անկախության նվաճման ուղիով շատ հասան զգալի հաջողությունների: Այդ թվականներին, հակառակ ֆրանսիական զաղթաբարաների ընդդիմադրությանը, Սիրիայի և Լիբանանի սահմանադրություններից հանվեցին ֆրանսիական մանդատի վերաբերող հոդվածները, սեղական կառավարություններին փոխանցվեցին կառավարման մի շարք ֆունկցիաներ:

1944 թ. սկսած Լեանտի երկրներն սկսեցին առաջ քաշել հատուկ զորամասերն իրենց փոխանցելու էական հարցը: Տեղական բնակչությունից հավաքագրված այդ զորամիավորումները փաստորեն «Սիրիայի և Լիբանանի ազգային բա-

եակներն էին», որքան, սակայն, զգտնվում էին ֆրանսիական սպաների հրամանատարության ներքո և ենթարկվում էին կեսնուսում ֆրանսիական ռազմական ուժերի հրամանատարությանը⁹: 1945 թ. մայիսի սկզբին հայտնի դարձավ, որ Ֆրանսիայի ժամանակավոր կառավարությունը հատուկ զորամասերի փոխանցման խնդիրը պայմանավորում է Սիբիաի և Լիբանանի հետ անխրվածակապար առգլական, ստեղծական ու մշակութային պայմանագրերի կնքմամբ: Միամասնական զարթոթարները նոր զորամասեր ուղարկեցին Լիբանան¹⁰: Փարիզի այս քայլերը Սիբիայի և Լիբանանի կառավարությունների կողմից որակվեցին որպես իրենց երկրների պազպանի սուվերենությունը խախտող և անկախության որոն հակասող գործողություններ¹¹:

Մայիսի վերջին տասնօրյակում Սիբիայում փաստորեն Համաժողովրդական պայքար ծավալվեց ֆրանսիական ինչպիսիսների դեմ: Իրենց երկրի անկախության համար պայքարող հայրենասերները դեմ նույնիսկ հրետանի, տանկեր և ինքնաթիռներ էին օգտագործվում: Առանձնակի դամանությունը այդ ընկան Դամասկոսում մայիսի 29—31-ին ֆրանսիական զորամիավորումների ձեռնարկած գործողությունները, որոնց ընթացքում զո՛ւվեց 400 մարդ¹²:

Դեռ մինչ այդ, Սիբիայի և Լիբանանի արտաքին գործերի մեխիստրների մայիսի 27-ին կայացած հանդիպման ժամանակ որոշվեց դիմել Արաբական լիգային՝ խորհրդի արտահերթ նստաշրջան հրավիրելու պահանջով¹³: Բեյրութում և Դամասկոսում հավանարար ակնկալում էին, որ իրենց մղած պայքարի հաջողությանը կնպաստի նաև արաբական երկրների համերաշխության արտահայտումը:

1945 թ. հունիսի 4-ին Կարիբուում քայվեց Լիգայի խորհրդի նստաշրջանը: Անդամ պետությունների մեծ մասի պատվիրակությունները գլխավորում էին վաղապետները Հունիսի 7-ին սկզբի ունեցած 4-րդ նիստից հետո հրապարակվեց խորհրդի որոշումը ֆրանս-լիանոյան ձգնամամի կապակցությամբ: Դրա առաջին կետում Ֆրանսիայի գործողությունները որակվում էին որպես «ազբեսիս» և նշվում էր, որ Փարիզը «պատասխանատվություն է կրում մարդկային կորուստների և հասցած նյութական վնասի համար»¹⁴: Սրկորդ

կետում ասվում էր, որ ֆրանսիական զորքերի ներկայությունը Սիբիայում և Լիբանանում խախտում է այդ երկրների սուվերենությունն ու անկախությունը: Խորհրդը միամասնակ պաշտպանում էր ֆրանսիական զորքերի անհապաղ հեռացման վերաբերյալ Սիբիայի և Լիբանանի պահանջը: Որոշման սրկորդ կետի վերջում նշվում էր, որ «Խորհրդը զնուակաևերեն մերժում է այդ երկու հանրապետությունների տարածքում այլ ստորերկրյա ուժերի մնալու պայմանների առերոշության մասին պնդումը» և ավելացվում, որ բերտունական պաշտոնական անձինք հավաստիացրել են, որ երանք մտադիր են նա շաշել իրենց զորամասերն այդ երկու երկրներից¹⁵: Այսպիսով, Արաբական լիգան խնդրին համապատկան մոտեցում էր ցույցարբերում, արծարծում ոչ միայն սովյալ պահին սրություն ստացած ֆրանսիական զորամիավորումների դուրս բերման հարցը, այլ նաև հերքում պատերազմական պարագաների բերումով դեռևս 1941 թ. կեսում գտնվող անգլիական զորամիավորումների տեղում հիմնավորվելու վերաբերյալ պնդումները: Որոշման երրորդ կետը վերաբերում էր հատուկ զորամասերին: Լիգայի խորհրդի համոզմամբ «այդ զորքերը, Իրանց սպառազինությունը, հանդիմավորումը, ուղղամիները և զորանցները պետք է վերադարձվին Սիբիայի և Լիբանանին ու ենթարկվեին նրանց հրամանատարություններին, այդ երկրների կառավարությունների տրամադրության ներքո գրվելու համար»¹⁶: Վերջին, յոթրորդ կետում Լիգայի խորհրդը իր պատրաստակամությունն էր հայտնում անկ ամեն ինչ, որպեսզի «հասնի երկու հանրապետությունների նպատակների իրականացմանը», այն է՝ «պահպանել նրանց անկախությունը և դուրս բերել օտար երկրյա զորամասերը նրանց տարածքից»¹⁷:

Այս որոշման ընդունումից հետո գումարվեց խորհրդի նա երկու նիստ: Հունիսի 11-ի վերջին նիստից հետո հրապարակված հայտարարությունում նշվում էր, որ «Խորհուրդը քննարկեց այն միջոցները, որոնց ձեռնարկվելու են խանգարելու համար ֆրանսիական ազբեսիսն և պաշտպանելու Սիբիայի և Լիբանանի անկախությունն ու ամբողջական սուվերենությունը»¹⁸: Կահիրեի իրազեկի շրջանակներում ենթադրում էին, որ խոսքն այն միջոցների մասին է, որոնք ձեռնարկվե-

լու էին, եթէ Ֆրանսիան հրաժարվեր դուրս բերել իր զորքերը Սփրիայից ու Լիբանանից¹³։

Ֆրանս-լիանոսյան ճիգնամամի նկատմամբ Արաբական լիգայի որդեգրած դիմել միանշանակ չի զնահատվել սովետական պատմաագրության կողմից¹⁴։ Պիր-Ռուզազովան, մանրամասն ներկայացնելով Լիգայի ընդունած որոշման շարադրանքը, լի ճշտորոշել իր վերաբերմունքը զրա նկատմամբ¹⁵։ Կարելի է ասել, որ նա, համեմատյալ զեպա, րացասականորեն չի գնահատում Լիգայի որոշումը Պ. Վ. Միլոզորազովը, խոսելով Արաբական լիգայի առաջին քայլերի, այդ թվում՝ հորհրդի Ֆրանս-լիանոսյան ճիգնամամին նվիրված նրատաշբանի մասին, գրում է, որ գրանքը «հետո էին ստեղծված իրացություն պահանջած կարտի բնույթի ունեւալուց», բայց, այնուամենայնիվ «սազգային-ազատագրական շարժմանն օժանդակող էին»¹⁶։ Վ. Բ. Լուցիկու գրքերում նույնպես տրված է Արաբական լիգայի որոշման տեքստը, սակայն դա կատարված է էական աղճատումներով¹⁷, որի պատճառով էլ Քույլ է տրվել որոշման սխալ գնահատում։ Բանն այն է, որ Վ. Բ. Լուցիկին, անստեղծակ լինելով եքսիբորդ կետի այն հատվածից, որտեղ խոսվում է Լեանտուս՝ զանվող անգլիական զորամիավորումների մասին, պնդում է, որ Արաբական լիգան «շնորհակալություն հայտնեց Անգլիային սփրիական խնդրում նրա դիրքորոշման համար և նույնիսկ անգլիական զորքերի դուրս բերում շահանջեց Լեանտուս արաբներից»¹⁸։ Այնուհետև Վ. Բ. Լուցիկին գրում է, որ Լիգան «պաշտպանեց Չերչիլի առաջարկությունը սփրիա-լիգանանայան խնդիրը երեք տերությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի համատեղ քննարկմանը փոխանցելու մասին, առաջարկություն, որը բոլորովին չէր համապատասխանում Սփրիայի և Լիբանանի շահերին»¹⁹։ Լեանոսյան խնդիրը Սիրիայի ու Լիբանանի մասնակցությամբ վերոհիշյալ երեք պետությունների առջև քննարկման դնելու Լիգայի երաշխավորությունից մասին է խոսում նաև Պ. Վ. Միլոզորազովը²⁰։ Իսկ Յոս. Ն. Շչերբատովը գրում է, որ Լիգան «լուսության մասունց, նրա շինակ արդարացից այդ երկրների անգլիական օկուպացումը»²¹։ Սակայն, ինչպես տեսնում վերևում, Արաբական լիգայի բոլորովին էլ չարգաստանքից, կամ լուսության շատանց չափանիական զբաղմամբ

բունների հարցը, այլ բավականին աներկբայորեն արտահայտվեց դրանց դուրս բերման օգտին, ընդ որում շեշտելով, որ այդ կապակցությամբ համապատասխան հավատարմություններ են ստացվել անգլիական պաշտոնական շրջանակներից։ Իսկ զա հակառակ այն իրողության, որ 1945 թ. հունիսին Ֆրանսիայի զործողությունների հետևանքով ստացվել սուր գրված էր Ֆրանսիական զորամիավորումների դուրս բերման հարցը, իսկ անգլիական ռազմական ներկայության խնդիրը Լեանտուս կարծիք մոտացության էր մատնված։ Իրականությանը չի համապատասխանում նաև Վ. Բ. Լուցիկու և Պ. Վ. Միլոզորազովի այն պնդումը, թե Արաբական լիգան խնդրեց եկավ Լեանտուս-Ֆրանսիական հարցը ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի առջև քննարկման դնելու առաջարկով։ Նման փաստի մենջ չենք հանգույցել Արաբական լիգայի 1945 թ. հունիսյան նստաշրջանի և ոչ մի փաստաթղթում։ Այդուհետ կարեւոր էրևելով կողքով, եթե այն տեղի ունեցած լինեք, դժվար թե լուսության անցնեին Ն. Շ. Շոլհանեիսյանն ու Ն. Ս. Սարգսյանը և է. Պ. Պիր-Ռուզազովան՝ Սիրիայի այդ շրջանի պատմությունը նվիրված իրենց աշխատություններում։ Նման փաստ չի արձանագրել նաև Արաբական լիգայի զործունեությունում ուսումնասիրած որևէ օտար հեղինակ։ Եզրիպացի իրազեկ մասնագետ Բուտրուս Լալին, օրինակ, իր աշխատությունում անգրադառնալով Լեանտուս-Ֆրանսիական հարցում Արաբական լիգայի որդեգրած կեցվածքին, հիշատակում է միայն մեկ հայտնի փաստերը²²։ Այս վրիպման պատճառն ամենայն հավանականություններն այն է, որ Վ. Բ. Լուցիկին և Պ. Վ. Միլոզորազովը, իրենց գրքերից կրեցին գեպերի թարմ հետքերով, հնարավորություն չեն ունեցել ճիշտել իրենց ձեռքի տակ եղած լրագրային տեղեկությունների հավաստությունը։

Անհնար է ճիշտ գնահատական տալ Արաբական լիգայի գիրքորոշմանը՝ առանց հորհրդի նստաշրջանի ընթացքի հետ կապված մի շարք պարագաներ լուսարանելու։ Թեև իսկույն Վ. Բ. Լուցիկու այն փաստը, որ հորհրդի 4-րդ նիստից հետո, կեր հրապարակվեց վերոհիշյալ որոշումը, տեղի է ունեցել հորհրդի երկու նիստ, որոնց ընթացքում որևէ էական նոր որոշում չի կայացվել, հուշում է այն մասին, որ Լիգայի որոշման

զամենը զեռ որոշակի ակնկալները են ունեցել նստաշրջանից: Ամբողջ հարցն այն է, որ, ինչպես նշված է Վ. Բ. Լուցեու մաս և համապատասխան այլ աղբյուրներով ևս, սիրիական պատվիրակությունը, լրավարակելով ընդունված որոշումով, առաջադրում էր Ֆրանսիայի դեմ կիրառել մի շարք պատժամիջոցներ՝ խզել գլխավանդակի և հարմարությունների Փարիզի հետ, արաբական երկրներում զստարեցնել ֆրանսիական հետևորդ սպիտակ ազդեցությունները, արզնել ֆրանսիական զորավարությունը և Սիրիայի ու Լիբանանի հասցված վնասը լրավորել ֆրանսիական ունեցվածքները բնադարավել արաբական երկրներում¹⁹: Այս առաջարկը, սակայն, զլիսավորապես չեղարկվեց ընդդիմություն պատճառով լրեզմանվեց²⁰, և հատկապես նմանօրինակ կենցածքն ամենապատշաճ վաճառականությունը պայմանավորված էր Ֆրանսիայի շնչում: Պետք չէ բացառել նաև, որ Լոնդոնն էլ խստիվ կընդդիմանար Արաբական լիզալի կտրուկ միջոցառումներին, վախենալով, որ այդպիսի որոշումը վատ նախագիտ կ'անդդիսական և հետագայում որևէ այլ խնդրի կապակցությամբ արդեն կարծածովի Անգլիայի դեմ պատժամիջոցներ կիրառելու հարցը: Այսպիսի ենթադրության հավանականությունը կմեծանա, եթև հաշվի առնենք լանետյան խնդրի անուշխամը 1945 թ. մայիսի վերջի ու հունիսի սկզբի անգլո-ֆրանսիական հարաբերությունների մանրամասները: Մայիսի 31-ին, երբ ֆրանս-սիրիական համաձայնությունը հասել էր իր կիրակիտին, անգլիական կառավարությունը հատուկ հուշագրով Ֆրանսիայի պահանջեց անմիջապես զստարեցնել կրակը և զորքերը զորանոցներ վերադարձնել: Երկնելով ուժերի հարաբերակցությունից, Փարիզն ստիպված էր համակերպվել և կատարել Անգլիայի ներկայացրած պահանջները, դադարեցնել կրակը և զորքերը հեռանալ Դամասկոսից ու մի շարք այլ վայրերից²¹: Վերանց տեղը, — շարժանկում է ն. Լուվաննիսյանը, — գրավեցին անգլիական զորքերը, որոնք արդեն մայիսի 31-ի երեկոյան մասն Սիրիայի մայրաքաղաքը²²: Անգլիայի այսպիսի դիրքորոշումը «արդուրն էր նրա այն քաղաքականության, որի նպատակն էր թույլ շտալ Ֆրանսիայի իր դիրքերն ամրապնդել Սիրիայում ու Լիբանանում...»²³: Ինչպես ցույց տրեղվից, այդ ուղղությամբ Լոնդոնը զգալի հաջողություններ ա-

նակարցեց մայիսի վերջին: Ուստի և հունիսի 4-ից 11-ը, Արաբական լիզալի խորհրդի նստաշրջանի օրերին, լանետյան խնդրում անգլո-ֆրանսիական առևակատումը շարունակելու համար օրյկերիվ պատճառներ չկային, և որեմն նրանց համատեղ հանդես գալը միանգամայն հավանական էր: Եվ վերապես, զգվար է հակվել այն մտքին, որ Լոնդոնը զգալի կարծում մեջ գտնվող եզրիտական կառավարությունը պատմամիջոցների դեմ արտահայտվող Փարիզի զորմամբ միայն:

Մեջ խոսք, սիրիական պատվիրակության առաջադիմելիքները անչափ օգտակար կլինեն թե՛ Լանետի երկրների առգլիան-աղաատագրական տյալցարի, թե՛ արաբական նորահանգած կազմակերպության հեղինակությունը բարձրացման համար: Եվ իրավացի է Վ. Բ. Լուցեու այն դիտարկությունը, որ լիզալի դիրքորոշման բացասական կողմն այն էր, որ դրանով չէին նախատեսվում զինուկրետ միջոցառումներ ֆրանսիական ազդեցիկայի դեմ սյուջարելու համար²⁴: Այդպես լինելով հանդերձ, սիմաժանակ հարկ է նշել, որ Արաբական լիզալի որոշումը ընդհանուր առամբ զրական նշանակություն ունեն: Առաջին անգամ լինելով իմպերիալիստական մի երկրի քաղաքականություն միջուկական այդ կազմակերպության միջոցով աներկարալորեն ըննադատվում էր: Երկու է, ոչ կոնկրետ, բայց այնուամենայնիվ արտահայտվում էր արաբական երկրների համերաշխությունը Սիրիայի և Լիբանանի հետ: Առանձուսում օտար զորքերի մնալու ցուցաբերվում էր համապատասխան մտանքում, զրվում էր և՛ ֆրանսիական, և՛ անգլիական զորքերի դուրս բերման հարցը:

Ֆրանսիական իմպերիալիստների զեմ սիրիական և լիբանանյան ժողովուրդների պայքարը վերջիվերջո հաջողությամբ պսակվեց 1945 թ. հուլիսի Ֆրանսիան հայտարարեց հատուկ զորամասերը Սիրիային ու Լիբանանին փոխանցելու մասին: Իսկ 1946 թ. ընթացքում օտարերկրյա բոլոր զորքերը դուրս բերվեցին Լանետից: Այս հաղթանակում իրենց ներդրումն ունեցան 1945 թ. հուլիսի Ֆրանսիան առաջադիմական ուժերը, մանավանդ ՄՍՁՄ-ը, որը թե՛ 1945 թ. մայիսյան իրադարձությունների ժամանակ, թե՛ 1946 թ. փետրվարին ՄԱԿ-ի Անվանադրության խորհրդում Լանետից օտարերկրյա զորքերի դուրս բերման հարցը ըննարկելիս, հանդես եկավ

Սրբիայի և Լիբանանի շահերի պաշտպանությունը: Անտոի ժողովուրդների հաջողությունը նպաստեց նաև արաբական համերաշխության արտահայտումը, որը գրեթե 1945 թ. հունիսյան որոշումում:

• • •

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո Արաբական արևելքում սոր թափվել ծավալված ազգային-ազատագրական շարժման կարևորագույն բաղադրամասերից մեկը եզրիտական ժողովրդի պայքարն էր երկրի անկախության և նրա տարածքից անգլիական զորքերի դուրս բերման համար:

1922 թ. Եգիպտոսը թեպետ «անկախ» պետություն էր հռչակվել, սակայն նրա անկախությունն ուներ ձևական բնույթը²⁵: 1936 թ. անգլո-եգիպտական պայմանագրերը նույնպես սրտ էություն չփոխեց անկախության ձևական բնույթը, բանի որ երկրում շարունակում էին մնալ բրիտանական զորքերը՝ Եգիպտոսում անգլիական տնտեսական և քաղաքական տիրապետության գլխավոր հենարանը²⁶: Եվ պատահական չէր, որ «Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո Եգիպտոսում համաժողովրդական պայքար ծավալվեց Եգիպտոսի տարածքից անգլիական օկուպացիոն զորքերի դուրս բերման և 1936 թ. անգլո-եգիպտական ստորկական պայմանագրի լեզույ աջակցությամբ համարումն համարում²⁷»:

1945 թ. վերջին և 1946 թ. սկզբին Եգիպտոսում համաժողովրդական ելույթներ տեղի ունեցան անգլիական զորքերի անհրապաղ դուրս բերման կարգախոսի ներքո: Իրենց դանդաղամտությամբ առանձնապես աշքի ընկան 1946 թ. փնաբերված 21-ի ցույցերը, որոնց ընթացքում ընդհարումներ տեղի ունեցան ցուցարարների և անգլիական զինվորների միջև: Հենց այս շրջանից սկսված անգլո-եգիպտական կոնֆլիկտին սկսեց անդրադառնալ նաև Արաբական պետությունների լիգան: 1946 թ. մարտի 1-ին հրապարակվեց կիպի գլխավոր քարտուղար Աբդուռահման Ազլամի հայտարարությունը, որում նշվում էր, որ արաբական երկրներն ու արաբ ժողովուրդը կանգնած են Եգիպտոսի կողքին ոչ միայն նրա համար, որ նրանք արաբ են, այլ նաև այն պատճառով, որ

նրանք համոզված են, որ էվակուացիայի (անգլիական զորքերի—Շ. Կ.) վերաբերյալ եզրիտական ժողովրդի ու կառավարության պահանջը արդարովին արդարացի է²⁸: Հայտարարությունում մերկայացվում էր անգլիական քաղաքագետների այն փաստարկը, որ Եգիպտոսում անգլիական զորքերի երկվայությունը իր պայմանավորված է Մերձավոր արևելքի խաղաղությունը պաշտպանելու ձգտումով: Այնուհետև շեշտվում էր, որ սեփական սկսվածությունն ու խաղաղությունը չպետք է իրականացվեն Կահիրեի միջնադարյան միջնաբերդում, Սուեզի ջրանցքում ու արաբական այլ երկրներում ժողովրդի կամքին հակառակ զորամիավորումներ պահելով²⁹: և որ «Հին պաշտօնարարական և իմպերիալիստական դրոշմներ... կործանարար են արաբական և մահմեդական երկրներում Մեծ Բրիտանիայի իրական և կենսական շահերի համար»³⁰:

1946 թ. մարտի 25-ին կիպի խորհուրդը, անդրազանալով անգլո-եգիպտական կոնֆլիկտին, միաձայնորեն որոշեց պաշտպանել Եգիպտոսի պահանջները³¹: կիպի այս քայլերը ցույց էին տալիս, որ արաբական երկրները Եգիպտոսի մզած տյաջարին համաարաբական նշանակություն էին տալիս:

Վախենալով եգիպտական ազգային-ազատագրական շարժման հետագա վերելքից, նաև հաշվի առնելով անգլո-եգիպտական կոնֆլիկտի իր համար սահմանափակումներն Արաբական արևելքում, Անգլիան ստիպված եղավ բանակցություններ վարել Եգիպտոսի հետ: 1946 թ. ապրիլ-մայիսին տեղի ունեցած անգլո-եգիպտական բանակցությունների արդյունքին փոքր, սակայն, անարդյունք ավարտվեց: Նույն թվականի մայիսի վերջին Ինչուսում (Կահիրեի մոտ) տեղի ունեցավ Արաբական լիգայի անգամ երկրների ղեկավարների բարձր մակարդակի հանդիպում, որի ընթացքում, ի շարքում հարցերի, քննարկվեց նաև անգլո-եգիպտական հարաբերություններին խնդիրը: Ինչպես խորհրդածովրդի ավարտից հետո հրապարակված հայտարարությունում արաբական երկրները մի անգամ ևս հաստատեցին Եգիպտոսի պահանջները պաշտպանելու իրենց վճռականությունը: Նրանք միաձայնակ ողջունեցին անգլիական կառավարության խոս-

տումը՝ իր զորքերը Նեղոսի հովտից դուրս բերելու վերաբերյալ³¹։ Ըսենք այն էր, որ Անգլիայի վարչապետ Էթլին 1946 թ. մայիսի 7-ին հայտարարել էր անգլիական զորքերը եգիպտական տարածքից դուրս բերելու իր կառավարության ցանկության մասին, այն պայմանով, որ եգիպտական կառավարությունը հնարավորություն տա արտակարգ պայմանների դեպքում անհասպող վերադարձնել զորքերը դեպի այդ շրջան³²։ Արաբական լիգայի խորհրդի հունիսի 8-ից 13-ը Բլուզատում (Գամասկոսի մոտ) տեղի ունեցած նստաշրջանը հաստատեց Միջազգային բնօրինակ որոշումները։ Միամասնակ խորհուրդը անհանգստություն հայտնեց սահալո-եգիպտական բանակցությունների ընդմիջելու առթիվ³³ և հայտարարեց, որ «եթև լքավարարվել» եգիպտոսի բոլոր պահանջները, ապա անգլո-արաբական բարեկամությունն այլևս չի կարող շարունակվել³⁴։

Ինչպես տեսնում ենք, Միջազգային և Բլուզատում ընդունված որոշումներում Եգիպտոսի պահանջների պաշտպանության հետ մեկտեղ առկա է Լոնդոնի հետ բարեկամական հարաբերությունները պահպանելու ցանկություն։ Այդ պատճառով էլ Բլուզատում հաստատված փաստաթուղթը քննադատվեց սերիական կոմունիստների կողմից՝ Փաստորեն, ինչպես նշում էր կոմկուսի օրգան «Սառոթ աշ Շասար» թերթը, «Արաբական Երկրների լիգան հաշվի չի առնում եգիպտական հանրային կարծիքը, որը դժգոհ է բանակցություններից և պահանջում է եգիպտական հարցը դնել գործադրության խորհրդում»³⁴։ Ճիշտ է նաև թերթի այն պնդումը, որ «Լիգայի հայտարարությունը... շատ կարեոր է նշանակալի կլիներ եթև չուղեկցվեր վերապահումներով...»³⁵։

Արաբական լիգայի դիրքորոշման այսպիսի ավելորդ վեճերությունը շատ բանով պայմանավորված էր նրանով, որ այդ շրջանում Եգիպտոսում իշխանությունը գտնվում էր ծալրահեղ հետադիմական, իմպերիալիստամետ ուժերի ձեռքին։ Նրանց քաղաքական գիծը դժգոհություն էր առաջացնում Լույնիսի բոլորովին էլ ոչ արմատական հայացքներ ունեցող քաղաքական շրջանակներում։ Եգիպտոսի այդ օրերի վարչապետ Իսմայիլ Սիդկիի կառավարության գործունեության տրամաբանական ավարտը եղավ 1946 թ. հոկտեմբերի 25-ին

երա և Անգլիայի արտաքին գործերի մինիստր Բեկին միջև սահալո-եգիպտական հոր պայմանագրի ստորագրումը։ Սակայն այդ պայմանագրի դրույթները այն աստիճան չէին համապատասխանում Եգիպտոսի ազգային շահերին, որ ժողովրդական լայն շահվածների ճնշման ներքո 1946 թ. դեկտեմբերի 9-ին Սիդկիին վերջվերջո ստիպված եղավ հրաժարական տալ։ Սիդկիի կառավարության, ինչպես նաև Սիդկի-Բեկի պայմանագրի տապալման անմիջական պատճառ դարձավ սուղանյան հարցը³⁶։ Այստեղ հարկ է շատ հակիրճ անդրադառնալ սուղանյան խնդրի լուծմանը, քանի որ առանց դրա այդ շրջանի անգլո-եգիպտական հարաբերություններն ուղղակի անհնար է լուծարանել։

Գեա XIX դ. վերջից Սուղանը ձևականորեն գտնվում էր սահալո-եգիպտական միասնական կառավարման ներքո, սակայն իրականում այնտեղ տնօրինում էին անգլիացիները։ Եգիպտական ազգային-ազատագրական շարժումը երկրից անգլիական զորքերի դուրս բերման հարցը դիտում էր «եգիպտոսի հավիտի միասնության», այն է՝ Եգիպտոսը և Սուղանը մեկ պետությունում միավորելու զազափարի հետ անխղճ լիքին կապված։ Ընդ որում սուղանյան ազգային-ազատագրական շարժման ստաշագինական թևը նույնպես սկզբունքորեն հանդես էր գալիս Եգիպտոսի հետ միավորելու ոգովին։ Սիդկի-Բեկի պայմանագրի Սուղանին վերաբերող դրույթը, որում խոսվում էր «և՛ Նեղոսի հովտի միասնության» և՛ ապագայում սուղանյան ժողովրդին ինքնորոշման իրավունք տալու մասին, կողմերից չուրաբանչուրք մեկնաբանում էր չլուրով³⁷։ Սակայն, էրը 1946 թ. դեկտեմբերի 9-ին Անգլիան հայտարարեց «Սուղանը Եգիպտոսից անջատելու որոշման մասին»³⁸, Սիդկիի կառավարության հրաժարական տալուց բացի որևէ այլընտրանք չմնաց։

1947 թ. սկզբին Արաբական լիգան մի քանի անգամ հայտարարություններ արեց սուղանյան խնդրում իր դիրքորոշման վերաբերյալ։ Հունվարի 7 թվականի հայտարարությունում շեղավում էր, որ «Եգիպտոսից անջատվելու պահանջը չի օգնի Սուղանին անկախություն ձեռք բերել»³⁹։ Լիգան կարծում էր նաև, որ «Եգիպտոսից Սուղանի անջատման կողմնակիցները օգնում են իմպերիալիզմին մնալու Սուղանում և դրա համար էլ

լիցան չի կարող արձակել նրանց⁴⁰։ Հունվարի 19-ին հրայրա-
կալված Հայտարարությունում խոսվում էր սուղանյան խնդրի
լուծման եզրկտակական առաջարկների և կիզախի դրանց նկատ-
մամբ ունեցած վերաբերմունքի մասին։ Հայտարարությունում
ասվում էր, որ Եզդիպտոսը զեմ չի սուղանյան ժողովրդին
ինքնորոշման իրավունք տալուն։ Բայց այդ իրավունքը սպասոք
է հիմնիկ պատույթյան և կողմնակի ազդեցության... բացա-
կայություն վրա...⁴¹։ Ենդիպտոսը պատրաստակամությամբ էր
հայտնում համաձայնիչ Սուղանի ապագա օտատուսի վերա-
բերյալ հանրաբլի անցկացման, պայմանով, որ մինչ այդ
սիրականացվի ամբողջական էվակուացիա (անգլիական զոր-
քերի—Ս. Վ.), և ամբողջովին վերանան ճնշում գործադրելու
բոլոր միջոցները, որոնք այժմ զանվում են անգլիացիների
ձեռքին⁴²։ Եզդիպտոսի դիրքորոշումը կատր Է քննահանուր առ-
մամբ դրական համարել։ Փաստորեն առաջարկվում էր սու-
ղանյան հարցի լուծման բախականին ղեկնկրատական նա-
խագիծ։ Սկզբունքորեն ճիշտ էր նաև սուղանյան անշատողա-
կաններին քննադատելը, եթե մանկամանդ հաշվի առնվի, որ
այդ շրջանում անշատողական տրամադրություններով հա-
մակված էին Սուղանի հետադիմական ուժերը։ Սակայն Ար-
արական լիզայի կեցվածքը սուղանյան հարցում ուներ նաև
բացասական երանգ։ Բանն այն էր, որ կիզան ոչ միայն հրա-
տակորեն չէր սահմանազատվում «եզդիպտական թագի հովա-
նո, ներքո» Սուղանի և Եզդիպտոսի միավորման գրույթից, այլ
նաև հանդես էր գալիս դրա պաշտպանությամբ, այդպիսով
համերաշխելով Եզդիպտոսի կառավարության կեցվածքի հետ։
Իսկ այդ գրույթին հետևող եզդիպտական հետադիմական
շրջանները հակադրվում էին նեղոսի հովտի միասնության
կարգախոսը ղեկնկրատական զիբերիցի պաշտպանողներին,
որոնք միասնություն ասելով՝ հասկանում էին առաջին հերթին
եերկու եղբայրական երկրների՝ Եզդիպտոսի և Սուղանի ժողո-
վուրդների միացյալ ճակատ, ուղղված՝ անգլիական իմպերիա-
լիստների դեմ⁴³։

Սուղանյան հարցի լուծման վերևում հիշված պլանը
անգլիացիների կողմից մերժվեց։ Լոնդոնը մտադիր չէր դի-
տումներ անել ո՛չ սուղանյան խնդրում, ո՛չ էլ նեղոսի հովտից
իր զորքերը դուրս բերելու հարցում։ Ծիշտ է, հակասանգլիա-

կան ուժեղ տրամադրությունները զոնն մասնակիորեն թու-
լացնելու նպատակով Լոնդոնը 1946 թ. հուլիս, 1947 թ. մարտ
ամիսների ընթացքում իր զորամիավորումները ևս բանց
Կա՛րինից, Ալբրտանդրիայից և Եզդիպտոսի այլ շրջաններից,
դրանք կենտրոնացնելով Սուղանի ջրանցքի շտամ, բայց դա-
նով անգլո-եզդիպտական կոնֆլիկտի սրությունը բուրբովին էլ
վերականգլ։

Եզդիպտոսի վարչապետի պաշտոնում իմաստիլ Միզիլին
գիտարեման Մահմուդ Նուբարաշին ղեկ 1946 թ. ղեկնկրողներն
Հայտարարեց անգլո-եզդիպտական կոնֆլիկտը ՄԱԿ-ի Անվը-
տանկություն խորհուրդ մտցնելու իր կառավարության մտա-
պրույթյան մասին։ Արարական լիզայի խորհրդի 1947 թ. մտա-
պրույթն անդի ունեցած նստաշրջանում նշվեց, որ անգլո-եզդի-
պտական բանակցությունների անարդյունավետությունն է ստի-
պում Եզդիպտոսին դիմել ՄԱԿ։ Միաժամանակ ետրուրը
պահանջեց Եանգլիական զորքերի ամբողջական և անհպող
էվակուացիա և Եզդիպտական թագի ներքո նեղոսի հովտի
միասնություն⁴⁴։

1947 թ. հուլիսին եզդիպտական կառավարությունը պաշ-
տոնապես դիմեց ՄԱԿ՝ անգլո-եզդիպտական վեճը Անվտանգ-
ություն խորհրդում քննարկելու համար։ Անվտանգության
խորհուրդը օրոտատու և սեպտեմբեր ամիսներին մանրամասն
քննարկեց հարցը, սակայն արևմտյան և նրանց հարող մի
շարք այլ երկրների անդրամեծ կեցվածքի պատճառով հնա-
րավոր չեղավ որևէ որոշում կայացնել։ Միայն Սովետական
Միությունը, Լեհաստանը և Սիրիան էին հետևողականորեն
պաշտպանում անգլիական զորքերի դուրս բերման վերա-
բերյալ Եզդիպտոսի պահանջը։ Անվտանգության խորհուրդի
անորոշ ժամանակով հետամզեց հարցի քննարկումը⁴⁵։ Կիզա-
լի բաղաբական կոմիտեն այդ կապակցությամբ 1947 թ.
սեպտեմբերի 20-ին իր փաստաթան արտահայտելով նշեց,
որ հարցի անարարաբ պահանջի լուծումը կարող է լուծանալ արա-
բական բուրս երկրների անվտանգությունն ու խաղաղու-
թյունը⁴⁶։ Արարական լիզայի խորհրդի հոկտեմբերյան երա-
հանգիստի պաշտպանություն⁴⁷։ Դրանից հետո մտտ երեք
տարի կիզան այլևս չանգրադարձավ անգլո-եզդիպտական

կենթիվերին: Դա բացատրվում է նրանով, որ արդեն 1947 թ. վերջից արարական աշխարհի ուշագոյությունը կենտրոնացած էր Պաղեստինի վրա: Իմպերիալիստական տերությունների շանթերով հրահրված արաբ-իսրայելական պատերազմը առժամանակ երկրորդ պլան մղեց արարական ժողովուրդներին հուզող մյուս բոլոր խնդիրները, այդ թվում և եգիպտոսից անջլիական զորամիավորումների դուրս բերման հարցը: Ավելին, պատերազմում արաբական երկրների անհաջողությունը որոշ ժամանակով սակարակացրեց արաբական երկրներում ժամավոր ազգային-ազատագրական շարժումը: Այդ իրազարմությունները քնականաբար ազդում էին նաև Արաբական լիգայի գործունեության վրա: Միայն 1950 թ. կրգան սկսեց վերաշուտանգնել իր գործունեությունը: 1950 թ. նոյեմբերին ԱՄՆ կատարած իր այցելության ժամանակ զբոսավար բարտուղար Ակզամը հայտարարեց, որ «Մեծ Բրիտանիան, ԷՔԷ չի ցանկանում, որ եգիպտոսը դառնա արյունալի Տուրանների և միջազգային փառախարհի, պարտավոր է իր զորքերը հա քաշել Սուեզի ջրանցքի գոտուց»⁴⁸:

1950 թ. սկզբին եգիպտոսում տեղի ունեցած պառլամենտական ընտրություններում հաջթանակեց Վաֆդ կուսակցությունը, որի առաջնորդ Մուստաֆա Նասհասն էլ հունվարի 12-ից սկսեց զիտավորել երկրի կառավարությունը: Նոր կառավարության առջև դրված կարևորագույն խնդիրը շարունակում էր մնալ օտարերկրյա զորքերի դուրս բերումը: Սահայն Նասհասը երկար ժամանակ փորձում էր խնդրի լուծմանը հասնել անզու-եգիպտական երկկողմանի բանակցությունների միջոցով: Ավելի քան մեկ և կես տարվա ընթացքում տեղի ունեցած տարբեր մակարդակի խորհրդակցություններ, սակայն, նորից համաձայնության չհանգեցրին: Այդ ընթացքում վաֆդական կառավարությունը կորցրեց ժողովրդական զանգվածների վստահությունը: Խախտված հեղինակությունը հնարավոր էր վերականգնել միայն 1936 թ. անզու-եգիպտական պայմանագիրը լեռչալ հայտարարելու միջոցով⁴⁹: 1951 թ. հոկտեմբերի 8-ին Նասհասը հայտարարեց այդ պայմանագիրը լեռչալ համարելու եգիպտոսի կառավարության որոշման մասին: Մեկ օր անց Արաբական լիգայի քաղաքական կոմիտեն հանդես եկավ Նասհասի կառա-

վարության այդ քայլի պաշտպանությունը մեկ անգամ ևս նախատեց իրաջի աջակցությունը եգիպտոսի ազգային պահպանելիքի⁵⁰:

Քաղաքական կոմիտեի այս քայլը կարևոր նշանակություն ուներ Այն ցույց էր տալիս, որ Կահիրեի որոշումը արժանանում է արաբական բոլոր ժողովուրդների հավանությունը: Իսկ վերջիններս համերաշխությունը եգիպտոսի հետ այն կարևոր գործոններից մեկն էր, որը Նասհասի կառավարությանն օգնեց կայունություն դրսևորել և մերժել 1951 թ. օկտեմբերի 13-ի ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի և Քուբիայի կառավարությունների առաջարկը «մերձավորարևելյան հրամանատարություն» ստեղծելու մասին: Այդ առաջարկի ընդունումը փաստորեն կնշանակեր Սուեզի ջրանցքի գոտու անգլիական օկուպացումը փոխարինել իմպերիալիստական երկրների համատեղ օկուպացմամբ: Հոկտեմբերի 15-ին եգիպտական պառլամենտի երկու պալատներն էլ հաստատեցին 1936 թ. անզու-եգիպտական պայմանագիրը լեռչալ կառավարելու մասին օրինագիծը: Լոնդոնը, սակայն, անտեսեց այդ քայլը, իսկ 1951 թ. հոկտեմբերին անգլիական զորամիավորումների դեմ սկսված պարտիզանական պայքարի ձևով, հետզհետե ավելի ու ավելի անց Սուեզի ջրանցքի գոտում գտնվող անգլիական շինվորների թիվը: 1951 թ. դեկտեմբերին Արաբական լիգայի զիտավոր բարտուղար Ակզամը, անդրադառնալով «եգիպտական հայրենասերներին և անգլիական զորամիավորումներին միջև սկսած բախումներին», հայտարարեց, որ զրանք «ենթանշանն են այն ճգնաժամային իրավիճակի, որ կարող է պայթիլ ցանկացած ժամանակ»⁵¹: Իս ավելացրեց, որ «ոչ Սուեզի ջրանցքի գոտին ազատ աշխարհի շահերից ինչևիդ պաշտպանելու պատրվակը, ոչ էլ եգիպտոսը սովետական ագրեսիայից պաշտպանելու շինձու պղծումը չեն կարող կրթել թուլացնել եգիպտական ժողովրդի վճռակառությունը» վերջ ապուլ օտարերկրյա ուժերի կողմից երկրի օկուպացմանը⁵²:

Անզու-եգիպտական կոնֆլիկտի լուծման համար ավելի բարենպաստ պայմաններ ստեղծվեցին եգիպտոսում 1952 թ. Ռուսիայան հեղափոխության հաջթանակից հետո: Իշխանության դուրս եկած հեղափոխական ուժերը մտադիր էին վճռա-

կան միջոցներով հասնել երկրից անզլիական զորքերի հեռացմանը: Ինչպես նշում են Ի. Պ. Բնիչան ու Ե. Մ. Պրիմակովը «Էնկափոխության ղեկավարման խորհուրդն իր առջին դիրքերը զբից Եգիպտոսի տարածքից անզլիական զորքերի դուրս բերմանն հասնել ամենակարճ ժամկետում»⁵⁴: Արդեն 1953 թ. փետրվարին ստորագրվեց Մուզանի վերաբերյալ անույն-եգիպտական համաձայնագիրը, բայց որի նախատեսվում էր երեք տարվա անցումային շրջանի ընթացքում օտարերկրյա զորքերը դուրս բերել Մուզանից, իսկ այնուհետև միջազգային հանդուգության ներքո անցնիլցնել Մամանազիր ժողովի ընտրություններ, որն էլ վերջնականապես կորոշեր Մուզանի ապագա ստատուսը⁵⁵: Իսկ 1953 թ. ապրիլի 27-ին Կահիրեում պաշտոնապես սկսեցին Մուզեի շրանցքի դատաց անզլիական զորքերի դուրս բերումը վերաբերյալ անզլու-եգիպտական բանակցությունները: Մինչ այդ, Եգիպտոսն անհրաժեշտ համարեց մեկ անգամ ևս Արաբական լիգայի միջոցով արաբական երկրների համերաշխությունն ապահովել իր մղած պայքարին: Մեկայն արաբական մի շարք երկրները՝ Սիրիայի, Իրանի և Լիբանանի կառավարությունները, ամենայն հավանակա նությամբ լնդդոնի դրամներ, ամեն ինչ կանցին, որպեսզի բազարական կոմիտեի ապրիլի սկզբների համար նախատեսվող նստաշրջանը հետաձգվի⁵⁶: Մայիսի 9-ին կոմիտեն այնուամենայնիվ անդրադարձավ անզլու-եգիպտական կոնֆլիկտին նրա հրապարակած հայտարարությունում շեղավում էր որ իր երկրի տարածքից օտարերկրյա զորքերի դուրս բերումը պահանջելը «Եգիպտոսի բնական իրավունքն է» և որ Եգիպտական խնդիրը ամբողջ արաբական աշխարհի խնդիրն է⁵⁷: Լիգայի կարծիքով եգիպտական հարցի լուծման ձգձգումը վնասում էր Արաբական արևելքի խաղաղությանն ու կայունությանը⁵⁸: Քաղաքական կոմիտեի այդ հայտարարությունը նույնությամբ հաստատվեց Լիգայի խորհրդի կողմից և մայիսի 11-ին հրատարակվեց որպես հորհրդի որոշում⁵⁹: Արևմտագրերը, որ արաբական անզլումնա վարչա-կարգերը հնարավորություն չունեին բացահայտորեն ընդդիմանալու այդ որոշմանը, բանի որ հակառակ դեպքում կպարսպվեին թե՛ համարաբական, թե՛ իրենց երկրների հանրային կարծիքների կողմից:

1953 թ. դարնանն սկսված անզլու-եգիպտական բանակցությունների առաջին փուլը որոշ ընդմիջումներով շարունակվեց մինչև հոկտեմբերի վերջը: Այդ ընթացքում կողմերը մի շարք հանդուգային հարցերում համաձայնության եկան: Անկայն Մուզեի շրանցքի դատու ուղղմական խորհուրդները պերսականիվացելուց Անզլիային վերադառնվող իրավունքը պահպանելի և անզլիական զորքերի դուրս բերումից հետո խորխոններում մնացող անզլիական տեխնիկական մասնագետների ունենալը իրավունքների հարցերի շուրջ կողմերի միև համաձայնություն չկապանցավ⁶⁰: Իսկ Եգիպտոսի նոր ղեկավարությունը ցանկանում էր բանակցություններն արագ և արդյունավետ ավարտել, ոչ առանց հիմքի կարծիքով, «որ պրոսե» (բանակցություններ—Շ. Կ.) հաջողությունը կնպաստի լայն զանգվածներում նոր իշխանության ժողովրդականացմանը, հետևաբար դրան իր իշխանությունը—Շ. Կ.) հաստատելով նաև քաղաքական կայունություն, որի կարիքը նա այդ աստիճան զգում էր⁶¹: 1954 թ. հունվարի 10-ին, բանակցությունները վերահսկու փորձից առաջ, Եգիպտոսի արտաքին գործերի մինիստր Մամանուջ Ֆավվին անզլու-եգիպտական կոնֆլիկտը նորից ներկայացրեց Արաբական լիգայի խորհրդի նստաշրջանին⁶², հորհուրդը, մտահոգություն հայտնելով օտարերկրյա զորքերի դուրս բերման հարցի ձգձգման կապակցությամբ, մեկ անգամ ևս իր աջակցությունն արտահայտեց Եգիպտոսին: Հետաքրքրական է հուրհրդի հայտարարության երկրորդ մասը, որտեղ արաբական երկրներին կոչ էր արվում «զինավորվել իրենց քաղաքականությունը... և որն էլ օտար երկրի հետ համագործակցություն ու բարեկամություն հաստատել միայն արդարության և արմանապատվության հիման վրա»⁶³: Այսպիսով Արաբական լիգան ցանկանում էր ընդգծել Եգիպտոսի հետնազգական կեցվածքի ճշգրտությունը և այն օրինակելի էր համարում արաբական մյուս երկրների համար:

1954 թ. հուլիսին Անզլիան և Եգիպտոսը նախատորարգեցին անզլիական զորքերի դուրս բերման վերաբերյալ համաձայնագիրը: Իսկ նույն թվականի հոկտեմբերի 19-ին այն ստորագրվեց և այդ օրվանից էլ ուժի մեջ մտավ: Համաձայնագիրը «լուծեց գլխավոր խնդիրը՝ ազատել Եգիպտոսը

ատարերկրյա օկուպացումից⁵³։ Այդ առթիվ կիցայի խորհուրդը շնորհավորեց Եգիպտոսի կառավարությանը⁵⁴։ Անգլո-Եգիպտական կոնֆլիկտի հաճախակի քննարկումները Արաբական լիգայի տարրեր մարտիններում այդ խնդրին ավելցիկ համաարաբական հնչեղություն, նպաստելով դրա շուրջ արաբական մոլոտոփոլերների հանրային կարծիքի կենտրոնացմանը, ինչը վերջիվերջո զգալիորեն նպաստեց Եգիպտոսի մշտ պայքարի հաջող ավարտին։

Անգլո-Եգիպտական վերահիշյալ համաձայնագրի ստորագրումից հետո Եգիպտոսի առջև ծագացան քաղաքական անկախության մարտայնգման, սոցիալ-տնտեսական զարգացման, արտաքին քաղաքականության սկզբունքների փոփոխման և երկրի պաշտպանությունն խոցելի տեղի տեղի վերացնելու հետ կապված մի շարք խնդիրներ։ 1955 թ. առավել սրուվումն ստացավ Եգիպտոսի զինված ուժերը արդիական զինելով ապահովելու հարցը։ Իմպերիալիստական երկրները մերժում էին զենք և զինամթերք վաճառելու Եգիպտոսի խնդրանքները՝ այդ բանը պայմանաւորելով իրենց զլխավորությամբ ռազմաբաղաբական խմբավորումում Կահիրեի մասնակցությամբ։ Այս պայմաններում Եգիպտոսի զնկավա Գամալ Աբդել Նասերի որոշեց զինել սոցիալիստական երկրներին։ 1955 թ. սեպտեմբերին Եգիպտոսի և Չեխոսլովակիայի միջև համադատասխան պայմանագրի կնքվեց։ Եգիպտոսի արտաքին քաղաքականության այդ շըրջադարձը՝ սկսեց գնալով ավելի շատ աջակցություն վայելել Ասիայում և Աֆրիկայում⁵⁵։ Բնականաբար արաբական աշխարհը նույն պես անտարբեր չմնաց դրա նկատմամբ։ 1955 թ. հոկտեմբերի 1-ին Արաբական լիգայի խորհրդի աշնանային նստաշըջանի առաջին իսկ նիստում որոշվեց ողջունել հեռագրի հղել Գամալ Աբդել Նասերին։ Ճիշտ է, հեռագրում ուղղակիորեն չէր խոսվում սոցիալիստական երկրներից զենք զնելու մասին, սակայն հորհուրդը ողջունում էր Եգիպտոսի պաշտպան քաղաքականությունը, որ նպատակամղված օգնությանն էր երկրի արժանապատվությունը և հայտարարում էր այդ քաղաքականության հետ արաբական երկրների համերաշխ լինելու մասին⁵⁶։ Այսպիսով արաբական երկրները պաշտպանում էին Կահիրեի քաղաքականությունը շըջա

տարձր։ Պատահական չէ, որ համաշխարհային մամուլում Արաբական լիգայի այդ հեռագրը իրավացիորեն ընկալվեց որպես արաբական երկրների համերաշխության արտահայտություն զենք զնելու հարցում Եգիպտոսի դրսևորած նախաձեռնության հետ⁵⁷։

Եգիպտոսի քաղաքականությունը գնալով ավելի արժանական էր զանոմն նաև այլ ուղորտներում։ Այդ իրողության գրևերումներեց էր Սուեզի ջրանցքի ընկերության ազգայնացման վերաբերյալ Եգիպտոսի կառավարության 1956 թ. հուլիսի որոշումը։ Արաբական լիգայի քաղաքական կոմիտեն այս առնչությամբ օգոտոտի 17-ին ընդունեց հատուկ բանաձև, որը նույն օրն ենթ հաստատվեց հորհրդի կողմից։ Դրա առաջին կետում արաբական երկրները պաշտպանում էին Սուեզի ջրանցքի ընկերությունն ազգայնացնելու Եգիպտոսի որոշումը, իսկ երկրորդ կետում շնչտում էին, որ իրենք համերաշխ են Եգիպտոսի ձեռնարկած բոլոր միջոցառումների հետ։ Ինչպես Տայտնի է, ջրանցքի ազգայնացումից հետո իմպերիալիստական երկրների ուժեղ ճնշում էին զորժադրում Եգիպտոսի վրա, նպատակ ունենալով չեղյալ հայտարարել տալ Կահիրեի համարձակ որոշումը։ Անգլիան ու Արևմտյան, որոնց պատկանում էր ջրանցքի ընկերության բաժնետոմսերի մեծ մասը, սկսեցին զորամիավորումներ կենտրոնացնել Արևելյան Միջերկրականի շըջանում։ Արաբական լիգայի որոշման երրորդ կետում կոչ էր արվում վերջուտայն ճնշմանն ու պատենալիքների, որոնք ենթարկվում է Եգիպտոսը և հիշեցվում էր, որ ամիջազգային միջնեք պետք է լուծել Միավորված Ազգերի կանոնադրությամբ նախատեսված խաղաղ միջոցներով⁵⁸։

Օգոտոտի 13-ին հորհուրդը հաստատեց Քաղաքական կոմիտեի մի նոր որոշում, որը զարմալ Սուեզի ջրանցքի ազգայնացմանն էր վերաբերում։ Այդ փաստաթղթում արաբական երկրները ողջունում էին Եգիպտոսի պրևիդենտ Նասերի հայտարարությունն այն մասին, որ իր կառավարությունը պատրաստ է ապահովել ազատ նավարկությունը Սուեզի ջրանցքում և համազորժակելի բոլոր այն երկրների հետ, որոնք օգտադորժում են ջրային այդ ուղին։ Որոշման վերջում ընդգծվում էր, որ յորէ արաբական երկրի սուվերե-

նույնպէս զիմ կատարված ստեճգութուն կ'համարվի որպէս արարական բոլոր երկրներէ զիմ գործված աքրեսիան⁵⁰։ Լի- գայի այս քայլերը բարոյապէս օգնում էին եզիպտոսին՝ իր քաղաքական կուրսը հետևողականօրէն շարունակելու և արեւմտայն երկրներէ խաղաղվանքներէն զիմագրավելու զոր ծուռ և միաժամանակ արեւմտայն ստեճութուններէն ստիպում էին իրենց քաղաքականութիւնն իրականացնելիս, նկատի ունենալ նաև արարական աշխարհի հավանական հակադրե- յութիւնը՝ զրա նկատմամբ։

Սուեյցիան Հնդստամի առաջին իսկ օրերից իմպերիալիս- տական երկրները, ուսումնական ցույցեր կատարելու հետ մեկ- տեղ, փորձում էին հարցի իրենց համար դրական լուծմանն հասնել այլ ճանապարհներով ևս։ Առանձնապէս մեծ հուշար էին կապում Սուեիցի ցրանցին օգտագործող երկրներէ Լոն- գոնում 1956 թ. օգոստոսի 16-ից 23-ը դումարված կոնֆե- ռանսի հետ։ Սակայն Սովետական Միութիւնը, որը մասնակե- ցում էր այդ կոնֆերանսին, վիճեցրեց իմպերիալիստական երկրներէ փորձերը՝ կոնֆերանսն օտարագործել Սուեյի ցրանցի- թի վրա օտարերկրյա սիրապետութիւնը վերականգնելու հա- մար⁷⁰։ Արևմտայն երկրները, սկստւմբերհ-հոկտեմբեր ամիս- ներին հրադիւրելով այսպէս կոչված երկրորդ և երրորդ լոնդոնե- ան կոնֆերանսները, հայտարարեցին Սուեիցի ցրանցին օգտա- դործողներէ օտոցիացիայի ստեղծման մասին։ Ինչպէս նշում է սովետական հետազոտող Է. Ի. Մեդվիկովն, այդ օտոցիա- ցիայի ստեղծումը սեպտտակ էր հետապնդում ջրանցքի վե- րահանումը վերադարձելու իմպերիալիստական երկրներին՝ ԱՄՆ-ի գլխավորութիւնմբ⁷¹։ Արարական լիգայի քաղաքա- կան կոմիտեն հոկտեմբերի կեսին նորից անդրադարձավ Սուեզի ցրանցքի ազգայնացման հարցին։ Քաղաքական կո- միտեն որոշման մեջ ստովում էր, որ Վեցիցի ցրանցքի կա- պակցութիւնը ծաղած ներկա Հնդստամը վերաբերում է և քաղաքական բոլոր երկրներին և իրենից ներկայացնում է մի փորձ՝ գրավելու Սուեզը եզիպտոսի և այլ արարական եր- կրներէ զրա զինված ճնշում գործարարելու միջոցով, ինչ- կիտանգի արարական երկրներէ խաղաղութիւնը, ապահո- վութիւնը և սովերենութիւնը⁷²։ Արարական երկրները միաժամանակ պատրաստակամութիւն էին հայտնում կոնֆ-

լիկար լուծել խաղաղ ձևով, բայց այնպէս, որ դա սշահական եզիպտոսի ազգային սովերենութիւնն ու արարների ազգա- լիկ շահերին⁷³։ Այնուհետ որոշում մեջ ցրանցքն օգտա- դործողներէ ասոցիացիայի ստեղծումը սանքեական էր հա- մարվում և դատապարտում էին «Անգլիայի և Ֆրանսիայի սպառնալի մեթոդներն ու քաղաքական, անտեսական և ուղղ- մական ճնշումը, որոնց նրանք զիմում էին իրենց նպատակին լասնելու համար...»⁷⁴։

Տեճեղով, որ սովերական միջոցները լեն օգնում վե- րականգնելու իրենց զիրքերը եզիպտոսում, Անգլիան ու Ֆրանսիան ինքային հետ համատեղ հոկտեմբերի 29–31-ին հարձակում կատարեցին եզիպտոսի զեն։ Հակառակ եզիպ- տացիներէ հերոսական զիմագրութիւնը, անգլո-ֆրանս-իս- րայիական անձնակազմում ավելի լավ զինված բանակներն առաջ էին շարժվում զեպի երկրի խորքերը։ Սակայն Սովե- տական Միութիւնը խիստ նախազգուշացումներէ, ինչպէս նաև ստիպախտական երկրներէ, արարական և դարգացող մյուս պետութիւններէ ձեռնարկած միջոցառումներէ շնորհիվ հնա- րավոր եղավ եռյամբերի 7-ին դադարեցնել ուսումնական զոր- ծագութիւնները։ Սովետական էտապութիւնն այդ օրերին առաջարկեց «ՄԱԿ-ի մյուս անդամներէ հետ ուղղաձօնային և ուղղաձօնային ուժեր օգտագործել պատերազմը եզիպտո- սում դադարեցնելու և արբեհիսն սանձարկելու համար»⁷⁵։ Սուեյցան սրհածախնդրութիւնն անդրադարձած համարյա- րոշոր մասնագետները միարկ են, որ «Սովետական Միութիւնն զիրբորոշում կարծիք, կարելի է ասել վճռական զեր կատա- րեց շեղալի» ազրեհիայի ոչ միայն տապալման, այլ նաև կրա հետանքները համեմատաբար կարճ ժամանակամիջո- ցում վերացնելու գործում»⁷⁶։ Արդեն 1957 թ. մարտին օտար- երկրյա բոլոր զորքերը հեռացել էին եզիպտոսի սարածքերը։

Իսկ ի՞նչ զիրբորոշում ունեցան արարական պետութիւն- ները եռյակ ազրեհիայի նկատմամբ։ Արարական բոլոր եր- կրները դատապարտեցին ազրեհիներին, իսկ նրանց մե- ժամասնութիւնը խզեց զիմազրեհական հարաբերութիւն- ները Անգլիայի և Ֆրանսիայի հետ։ Սիրբայում պայմեցից անգլիական ընկերութիւններին պատկանող նավթամուղը, իսկ Սառոզյան Արարիայում արգելից նավթի մատակարար-

րումբ անդիսական հեղուկանավերին: Եղիպտոսի վրա հարձակվելով, իմպերիալիստները հետապնդում էին ոչ միայն Սուեզի բրանցքն իրենց վերահսկողությունը վերադարձնելու մտադրանք, այլև հույս ունեին տապալել նասերի առաջողի մականվարչակարգը, հարված հասցնել արաբական ամբողջ ազգային-ազատագրական շարժմանը⁷⁷ և վերջին հաշիվով արժատախիլ անել արաբական երկրների համաբաշխությունն ու համադրծակցությունը հակամիջերխախտական կարգախոսների ներքո: Սակայն իմպերիալիստական երկրներն իրենց հաշիվներում սխալվեցին: Արաբական երկրների համագործակցությունն ու համաբաշխությունը ագրեսիայից հետո ավելի ամբապնդվեց: Այսպես, Թաունամյա ընդմիջումից հետո Նոյեմբերի 13—14-ին Բեյրութում գումարված Արաբական լիգայի անդամ երկրների ղեկավարների խորհրդակցությունը, զատապարտելով եռյակ ագրեսիան, պահանջեց անզու-Ֆրանս-իսրայելական զորքերն անհապաղ բերել Եղիպտոսի⁷⁸:

Այստեղ, սակայն, անխուսափելիորեն ծագում է մի հարց: Արաբական լիգայի անդամ պետություններն ինչու՞ ուզեցան օգնություն ցույց չափեցին Եղիպտոսին, մասնավորապես, որ նրանք բոլոր էլ անգամայնում էին լիգայի հովանու ներքո կեցված Համասեղ պաշտպանության պայմանագրին, իսկ սմանք, օրինակ Սիրիան և Սաուդյան Արաբիան, Եղիպտոսի հետ ունեին նաև փոխադարձ օգնության երկկողմանի պայմանագրեր: Առաջին հերթին նշենք, որ արաբական առանձին երկրներ, մասնավորապես Սիրիան և Հորդանանը պատրաստակամություն հայտնեցին մասնակցելու թաղրեսիայի հետ մղմանը, սակայն պրիզիդենտ Նասերը նախընտրեց նրանց չնորբաշել պատերազմի մեջ լայն ստորադիմադրական պատճառներից ելնելով⁷⁹: Բոլոր ղեկավարում չի կարելի արգարացված համարել Ալգայի ուսմական օրգանների անդործության փաստը: Այլ անդործությունը մասամբ պայմանավորված էր նաև Բազդադի պակտի ստեղծումով և դրան կատարմամբ Արաբական լիգայի անդամների դրսևորած վերաբերմունքով: 1950-ական թվականների առաջին կեսին, երբ նոր էր ստորագրվել միջարաբական համատեղ պաշտպանության պայմանագրեր, Արաբական լիգան զործուն միջոցա-

նունակ էր ձևոնարկում դրա զբույծների իրականացման արդյունքում: Սակայն Բազդադի պակտի ստեղծումից (1955 թ.) լիստ արաբական մի բանի երկրներն երկկողմանի կամ եռակողմ պաշտպանական պայմանագրեր կնքեցին և դերադասեցին դրանց միջոցով ապահովել իրենց անվտանգությունը: Դրա արդյունքն եղավ այն, որ Համասեղ պաշտպանության պայմանագրի ըստ էության ոչ վատ պլանավորված մեխանիզմը փաստորեն դադարեց գործելուց, իսկ երկկողմանի և եռակողմ այնչալ պայմանագրերի հիմամբ ստեղծված նոր մարմիններն էլ անսպասարատ դիմադրեցին եռյակ ագրեսիան: Մյուս կողմից հինչ չէր նաև այն, որ Արաբական լիգայի անդամ երկրները, այդ թվում Եղիպտոսը, այնքան էլ ռեալ չզանազանեցրել իրազրության հետագա զարգացման հարավոր տարբերակները, 1956 թ. հուլիսից հետո լեռնարկեցին լիգայի ռազմական մեխանիզմը վերականգնելու փորձեր: Իհարկն միաժամություն կլինի կարծի, որ եռյակ ագրեսիայի զեմ արաբական երկրների ռազմական համատեղ կույրը կարող էր կական ազդեցություն գործել պատերազմական գործողությունների ընթացքի վրա, բայց որ մի կողմում իմպերիալիստական երկու հզոր երկրների՝ Անգլիայի և Ֆրանսիայի ու նրանց դաշնակից Բարսելի միջին ատամները արդիական զենքով զինված բանակներն էին, իսկ մյուսում եղիպտականի հետ պիտի կանգնեին փաստորին զեռ կազմավորման պրոցեսում գտնվող արաբական թույլ զինված բանակները: Եվ սակայն արաբական երկրների մասնակցությունը պատերազմին, բացի տվյալ պահի թարոյա-քաղաքական կարևոր զեռ կատարելուց, բոլոր զեպերում անչափ թուսանելիս կլիներ արևելորենների, մասնավորապես Բարսելի համար: Ինչիցե՞լ, այս բոլորը պետք է չի խանգարի, որպեսզի նշվի սուեզյան ձգնաձգում տարբեր փուլերում Արաբական պետությունների լիգայի ակտիվության կարևորությունը:

Եղիպտոսից օտարերկրյա զորքերի դուրս բերման և երկրի անկախության ամրապնդման ուղղությամբ Արաբական լիգայի 1945—56 թթ. գործունեությունը հակառակ որոշ զեպերում, մասնավորապես 40-ական թվականներին, դրա որոյակի անհետեղականությունը, այնուամենայնիվ զգալիորեն

նպատանց կզիպտական ազգային-ազատագրական շարժման առաջին քայլին:

* * *

1940—50-ական թվականներին արևմտյան երկրների մերձավորարևելյան քաղաքականության հիմնական նպատակները մեկը ռեզիմոնտ իրենց զլխավորությունը սազմաբարձրական ազդեցիվ խմբավորումներ ստեղծելն էր, Այդ թվականներին առաջ քաշվեցին այդպիսի խմբավորումների ստեղծելու մի քանի ծրագրեր:

Դեռ 1942—1945 թթ., երբ արաբական երկրների միջև քանակություններ էին վարժում արաբական երկրների մի միավորում ստեղծելու հարցի շուրջ, անգլիական ղեկավար շրջաններում մտածում էին ստեղծվելիք կազմակերպություններին իրենց ձևերից չլու գործիք գարձանելու և այն իրենց նպատակների իրականացմանը ծառայեցնելու մասին: Սակայն Արաբական լիգայի ծրագրային առաջին փաստաթղթերը Ալեքսանդրիայի արձանագրությունը և Արաբական պետությունների լիգայի պակտը ցույց տվեցին, որ Անգլիայի անկախությունը անհող են: Ընդգնում հատկապես խիստ զրգրո էին այդ փաստաթղթերում Պաղեստինի և գաղութային լծի տակ գտնվող արաբական մյուս երկրների հարցերի արժանաբանաց:

Արաբական լիգայի գործունեությունում նշանավոր առկայական այդ միտումները վերացնելու համար Անգլիան դիմեց գործուն քայլերին: Նախ կիզայի վրա ուժեղ շնչում քաննեցվեց, ձգտելով նոր գործունեությունն առժամանակ սահմանափակել երկրորդական նշանակություն ունեցող հարցերով: Միաժամանակ անդրճորդանայան ղեկավար գործիչները 1945 թ. արևանից սկսեցին հարձակումներ գործել կիզայի վրա, խոսել նոր գործուն ուժ շարժանայու մասին նորից առաջ քաշելով արաբական ալիքի սերտ միություն իրականացման գաղափարը, որի ստեղծման գործում առաջին քայլը կլինեի անդրճորդանայան էմիր Աբդուլազիզի ղեկավարությամբ «Մեծ Սիրիայի» պետության ստեղծումը⁸⁶: Սկսվեց պրոպագանդավել նաև Արաբական լիգան Պարսի ծոցի անգլիական լծի տակ գտնվող արաբական իշխանապետությունների հաշվին ընդարձակելու ծրագրերը⁸⁷, Իսկ

անդունտ իրաքյան գործիչները 1945 թ. սկստներինց սկսեցին հանդես գալ Քուբթիան Արաբական լիգայի կազմում ընդգրկելու առաջարկով⁸⁸: Բաղդադի այս նախաձեռնությունը, քստ «Արևի», «Կհամապատասխան ղեկավարությունը բրիտանական զաշնակցին»⁸⁹, Տարարնույթ, բայց այս կամ այն չափով անալյամներեն կիզային առնչվող այս ծրագրերի իրականացումը զգալիորեն կզտարացներ Մերձավոր արևելքում «Արևելյան բլուզ» անվանումով ազդեաբարական խմբավորման ստեղծումը, որում նախատեսվում էր անգամագրել ոչ միայն Արաբական լիգայի, այլև Սաադաբադի պակարի երկրներին (Իրան, Աֆղանստան և Քուբթա): Այդ ծրագրերը միաժամանակ կոչված էին թուլացնել կիզայի կախիտակերխալիստական պոտենցիալը, մի զնպքում կիզայի անգամ երկրների շարքում վերախմբավորում կատարելու («Մեծ Սիրիայի» ծրագրի⁹⁰), մյուսում՝ կիզան արևմտամետ երկրների հաշվին ընդարձակելու միջոցով: Իսկ «Արևելյան բլուզ» ստեղծումը հետագայում կարող էր հանգեցնել Արաբական լիգայի, որպես անկախ կազմակերպության, տարրալուծմանը այդ խմբավորման շրջանակներում:

Արաբական լիգային, սակայն, միայն «Արևելյան բլուզի» գումարելներինց մեկը լինելու զգրը չէ, որ հատկացված էր Այդ խմբավորման փորձերին անցրագրածած հեղինակների կողմից չի արժանազգրված, որ անգլիական գործիչների արաբական երկրներում այդ ծրագրի ընդունումը հնչտացնելու նպատակով ձգտում էին անալյաման սպառնվել դրա նկատմամբ կիզայի խորհրդի զրական վերաբերմունքը: Ըստ երկրությունի լոնդոնում կաթում էին, որ այս զնպքում գործին կանգնակի նաև կիզայի անգամներ Իրաքի և Անդրճորդանայի դիրքորոշումը: 1945 թ. այնանը, Արաբական լիգայի խորհրդի աշնանային նստաշրջանում իրաքյան պատվիրակության անդամ, նախկին վարդապետ Նուրի Մանդի առաջարկեց քննարկել «Արևելյան բլուզի» ստեղծման հարցը⁹¹, կիզայի խորհրդի նստաշրջանի աշխատանքը լուսարանող զաշտոնական և ոչ մի հազորագրությունում այս մասին ոչ մի բան չնշվեց: կիզան հանդես չեկավ «Արևելյան բլուզի» նախագծի դատապարտում: Սակայն անկազմած է, որ խորհրդի անդամների մեծամասնությունը խուսափողական

մը թուշ կտա նաև ամենակարճ ժամանակահատվածում ստեղծել «Քրեկէլան բլոկ» խմբավորումը:

1946 թ. նոյեմբերի երկրորդ կեսից անդհոճորդանանյան գործիչները պրոպագանդիստական լայն արշավանք ծավալեցին «Մեծ Սիրիայի» ծրագրի օգտին, որը շատ վառ ընկալվեց Դամասկոսում և Բեյրութում⁶⁴: Հարցն այն աստիճան սրվեց, որ քննարկման ատարկա դարձավ Արաբական լիգայում: Այդ առթիվ հրատարակված հայտարարությունում նշվում էր, որ արաբական երկրները նպատակարարված չեն «խախտել Արաբական լիգայի անդամ որևէ երկրի անկախությունն ու սուվերենությունը կամ միջամտել նրա կառավարման ձևի հարցին»: Միաժամանակ մի անգամ ևս հավաստվում էր արաբական պետությունների հավատարիմ լինելը կիզայի պակտին⁶⁵: Այսպիսով, ճիշտ է շատ դիվանագիտորեն, Արաբական լիգան հանդես եկավ «Մեծ Սիրիայի» ծրագրի նկատմամբ: 1946 թ. նոյեմբեր 23 թվակիր այս հարցաբարությունը ստորագրել էր նաև Անդհոճորդանանի արտաքին գործերի մինիստր Մուհամեդ ալ Շուրայքին: Մի քանի օր անց, սակայն, նույն ալ Շուրայքին իր կառավարության անունից մի հուշագիր ներկայացրեց Արաբական լիգայի խորհրդի նախագահին, որում հայտնում էր Անդհոճորդանանի մտադրությունը «Մեծ Սիրիայի» ծրագրի իրականացման փորձերը շարունակելու մասին⁶⁶: Փաստորեն ամբողջ 1947 թ. ընթացքում Ամմանի արաբական քաղաքականության հիմքում շարունակում էր զրված մնալ «Մեծ Սիրիայի» ծրագիրը: 1947 թ. փետրվարին Արաբական լիգայի քարտուղարությունը, ելնելով ընդհանուր շահերից, պահանջեց «զաղորդեցնել այդ հարցի բարձրացումը»⁶⁷: Այնին աչ այդ ծրագրի դատապարտմամբ հանդես եկան սաուդական և ճգիպտական կառավարությունները⁶⁸: Քննարկվում էր նույնիսկ Անդհոճորդանանի լիգայից վտնդելու հարցը⁶⁹: Այս պայմաններում Անդհոճորդանանի էմիր Աբդալլահը հայտարարեց, որ մասնակավորապես հրաժարվում է «Մեծ Սիրիայի» ստեղծման ատաշարից, Պաղեստինի խնդրում արաբական միասնական դիրքորոշում որդեգրելու անհրաժեշտությունից ելնելով: Ինչպես նշում է Լ. Ն. Կուրյովը «այսպիսով, փաստորեն... Աբդալ-

լահի թագի ներքո կեսնախի արաբական երկրները միավորելու ծրագրին վերջ տրվեց»¹⁰⁰:

«Արևելյան բլոկ» և «Մեծ Սիրիա» իմպերիալիստական ծրագրերի ձախողման գործում Արաբական լիգան որոշակի դեր կատարեց: Այդ կազմակերպությունը բացասական դիրքորոշում որդեգրեց երկու նախագծերի նկատմամբ: Ճիշտ է, այն զգուշավոր և պետք նշածից շատ դիվանագիտական երանգներ, բայց այնուամենայնիվ բացասական էր: Արաբական լիգայի շրջանակներում փաստորեն ստեղծվեց այդ ծրագրերի ընդդիմացող արաբական երկրների մի հակատ, որին անդամակցում էին Սիրիան, Լիբանանը, նպիպտոսն ու Սաուդյան Արաբիան և որը, հենկելով արաբական ժողովրդական լայն զանգվածների հակահիմպերիալիստական արամադրությունների վրա, կարողացավ հաջողությամբ պայքարել այդ նախագծերի դեմ:

«Արևելյան բլոկ» և «Մեծ Սիրիա» նախագծերի իրականացման գործում հաջողության չհասնելով, Անգլիան 1947 թ. վերջին և 1948 թ. սկզբին նորից առաջին պլան մղեց «Համասեղ պաշտպանության» պայմանագրերի դադարաբար: Ի մտաբերություն 1946 թ., երբ փորձ արվեց այդպիսի պայմանագրի կնքել միայն նպատակով հետ, այս անգամ խնդր էր դրվում նման պայմանագրեր ունենալ Արաբական արևելքի բոլոր երկրների հետ: Ըստ այդ պայմանագրերի, նախանշվում էր ստեղծել համայնցվող պաշտպանության խորհուրդներ, որոնցում Արևելյանցված էին լինելու անդլական և տեղական սպաներ: Պայմանագիր կնքած յուրաքանչյուր արաբական երկրի բանակը, ուսումնասիրված ու ուղղմաօգյալին խաբսխիններ, հարկահարկցվելուների համալիրներ և արդյունաբերական կարևոր հիմնարկները համատեղ պաշտպանության խորհրդի վերահսկողությանն էին ենթարկվելու: Պատերազմական կամ պատերազմի վտանգի պայմաններում խորհուրդներն իրավունք էին ունենալու անդլական զորքեր հրավիրել: Պատերազմի պայմաններում ուսումնական բոլոր խաբսխինները անդլական ուսղմական հրամանատարությանն էին ենթարկվելու¹⁰¹:

1948 թ. հունվարի 15-ին Պորտուգալում կնքած անգլո-երաբյան և 1948 թ. մարտի 15-ին Ամմանում ստորագրված

անդուստրիա, որդանանչյան պայմանագրերն արդեն համապատասխան դրույթներն էին պարունակում համատեղ պաշտպանության մարմիններն ստեղծելու վերաբերյալ¹⁰²; Սակայն այս պայմանագրի կնքումը նշանավորում էր միայն «Համատեղ պաշտպանության» պայմանագրերի միջոցով իր զինավորույթյամբ Արաբական արևելքում ազդեալ-բազմաբակված խմբավորում ստեղծելու Լոնդոնի քաղաքականության առաջին փուլը: Երկրորդ փուլում ենթադրվում էր կամ համանման պայմանագրեր կնքել կիզայն անդամ մնացած երկրների հետ¹⁰³, կամ էլ Արաբական լիգայի ու Անգլիայի միջև ստորագրել մի պայմանագիր, որը «կփոխարիներ Անգլիայի և Արաբական լիգայի անդամ երկրների Իրաքի, Եգիպտոսի և Անգլոսոդանեսի միջև դրույթուն ունեցող, ինչպես նաև Լիգայի անդամ Մաուլդյան Արաբիայի և Նմենի հետ ապագայում կնքվելիք պայմանագրերին»¹⁰⁴: Անգլիական գործիչները կարծում էին, որ այս անգամ գործի հաջողությունը կհրատարակեր նաև այն բարդ վիճակը, որ իրենց և ամերիկյան իմպերիալիստների վարած քաղաքականության հետևանքով ստեղծվել էր Արաբական արևելքում, Պաղեստինի հարցի ծայրահեղ սրման կարգապահությանը: Լոնդոնի դիտավորությանը, արաբական երկրները, գիտակցելով իրենց վառ զինված լինելը և Պաղեստինում սիոնիստական կազմակերպությունների ծավալապաշտական նկրտումների ռեալությունը, ուղղակի ստիպված կլինեին նման պայմանագիր ստորագրել: Եվ բուրյուվին է պատահական չէ, որ հենց 1948 թ. ապրիլին, արաբ-իսրայելական պատերազմի նախօրյակին, կիրաննի վարչապետ Իխազ Սուլեյ Արաբական լիգայի քաղաքական կոմիտեում բարձրացրեց Արաբական լիգայի անդամ երկրների և Անգլիայի միջև ռազմական պայմանագրեր կնքելու հարցը¹⁰⁵: Սակայն այս անգամ ևս Լոնդոնի հանդիմանք սխալ դուրս եկան: Արաբական լիգայի քաղաքական կոմիտեն ընդառաջ շնչաց անգլիական առաջարկին և այն անարձագանք թողեց: Եսպիտով անգլիական քաղաքականությունը այս անգամ ևս անհաջողություն կրեց:

Պետք է նշել, որ 40-ական թվականներին առաջ քաշված վերստիշյալ ոչ բոլոր ծրագրերն էին հավանության արժանանում արևմտյան բոլոր երկրների կողմից: Օրինակ «Մեծ

Սկիբիայի» ծրագրի նկատմամբ քաղաքական դիրքորոշում անեին ԱՄՆ-ը և Ֆրանսիան¹⁰⁶: Փախիզը դեմ էր նաև Իրաքից քաջի արաբական որևէ երկրի և Սաադարազի պակտի անդամ պետությունների միջև ռազմական պայմանագրի կնքմանը¹⁰⁷:

50-ական թվականներից, սակայն, արևմտյան երկրների հանձնակազմում գտնանալ Դրա վկայությունները էր 1950 թ. մայիսի 25-ի անընդ-Ֆրանս-ամերիկյան հայտարարությունը Մերձավոր արևելքի վերաբերյալ: Այդ փաստաթուղթում երեք անդամներն էլ հայտնում էին արաբական երկրներին և Իսրայելին զենք և զինամթերք մատակարարելու իրենց պատրաստակամության նկատմամբ, պայմանով, որ այդ երկրները դրանք չօգտագործեն միմյանց դեմ: Արևմտյան երկրներն իրենց իրավունք էին վերապահում միջամտել սեպիտի գործերին, ընդ որում, ինչպես շեշտվում էր հայտարարությունում, նույնիսկ «Միավորված ազգերի շղջանակներից» դուրս¹⁰⁸:

1948 թ. արաբ-իսրայելական պատերազմում պարտություն կրելուց հետո արաբական երկրներն իրոք զգում էին զենքի և զինամթերքի պակաս՝ ինչպիսիք էր համար իր ստեղծման օրվանից ծավալապաշտական քաղաքականություն վարող Իսրայելի վտանգը: Սակայն, ինչպես երևում է վերոհիշյալ հայտարարությունից, արևմտյան երկրները քայքայում էին արաբական երկրների կողմից իրենց մատակարարած զենքի օգտագործումը Իսրայելի դեմ: Նրանց մտահոգված էին ոչ թե արաբական երկրների պաշտպանուհականության հարցով, այլ նպատակ ունեին զենքի մատակարարման միջոցով ուժեղացնել մերձավորարևելյան երկրների կայրյալ վիճակը, միաժամանակ ինչպես իրավամբ նշում էին լիբանանյան կոմունիստները, սեպիտը դարձնել «Մովստական Միության դեմ հարձակվելու խաբիսխ... և զինել արաբական հետադիմական վարչակարգերը՝ կանգնեցնելու համար ժողովրդական շարժումները»¹⁰⁹:

1950 թ. հունիսին անընդ-Ֆրանս-ամերիկյան հայտարարությունը քննարկվեց Արաբական լիգայի խորհրդում՝ Լուսիտի 21-ին նրբը երկրների կառավարություններն ու-

գրքիվից կիզայի պատասխանը: 9 կետից բաղկացած այդ փաստաթղթից դժվար է միանշանակ պատկերացում կազմել հույժի հայտարարության նկատմամբ կիզայի դիրքորոշման մասին¹¹⁰: Պատահական չէ, որ այդ փաստաթղթին տրվել են իրարամերձ գնահատյալաներ: Իրոք, Արարական լիզայի պատասխանում չի մերկացվում անդը-ամերիկյան հայտաբարության բուն էությունը, բացահայտորեն չի դատապարտվում արևմտյան երկրների ուղիղին անցողաբաններին միջամտելու գիտախորհուրդները, կարծիք լույսյան ընդունվում է առաջվիճիչ զննչն ու դիմախոսելը Բարչայելի զեմ շօգրազործելու իմպերիալիստների պայմանը: Հենց այսպիսի հատվողական կեցվածքի համար էլ կիզայի պատասխանը լիբանանյան կոմունիստները գնահատել են որպես «կապիտալիստական»¹¹¹: Սովետական հետազոտողներ Բ. Փ. Սեյրանյանը, Օ. Է. Տուզանովան, ինչպես նաև արար պատմաբան Ա. Սաիրը (ըստ Բ. Փ. Սեյրանյանի հղման) գտնում են, որ Արարական լիզան եռյակի հայտարարության նկատմամբ բացասական դիրքորոշում արկազրեց: Նրանք իրենց կարծիքը հիմնավորում են հենվելով կիզայի պատասխանի 5-րդ կետի վրա, որում նշվում էր, որ արարական երկրները «... հավանություն չեն տա որևէ զործողությանը, որ կվնասի իրենց անկախությանն ու սուվերենությանը»¹¹²: Մեր կարծիքով այս հարցում Արարական լիզայի դիրքորոշումը գնահատելիս, եթե նկատի առնվի կիզայի պատասխանը միայն, ապավիճիքը կլինի հակվել զեպի արար կոմունիստների գնահատականը: Սակայն հաջցին այդպիսի մտտեցումը կլինի վերջի, քանի որ Արարական լիզայի պատասխանը միակշարք էր, որ ձեռնորակված միջարարական այդ կազմակերպության կողմից՝ Արարական արևելքում իմպերիալիստական ոտնձգությունների և մասնավորապես եռյակի հայտաբարության զեմ պայքարելու համար: Այս առումով միանգամայն իրավացի են Յու. Վ. Մարունովն ու Յու. Վ. Պաուլովինը, Բ. Ս. Փոցյավերիան և Օ. Է. Տուզանովան, որոնք Արարական լիզայի անդամների կողմից կենթված Համասոց պաշտպանության և տնտեսական համագործակցության պայմանագրերը գիտում են որպես «նեղիտուն ազգամարդարական խմբավորումներ ստեղծելու իմպերիալիստական ծրագրերի

զեմ ուղղված քայլ»¹¹³: Արևմտյան հեղինակ Բ. Մակդոնալդը Արարական լիզային նվիրված իր մենագրությունում այդ պայմանագրին անըրադատալով նշում է, որ այն ստորագրելից մի անպիսի ժամանակ, երբ պայմանները դրա համար բուրբուն էլ բարենպաստ չլինե՛ր նրա կարծիքով անբարենքրպատտ պայմաններից մեկն էլ: արարական որոշ երկրներին վրա արևմտյան տնտեսությունների էլ ալվելի ուժեղացած ներշունչն էր՝ այսպիսի կոչված «տոլիտական վտանգի» զեմ ուղղված «պաշտպանական» խմբավորումում նրանց ընդգրկելու համար¹¹⁴:

Համատեղ պաշտպանության պայմանագրի առաջացման նախամտաբանները, որոնք ցարդ անհրաժեշտ շափով լուսարևակված լինե, մեղ կզգնեն էլ ալվելի հիմնավորելու վերենում ասվածը:

1948 թ. արարա-խորաչեղական պատերազմում արարական երկրների կրած պարտությունը բավականին վատ անըրադարձավ Արարական լիզայի զործունեության վրա: Սակայն 1948 թ. վերջին—1949 թ. առաջին կեսին արարական երկրներում տրվեն իսկ առաջ էին քաշվում նախագծեր, որոնք կոչված էին կիզան զուրա բերել ճգնաժամից՝ նրա անդամների միասնությունն էլ ալվելի ամբապնդելու և օտարերկրյա ազդեցությունը վերացնելու ճանապարհով: Այսպես, օրինակ, 1949 թ. փետրվարին Սիրիան և կիբանան ատաշարներից կիզայի անդամներին արգելել առանց կիզայի համաձայնության օտար երկրի հետ որևէ պայմանագրի կնքելի¹¹⁵: Արևան հակառակ, անդիամետ արարական վարչակարգերը ներկայացրեցին կիզայի բարեփոխման իրենց ծրագրերը: Իրարք վարչակազմում Նուրի Սաիրի նախագծով նախատեսվում էր ալվելի շատ ազատություն տալ անդամ երկրներին, այդ թվում, այլ երկրների հետ կիզայից անկախ առաջական և անտնտրական պայմանագրեր կնքելու ասպարեկը¹¹⁶: Իսկ 1949 թ. օգոստոսին Հորդանանի թագավոր Արզալահը հանդես եկավ «Մասնակցական լիզա» ստեղծելու առաջարկով, որին կանգամակցեին Իրանն ու Պակիստանը և որը «կազակցեի Արարական երկրների լիզային»¹¹⁷: Արարական լիզայի խորհրդի 1949 թ. հոկտեմբերի նստաշրջանը, լինարկելով կիզայի բարեփոխման բազմաթիվ առաջարկե-

բը, վերջիվերջը նախապատվութունը տվեց արարական միասնական անվտանգության պայմանագրի կնքելու եզրիպատասի զազափարին: Որոշվեց կազմել մի հանձնախումբ, որը մշակելու էր պայմանագրի տեքստը¹¹⁸:

1950 թ. ապրիլին կիզայի խորհուրդը հաստատեց այդ պայմանագիրը, որում լիբանանյան կառավարության անաշարիով տեղ հատկացվեց նաև միջարարական տնտեսական համագործակցությանը: Պայմանագիրը կողմն էր ուժեղացնելու արարական երկրների համագործակցությունը ռազմական և տնտեսական հարցերում: Նախատեսվում էր կիզայի շրջանակներում ստեղծել մի շարք նոր մարմիններ, որոնք լայն իրավասություններ էին ունենալու պաշտպանական և տնտեսական ասպարեզներում: Պայմանագիրը կրում էր զուտ արարական բնույթ և կողմն էր ծառայելու միայն արարական երկրների պաշտպանությանը: Անգլիան բացասական վերաբերմունք դրսևորեց պայմանագրի նկատմամբ, մինչև ԱՄՆ-ը սկզբից եկեֆակտիվորեն աջակցում էր այն ստորագրելու զազափարին, նրանում տեսնելով իր գլխավորությանը ասպարեզում ստեղծվելիք ռազմական խմբավորման սաղմը¹¹⁹: Անգլիայի զորմամբ Իրաքն ու Անգլո-որդանանը հրամարվեցին պայմանագրին ստորագրելուց, պահանջելով այն որոշ փոփոխությունների ենթարկել: կիզայի անդամ լոթ երկրներից կրկուսի ձեռնպահումը բնականաբար զգալորեն կիրառեցին պայմանագրի արդյունավետությունը և սկզբում կիզայի անդամներ կարծես թե հակված չէին ատանց Իրաքի և Անգլո-որդանանի, մի տեսակ անջատ, ստորագրել այն: Մայիսյն 1950 թ. հունիսի 17-ին, այն նույն օրը, երբ կիզայի խորհուրդը հաստատեց եռյակ հայտարարության պատասխանը¹²⁰, Եգիպտոսը, Սիրիան, կիբանանը, Սաուդյան Արաբիան և Նմենը ստորագրեցին «Համատեղ պաշտպանության և տնտեսական համագործակցության» պայմանագիրը: Փաստորեն այդ օրայր կարելի է համարել եռյակ հայտարարությանը տրված Արարական լիզայի պատասխանի 10-րդ կետը, որը սակայն, միաձայնորեն չէր հաստատվել կիզայի անդամների կողմից: Եռյակ հայտարարությունը տվեց հակառակ արդյունք:

Մի շարք հեղինակներ իրավացիորեն գտնում են, որ «Համատեղ պաշտպանության» պայմանագրի կնքումը ուղղված էր նաև Իրաքի և Անգլո-որդանանի դեմն լրիվ յմարած ծավալապաշտական ներքուտների դեմ¹²¹: Սակայն հարց է առաջանում, թե ինչու էր Արարական լիզայի պատասխանը նյութամենայնիվ հաշտվողական: Մեր կարծիքով այդ բանի հիմնական պատճառներից մեկն այն էր, որ եռյակ հայտարարության համահեղինակներից մեկը ԱՄՆ-ն էր: Այդ ժամանակաշրջանում ամերիկյան դիվանագիտությունը, միտնելով լոնդոնի և Փարիզի սզղեցությունն Արարական արևելքում փոխարինել ամերիկյանով, հաճախ զադոնորեն աջակցում էր արարական այս կամ այն երկրի՝ անգլո-ֆրանսիական իմպերիալիստների դեմ մղվող նրա պաշարում: Այսպես, օրինակ, Վաշինգտոնը զգաղնորեն խրախուսում էր եգիպտական կառավարության պահանջը եգիպտոսից անգլիական զորքերի դուրս բերման վերաբերյալ¹²²: Այս բոլորը արարական երկրներում թյուր պատկերացումներ էր ստացրել ԱՄՆ-ի քաղաքական ղեկի վերաբերյալ: Եվ Արարական լիզայի փաստաթղթում էլնի անգլիական և ֆրանսիական իմպերիալիստները շատ հաճախ ամենասուր ձևով քննադատվում էին, ապա ԱՄՆ-ը որպես կանոն խնայվում և շրջանցվում էր: Վաշինգտոնի հետ բարվոր հարաբերությունները շփաշցեցելու կիզայի անհետանկարային և սխալ միտումով էլ մասամբ պայմանավորված էր կիզայի պատասխանի նման բնույթը: Բացի այդ հավանաբար նշանակություն ունեեր նաև ամեն գնով միասնական ձևով հանդես գալու կիզայի ձգտումը: Ավելի խիտա պատասխանի ընդունումն անպայմանորեն կհանդիպեր Իրաքի և Երզրանանի ընդգիտությունները, որը կզգվարացներ միասնական դիրքորոշման որդեգրումը: Սակայն կրկնության գնով պետք է նշել, որ կիզայի պատասխանով էլ, միայն, որ պետք է դատել արարական միջպետական կազմակերպության վերաբերմունքի մասին: Վերջին հաշվով Համատեղ պաշտպանության պայմանագրի կնքումով կիզան ցույց տվեց իր ընդդիմությունն արարական երկրներն իմպերիալիստական ռազմաքաղաքական խմբավորումներում ընգրկելուն:

Ինչպես 1940-ական, այնպես էլ 1950-ական թվականներին Մերձավոր արևելքում ռազմաքաղաքական խմբավորումների ստեղծման հարցում անշաղի շահադրժու դիրքորոշում էր գրահորում Թուրքիան՝ Իմպերիալիստական ծրագրերի իրականացման գործում Անհարան հաճախ կատարում էր յուրատեսակ միջնորդի դերը 1950 թ. մարտին, երբ ստորագրվեց իտալա-թուրքական պայմանագիրը, թուրքական շրջանները սկսեցին պրոպագանդի արարական երկրներին այդ պայմանագրին միանում զաղափար¹²³։ Իսկ 1951 թ. Հոկտեմբերի 13-ին թուրքական կառավարությունը ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի հետ միասին պաշտոնապես դիմեց Արաբական լիգայի անդամ երկրներին և Իսրայելին «Միջին-արևելյան հրամանատարություն» անվամբ հայտնի ազգամտքազբազան խմբավորումն ստեղծելու առաջարկով։ Նախատեսվում էր, որ մերձավորարևելյան երկրների հետ մեկտեղ այդ խմբավորման անդամներ կդառնան Ալյուսարլիան, Նոր Չեչենդիան և Հարավ-Աֆրիկյան Միությունը։ Ընթացվում էր նաև սերտ կապ հաստատել «Միջինարևելյան հրամանատարություն» և ՆԱՏՕ-ի միջև Բացի այդ «Միջինարևելյան հրամանատարության» զորքերի անվան սակ ամերիկյան, անգլիական, ֆրանսիական և թուրքական զորամիավորումներ էին տեղադրվելու Արաբական արևելքի կարևոր շրջաններում։ Իմպերիալիստական այս զործարքի իրականացումը, ինչպես նշվում էր Եգիպտոսի, Միլիտարի, Լիբանոնի, Իրաքի, Սաուդյան Արաբիայի, Նմենի և Իսրայելի կառավարություններին հղված սովետական կառավարության հուշագրում «Եկհանգեցնել Մերձավոր և Միջին արևելքի երկրների ռազմական օկուպացմանը Առյուծախյան բլուրի կազմակերպվել երկրներին զորքերի կողմից...»¹²⁴։ Արևմտյան երկրները «այդ հրամանատարության ստեղծման անհրաժեշտությունը... փորձում էին հիմնավորել արանով, որ իբր Մերձավոր և Միջին արևելքի երկրներին պահանջում էր Մովետական Միությունը»¹²⁵։ Սակայն իրականում ռազմաքաղաքական այդ խմբավորումը կոչված էր ճնշել ռեգիոնի ազգային-ազատագրական շարժումը և դառնալ ՍՍՀՄ-ի դեմ ուղղված ռազմական կարեվոր խարխուխ¹²⁶։

Քառյակ հայտարարությունը երևան եկավ մի անպիսի մտամեակ, երբ ժայռահեղորեն սրվել էին անգլո-եգիպտական հարաբերությունները։ Եգիպտական կառավարությունն արդեն հրապարակախոսորեն հայտնել էր 1936 թ. անգլո-եգիպտական անիրավահավասար պայմանագիրը չեղյալ հայտարարելու իր մտադրության մասին։ «Միջինարևելյան հրամանատարության» վերաբերյալ իրենց առաջարկով իմպերիալիստական երկրները փաստորեն նպատակ ունեին նաև դիմեցնել եգիպտական կառավարության այդ միջոցառումը։ Դրա համար էլ ռազմական այդ խմբավորումն ստեղծելու առաջարկը, ինչպես նաև դրանից առաջ և հետո եղած մի շարք այլ առաջարկներ, Արաբական լիգայի կողմից դիտվում էին արաբական երկրների հուշող այլ հարցերի, մասնավորապես Եգիպտական անպիսիքի անդրերից զուրս բերման խնդրի հետ կապակցված։ Այս երկու խնդիրները իրարից լինել քաժանում նաև արևմտյան երկրները։ Պատահական չէ, որ անգլիական կառավարությունը խոստանում էր Եգիպտոսից զուրս բերել իր զորքերը (բացի այն զորամասերից, որոնք պիտի անցնեին միջինարևելյան հրամանատարության ներքո), եթե Կահիրեն ընդուներ յուր երկրների առաջարկը¹²⁷։ 1951 թ. Հոկտեմբերի 14-ին եգիպտական կառավարությունը մերժեց իմպերիալիստական ծրագիրը, իսկ պաշտամետի կրկու պաշտանները միաձայնորեն որոշեցին չեղյալ հայտարարել անգլո-եգիպտական պայմանագիրը։ Մինչ այդ, Հոկտեմբերի 9-ին, Արաբական լիգայի քաղաքական կոմիտեի հանդես էր եկել Եգիպտոսի մտադրության պաշտպանությանը¹²⁸։ Միաժամանակ Լիգայի խորհուրդը որոշել էր արևմտյան երկրների հետ միասին չմտնանլցել որևէ ռազմական խմբավորումում, քանի որ նրանք քաղաքացիական արաբական երկրների իրավացի պահանջները։ Իսկ Հոկտեմբերի 14-ից հետո Լիգայի անդամ երկրները հանդես եկան Եգիպտոսի պաշտպանությանը։ Այս պայմաններում Լիգայի քաղաքական հայտարարության կապակցությամբ հաստատվեց հայտարարությամբ հանդես չեկավ, քանի որ արաբական երկրների կարծիքով դրա կարիքը չկար¹²⁹։ Արաբական լիգայի գլխավոր քարտուղար Ալզամը հայտարարեց, որ արաբական երկրների հանդեպ սովետական սպանալիքի մասին

խոսակցությունները ոչ մի հիմք չունեն: Նա ավելացրեց, որ «Ռուսները երբեք մեզ չեն սպառնացել և չեն ստորացրել», իսկ նեգիլատսի նկատմամբ «խեղձական ազդեցությունները անդիս-ցիկներ են»¹³⁰:

Տեսնելով, որ «Միջինարևելյան հրամանատարություն» ստեղծելու փորձերը հաջողություն չեն ունենում, արևմտյան երկրները նորից տառը քաշեցին Քուրդիան Արաբական լիզայի հովանու ներքո կնքված համաժող պաշտպանության պայմանագրի անգամ դարձնելու զառափարք: Այսպիսի առաջարկով մտադրություն ուներ հանդես գալ իրաջյան կառավարությունը: Հատկանշական է նաև, որ միաժամանակ ենթադրվում էր համատեղ պաշտպանության պայմանագրի անգամությունից զրկել մենեջին: Ստորագյան Արաբիային, Սիրիային ու Լիբանանին, քանի որ նրանք, իրը, ռազմական տեսանկյունից չեն կարող արդյունավետ օգնություն ցուցաբերել¹³¹, իրականում այս ծրագիրը նպատակաձգված էր նեգիլատսի գրկել Լիզայի շրջանակներում իր մշտական դաշնակիցներից, մեկուսացնել նրան և համատեղ պաշտպանության պայմանագիրը դարձնել արևմտամետ ռազմա-քաղաքական մի խմբավորման հիմք, որում ղվխավորող դեր կկատարեին Քուրդիան, Իրաքը և Անգլոհոլանդացիները: Այս ծրագիրը, սակայն, այն աստիճան էր հակասում Լիզայի սկզբունքներին, որ վերջվերջոս Իրաքը չհամարձակվեց նույնիսկ այն պաշտպանագին քննարկման ղնել:

1952—1953 թթ. Արաբական լիզան մի քանի անգամ նորից անդրադարձավ ռազմաքաղաքական խմբավորումներ ստեղծելու հարցին: ԱՄՆ-ի պետական քարտուղար Դալլեսի Մերձավոր արևելք կատարած այցելության նախօրեին 1953 թ. ապրիլին, Լիբանանի արտաքին գործերի մինիստրությունը Արաբական լիզայի անդամների անունից մի հուշագիր հղեց նրան: Դրանում նշվում էր, որ Սուեյի ջրանցքից անվերական զորքերի դուրս բերումից և պաղեստինյան խնդրի լուծումից առաջ արաբական երկրներն ավելորդ են համարում Մերձավոր արևելքի պաշտպանության վերաբերյալ որևէ րանակցություն վարել արևմտյան երկրների հետ: Հուշագրում ասված էր նաև, որ «արաբական երկրները Միջին արևելքի պաշտպանության համար չեն զգում արևմտյան տրտու-

թյունների կարիքը»¹³²: Այդ շրջանում, մասնավոր 1953 թ., Արաբական լիզայի կողմից մի շարք միջոցառումներ ձեռնարկվեցին համատեղ պաշտպանության պայմանագրի դրույթների արագ և արդյունավետ կենսագործման ուղղությամբ:

Իմպերիալիստական երկրները, սակայն, շարունակում էին քանր ու եռանդ լինալի նպատակին հասնելու համար: Մերձավոր և Միջին արևելքում արևմտամետ ռազմաքաղաքական խմբավորման ստեղծումն արագացնելու նպատակով 1954 թ. ապրիլին կնքվեց Քուրդ-պակիստանյան համաձայնագիրը «Երաբելիամության և համագործակցության» վերաբերյալ: Քուրդ-պակիստանյան համաձայնագիրը և զրան արաբական որոշ պետություններ միանալու լուրջ բացասական արձագանքներ արաչացրեց արաբական երկրներում: Լիզայի քաղաքական կոմիտեի նույն օրերին տեղի ունեցող նստաշրջանում անդամ երկրները հավաստիացրեցին, որ երկրը հրավեր չեն ստացել միանալու այդ պայմանագրին և որ «իրենք չեն կլ մտածում զրան միանալու մասին»: Քաղաքական կոմիտեն նշեց, որ արաբական երկրները ցանկանում են ամրապնդել իրենց պաշտպանունակությունը, հետևաբար և կարիք ունեն համապատասխան զենքի, սակայն նրանք չեն համաձայնի զենքն ստանալ ի վնաս իրենց երկրների անկախության և սովեթերությունյան, ինչպես նաև համատեղ պաշտպանության պայմանագրի դրույթների խախտման միջոցով...»¹³³:

Սակայն 1954 թ. երկրորդ կեսին պարզ դարձավ, որ Իրաքը պատրաստ է անդամագրվել իմպերիալիստական ռազմաքաղաքական խմբավորման: 1955 թ. փետրվարին Քաղաքում ստորագրվեց իրաք-Ֆուլբրական ռազմական պայմանագիրը, որը և դարձավ Բաղդադի պակտ անունն ստացած ռազմական խմբավորման հիմքը: 1954 թ. երկրորդ կեսի և 1955 թ. սկզբի իրադարձությունները, այդ թվում նաև Լիզայի դիբրդույմը գրանց նկատմամբ, բավականին մանրամասն լուսաբանված են սովետական հետազոտողների աշխատություններում¹³⁴: Ուստի և բավարարվում ենք ներկյով, որ իմպերիալիստական խմբավորմանը Իրաքի մասնակցությունը ի չիք դարձնելու ուղղությամբ Լիզայի կողմից

ձևերակրված քաղերի անբարդունակմտ եղան: Ավինի, արարական որոշ երկրների տատանողական կեցվածքը պատճառ դարձավ, որ լիգան սկզբնական շրջանում նույնիսկ շվարտագաղթ պաշտոնապես գտաուպարտել Իրաքի քաղը: Սակայն կրպի մնացել անդամները, Արարական արեկերում որտաօրե հողացող հակամայերալիտական արամագրոթյունների ներգործությամբ, վերջիվերջ հասակորեն գեմարտահայտվեցին Բաղդադի պակտին և Իրաքից հեռու արարական մի երկրորդ երկիր այլ իմբավորման մեջ ներդրովելու արևմտյան տերութունների փորձերը ձախողվեցին:

